


ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ
ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԳՆԵՐԻ ԽՈՒՄՔ

2021 ԹՎԱԿԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԵԿԱՆ



Բաց Հասարակության
Գիմնադրամներ
Հայաստան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՐԵՆԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԱՏԱՐԱՆԵՐՈՒ
ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ՀԱՍԱՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԳՆԵՐԻ ԽՈՒՄՔ

**ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՈՒՄԲ**



**ՀՀ արդարադատության նախարարության
քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական
վերահսկողությունն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2021
թվականի գործունեության**

**Հաշվետվություն
/տարեկան/**



Հայաստան 2022

2021 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում մշտադիտարկում են իրականացրել՝ **Չարուհի Յովհաննիսյանը, Արայիկ Չալյանը, Հասմիկ Հարությունյանը, Արման Սահակյանը, Օֆելյա Չալյանը, Արշակ Գասպարյանը, Արա Ղարազյոզյանը, Լուիզա Վարդանյանը, Նարե Յովհաննիսյանը, Հայկ Հակոբյանը, Շուշան Խնկոյանը:**

Չեկույցի հեղինակներ՝ **Չարուհի Յովհաննիսյան, Հասմիկ Հարությունյան, Ռոբերտ Ռևազյան, Օֆելյա Չալյան, Արայիկ Չալյան, Արման Սահակյան, Շուշան Խնկոյան, Նարե Յովհաննիսյան, Լուիզա Վարդանյան:**

Խմբագիր՝ **Չարուհի Յովհաննիսյան**
Սրբագրիչ՝ **Լյուսյա Առաքելյան**

Սույն հաշվետվությունում տեղ գտած տեսակետների և վերլուծությունների հեղինակը ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբն է, և նյութի բովանդակության համար պատասխանատու է միայն Դիտորդների խումբը: Դրանք արտահայտում են հեղինակների կարծիքը և հաստատված չեն Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի (ԲՀՀ Հայաստան) կամ խորհրդի կողմից, հետևաբար չեն ներկայացնում ԲՀՀ-Հայաստանի դիրքորոշումներն ու տեսակետները: Սույն հաշվետվության բովանդակությունը կարող է չհամընկնել ԲՀՀ-Հայաստանի տեսակետներին:

Սույն հաշվետվության թողարկումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ- Հայաստանի ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ «Իրավունք և քրեական արդարադատություն» ծրագրի շրջանակում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ	5
ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	6
ԱՍՓՈՓՈՒՄ	8
1. ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՔՐԵՍԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ	10
1.1. Թժշկական զննության և մարմնական վնասվածքների արձանագրման թերացումներ	10
1.2. Պահման պայմաններ	17
Առաջարկություններ.....	21
2. ՔՈՎԻԴ-19-Ի ԻՐԱՎԻՃԱԿԸ ՔՐԵՍԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ	22
2.1. Քովիդ-19-ի համաճարակի զարգացման մոդելավորումը և կանխատեսումը քրեակատարողական հիմնարկներում	22
2.2. Խմբի դիտարկումները Քովիդ-19-ի հետ կապված	24
3. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԳԵՐԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ	29
3.1. Խտրականությունից զերծ լինելու իրավունքը և պետության պարտավորությունները	29
3.2. ՈՔՏ (զեյ, բիսեքսուալ, տրանս) անձանց իրավունքները ՔԿԳ-ներում	32
ՈՔՏ անձանց խցային պայմանները	34
Առաջարկում ենք.....	37
3.3. ՄԻՎՎ/ՉԻՎԳ ունեցող անձանց իրավունքները ՔԿԳ-ներում	37
Առաջարկում ենք.....	39
3.4. Օտարերկրյա ազատազրկված անձանց իրավունքները ՔԿԳ-ներում	39
Առաջարկում ենք.....	40
3.5. Կանանց և անչափահասների իրավունքները «Վրոլյան» ՔԿԳ-ում.....	41
Պահման պայմաններ, պատշաճ կացարան.....	41
Գոյի կամ իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող կանայք	45
Կապն արտաքին աշխարհի հետ	49
«Վրոլյան» ՔԿԳ-ում գտնվող օտարերկրյա քաղաքացիություն ունեցող կանանց խնդիրները.....	51
4. ԱԶՏԱԶՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՐԵՍԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ	54
5. ՔՐԵՍԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ	59

6. ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄՆ ՈՒ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ	70
7.ՂԱՏԱԽԱԶԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ՀԱՐՑԵՐԸ	76
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2021Թ	84
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ	93
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ	93
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	94
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .	94
1. ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՄՔԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԳԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ	94
2. ՔՈՎԻԴ 19-Ի ԻՐԱՎԻՃԱԿԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԳԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ	102
3. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԶԵՐԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ	102
4. ՕՏԱՐԵԿԿՐՅԱ ԱԶԱՏԱԳՐԿԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԳԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ	107
5. ԿԱՆԱՆՑ ԵՎ ԱՆՁԱՓԱԳԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ «ԱԲՈՎՅԱԼ» ԳԻՄՆԱՐԿՈՒՄ	108
6. ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ԿԱՊՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՐԴԻ ԳԵՏ.....	110
7. ԱԶԱՏԱԳՐԿԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԳԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ.....	112
8. ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԳԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄՆ ՈՒ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ	115
9. ԴԱՏԱԽԱԶԱԿԱՆ ԳՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԱԳԱՐՈՒՅՑ ԳԱՐՑԵՐԸ	118
ԱՄՓՈՓՈՒՄ	119
ՀՀ ԱՆ «ԱԲՈՎՅԱՆ» ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՇԻՆՎԵՐԱՆՈՐՈՎԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ	120

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՅԿ Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

ԲՅՅ-Յայաստան Բաց հասարակության հիմնադրամներ – Յայաստան

ԴՅ Դատապարտյալների հիվանդանոց

ԵԽ Եվրոպայի խորհուրդ

ԹՆՕ Թմրամիջոցների ներերակային օգտագործող

ԼԳՔՏԻ Լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր, ինտերսեքս

ԽԿԿ Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտե (խոշտանգումների կանխարգելման կոմիտե)

ԽՈՒՄԲ/ Դիտորդների խումբ Յայաստանի Յանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ

ՅՅ Յայաստանի Յանրապետություն

ՅՅ ԱՆ ՅՅ արդարադատության նախարարություն

ՅՅ ԱՆ ԶԿԿ ՅՅ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչություն

ՁԻԱՅ Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ

ՁՊԿ Ձերբակալված անձանց պահելու վայր

ՄԱԿ Միավորված ազգերի կազմակերպություն

ՄԻԱԿ Մարդու իմունային անբավարարության վիրուս

ՄԻԵԴ Մարդու իրավունքների եվրոպական դատարան

ԶԿՅ Զրեակատարողական հիմնարկ

ԶԿՕ Զրեակատարողական օրենսգիրք

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվության մեջ ներկայացվում են Հայաստանի Հանրապետության (ՀՀ) արդարադատության նախարարության (ԱՆ) քրեակատարողական հիմնարկներում (ԲԿՀ) և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի (ԽՈՒԹԲ) մշտադիտարկման արդյունքները:

Հաշվետվությունում 2021 թվականի ընթացքում ԲՀԿ-ներում արձանագրված փաստերը ներկայացված և վերլուծված են ներպետական իրավական նորմերի, միջազգային չափանիշների և ՀՀ միջազգային պարտավորությունների համատեքստում:

Հաշվետվությունում ամփոփ ներկայացված են դիտարկման արդյունքները, առանձին առանձին նկարագրված են առավել տարածված խնդիրները, խնդիրը կարգավորելուն միտված ԽՈՒԹԲի ձեռնարկած գործողությունները, դրանց վերաբերյալ ՀՀ պատկան մարմիններին ԽՈՒԹԲի կողմից ուղարկված գրությունները և այդ մարմինների պատասխանները, ինչպես նաև ԽՈՒԹԲի գնահատականները: Իրավիճակն ավելի տեսանելի դարձնելու նպատակով որոշ թվային տվյալներ ներկայացված են գրաֆիկներով և աղյուսակներով: Քրեակատարողական հիմնարկներում արձանագրված իրավիճակն առավել հստակ պատկերացնելու համար ԽՈՒԹԲի դիտարկումները և գնահատականներն ուղեկցվում են ԽՈՒԹԲի կողմից պլանային այցերի ժամանակ կատարած լուսանկարներով:

Հաշվետվության մեջ ներառված տեղեկությունները հավաքագրվել են ԽՈՒԹԲի կողմից ԲԿՀ-ներ կատարած այցելությունների, ազատությունից զրկված անձանցից ստացված ահազանգերի, նրանց հետ ունեցած առանձնազրույցների, հարցազրույցների, ԲԿՀ աշխատակիցների հետ զրույցների, ԲԿՀ գրանցամատյանների ուսումնասիրությունների հիման վրա: Հաշվետվության համար տեղեկատվության աղբյուր են եղել նաև ՀՀ պատկան մարմինների մեկնաբանությունները և հաղորդած տեղեկությունները, ինչպես նաև միջազգային և ներպետական իրավական նորմերը, հայեցակարգերը, օրենքները, ՀՀ կառավարության որոշումները:

2021 թվականի ընթացքում մշտադիտարկվել է ՀՀ ԱՆ 10 ԲԿՀ (2021 թ. հոկտեմբերի 28-ի նիստում ԿԿ կառավարությունը որոշում կայացրեց դադարեցնել ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» և «Հրազդան» քրեակատարողական հիմնարկների գործունեությունը), մասնավորապես՝ ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման, պահման պայմանների, ազատությունից զրկված անձանց

նկատմամբ վերաբերմունքի, խոցելի խմբերի նկատմամբ վերաբերմունքի համատեքստերը, ինչպես նաև կրթության և զբաղվածության ապահովման հարցերը:

Վերլուծվել են նաև Քովի-19-ի հետ կապված իրավիճակն ու այդ ուղղությամբ պետության ձեռնարկած քայլերը, ինչպես նաև դատախազական հսկողության ինդրահարույց հարցերն ու քրեակատարողական համակարգի արդիականացմանն ու ռազմավարական մոտեցումներին վերաբերող հարցեր:

Չաշվետվության մեջ ներառված են նաև պաշտոնական տվյալներ՝ ՔԿՉ-ներում արձանագրված մահվան, ինքնասպանության, ինքնավնասման և հացադուլի դեպքերի, տույժերի և հատուկ միջոցների կիրառման վերաբերյալ:

Չաշվետվության յուրաքանչյուր գլուխ եզրափակվում է «Առաջարկություններ» բաժնով, որը ներառում է արձանագրված խնդիրների լուծման առաջարկություններ՝ ուղղված ինչպես իրավաստեղծ, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայի թերությունների և բացթողումների վերացմանը և ընդհանուր ոլորտի բարեփոխմանը:

Չաշվետվության մեջ խմբի կողմից ՀՀ պատկան մարմիններին առանձին դատապարտյալների կամ կալանավորված անձանց վերաբերյալ գրությունների բովանդակությունը ներկայացնելիս խումբը, հավատարիմ լինելով անձնական տվյալների գաղտնիության պահպանման սկզբունքին, չի հրապարակում այդ անձանց նույնականացնող տեղեկությունները՝ օգտագործելով միայն սկզբնատառերը:

ԱՄՓՈՓՈՒՄ

2021 թվականին, ինչպես և նախորդ՝ 2020 թվականին Դիտորդների խմբի գործառույթներն իրականացվել են Զովիդ-19 համավարակով պայմանավորված սահմանափակումների պայմաններում: Թեև 2020 թվականի համեմատ 2021 թվականին սահմանափակումները շատ խիստ չեն եղել, այնուամենայնիվ, պարբերաբար սահմանափակվել են քրեակատարողական հիմնարկներում գտնվող ազատությունից զրկված անձանց հետ տեսակցությունները՝ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց առողջության պահպանման նպատակով:

Դիտորդների խումբը ուշադրության կենտրոնում է պահել քրեակատարողական հիմնարկներում Զովիդ-19-ի հետ կապված իրավիճակի զարգացումները, ինչպես նաև տարվա ընթացքում իրականացրել է հետազոտություն՝ «Զովիդ 19 համաճարակի զարգացման մոդելավորում և կանխատեսում քրեակատարողական հիմնարկներում» թեմայով, որը թույլ է տալիս վերլուծել հիվանդության տարածման հնարավորությունները քրեակատարողական հիմնարկներում և կանխարգելման ռազմավարությունների հնարավոր ազդեցությունը:

2021 թվականի ընթացքում խումբն իրականացրել է 47 այցելություն, որից 31-ը՝ ահազանգերի, իսկ 16-ը՝ պլանային այցելությունների շրջանակներում: Արձանագրված խնդիրների առնչությամբ խումբը ՀՀ արդարադատության նախարարությանն ուղղել է թվով 77 գրություն, որոնցից 2-ը հրատապ հաշվետվությունե, 20-ը՝ ընթացիկ հաշվետվություն, 27-ը՝ հարցում, 23-ը՝ դիմում և 5-ը՝ օրենսդրական առաջարկ:

Ցավոք, խումբը դեռևս խնդիր ունի ԶԿՀ-ներում առկա վիճակի ամբողջական ուսումնասիրության հետ, քանի որ ըստ մեզ հասած տեղեկությունների, ազատագրված անձանց շրջանում խմբին դիմելը չի խրախուսվում, համարվում է ներքին խնդիրները հանրայնացնելու և տեսանելի դարձնելու անցանկալի վարք:

Այնուամենայնիվ, 2021 թվականի դիտարկումների արդյունքում Դիտորդների խումբն արձանագրել է վատ և անմարդկային վերաբերմունքի դեպքեր՝ կապված բժշկական զննության ու մարմնական վնասվածքների արձանագրման ու պահման պայմաններին առնչվող անմխիթար վիճակի հետ:

Դիտորդների խումբը, պահման պայմանների հետ կապված, 2021 թվականին անմարդկային է որակել «Աբովյան» ԶԿՀ կալանավորված և խցային պայմաններում պահվող անձանց համար նախատեսված մասնաշենքը և ընդգծել, որ տևական ժամանակ այդ պայմաններում բնակվելը հավասարազոր է խոշտանգման:

Դիտորդները 2021 թվականի ընթացքում շարունակել են բարձրացնել «Նուբարաշեն» ԶԿՀ-ում պահման պայմանների անմխիթար վիճակի հարցը՝ մասնավորապես ահազանգելով հացադուլ հայտարարած դատապարտյալներին հատկացված խցերում անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող պայմանների մասին:

Չաշվետու ժամանակահատվածում Խմբի ուշադրության կենտրոնում է եղել ազատագրված անձանց խտրականությունից զերծ լինելու իրավունքի, ինչպես նաև կանանց, անչափահասների, խոցելի խմբերի իրավունքների ապահովման խնդիրները:

Դիտորդների խմբի ուշադրության կենտրոնում է եղել նաև ազատագրված անձանց կրթության կազմակերպման խնդիրները քրեակատարողական հիմնարկներում, մասնավորապես հանրակրթության ոլորտում, հատկապես որ թերի միջնակարգ կրթություն ունեցողների թիվը կալանավորված և դատապարտված անձանց շրջանում անցնում է 300-ից:

2021 թվականի հաշվետվության շրջանակներում ուսումնասիրվել են նաև դատապարտյալների աշխատանքային իրավունքի, ինչպես նաև քրեակատարողական համակարգի աշխատակիցների աշխատանքային պայմաններին առնչվող հարցերը: Խումբը նաև անդրադարձել է դատախազական հսկողության խնդրահարույց հարցերին, ինչպես նաև քրեակատարողական համակարգի արդիականացմանն ու ռազմավարական մոտեցումներին:

1. ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ

Ազատությունից զրկված անձան պաշտպանության և իրավական երաշխիքների հարցում և՛ միջազգային, և՛ ներպետական կարգավորումներով կենտրոնական տեղ է հատկացված վատ վերաբերմունքի կանխարգելմանը, ինչը պրակտիկայում տարբեր կերպ կարող է դրսևորվել:

Դիտորդական խումբն իր տարեկան գործունեության ընթացքում արձանագրել է վատ վերաբերմունքի դեպքեր՝ կապված բժշկական զննության, մարմնական վնասվածքների արձանագրման բացակայության ու պահման պայմանների հետ:

Ստորև ներկայացնում ենք այդ դեպքերի առավել մանրամասն ուսումնասիրությունը:

1.1. Բժշկական զննության և մարմնական վնասվածքների արձանագրման թերացումներ

Որպես ընդհանուր կանոն՝ քրեակատարողական հիմնարկ ընդունվելիս ազատությունից զրկված անձինք ենթարկվում են նախնական բժշկական զննության, ինչը ներառում է՝ արտաքին զննություն, հոգեբուժական վկայարկում, առողջական վիճակի վերաբերյալ գանգատների առկայության պարզում և խորհրդատվություն:

Կալանավորված անձանց և դատապարտյալների բժշկական օգնության և սպասարկման կազմակերպումը, կալանավորվածներին պահելու վայր կամ քրեակատարողական հիմնարկ ընդունելիս, կարգավորվում է ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի N 825-Ն որոշմամբ, որը սահմանում է. [... Բժշկական զննությունն իրականացնում են «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի բժիշկները: Համաձայն նույն կարգավորումների՝ բժշկական զննությունն իրականացվում է կալանավորվածներին պահելու վայրի, քրեակատարողական հիմնարկի բուժաշխատող չհանդիսացող ծառայողների կամ կալանավորված անձի կամ դատապարտյալի փոխադրումն իրականացնող ծառայողների լսելիության և, եթե բժշկական զննությունն իրականացնող բժիշկը հակառակը չի պահանջում՝ տեսանելիության սահմաններից դուրս: Կալանավորված անձանց կամ դատապարտյալների բժշկական զննությունն իրականացվում է անհատական սկզբունքով՝ առանձին¹: ...]:

¹ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=162828>

Նախնական բժշկական զննությունն ունի ոչ միայն առողջության պահպանման և կանխարգելման նպատակ, այլև ուղղված է խոշտանգման և վատ վերաբերմունքի դեպքերի կանխարգելմանը և հայտնաբերմանը, ինչպես նաև կարող է նպաստել դրանց արդյունավետ քննության կազմակերպմանը:

ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի N 825-Ն որոշմամբ՝ նաև սահմանվում է խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական զննության արձանագրության ձևաթղթի կազմման և ներկայացման ընթացակարգը, ինչպես նաև դրա նկատմամբ մշտադիտարկումը:

Բացի վերոնշյալ կարգավորումը՝ ՀՀ արդարադատության նախարարի 21.04.2021 թ. Թիվ 163-Լ հրամանով հաստատված Թիվ 2 հավելվածով սահմանվել է նաև խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական զննության արձանագրության ձևաթղթի ձևը և խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական զննության արձանագրությունը կազմելու ուղեցույցը: Ըստ նշված ուղեցույցի 9-րդ կետի 2-րդ մասի՝ մարմնական վնասվածքների վերաբերյալ կազմվում է արձանագրություն, եթե բուժաշխատողը հայտնաբերում է (այդ թվում անցկացրած բժշկական զննության ընթացքում), որ բուժայցելուի մարմնական վնասվածքը կամ առողջական վիճակի վերաբերյալ գանգատը կարող է լինել խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ դրսևորման հետևանք:

2021թ.-ի հունիսին ՀՀԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբը (այսուհետ՝ ԽՈՒԲ) արագ արձագանքել է «Վանաձոր» ԲԿՀ ազատազրկված անձի հարազատների՝ ոստիկանների կողմից խոշտանգումների ենթարկելու վերաբերյալ ահազանգին և պարզել, որ նախնական զննության ընթացքում տվյալ ազատազրկված անձի մարմնական վնասվածքների վերաբերյալ համապատասխան արձանագրություն չի կազմվել քրեակատարողական հիմնարկում, ինչպես ահազանգել էին հարազատները:

«Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի Վանաձորի բաժնի բժիշկը Դիտորդների խմբի անդամների այն հարցին, թե ինչու արձանագրություն չի կազմվել, պատասխանել է, որ այն կազմվում է միայն այն դեպքում, երբ ԲԿՀ մուտք գործած անձը հայտնում է հնարավոր խոշտանգման կամ վատ վերաբերմունքի մասին, մնացած դեպքերում, անկախ մարմնական վնասվածքների առկայությունից, արձանագրություն չի կազմվում, այլ տվյալները գրանցվում են ազատությունից զրկված անձի բժշկական

քարտուում, իսկ վերոնշյալ կալանավորված անձը չի կատարել խոշտանգված լինելու վերաբերյալ որևէ հայտարարություն²:

Խուժբը դեպքի առնչությամբ 2021 թվականի հուլիսի 2-ի թիվ 21-30 գրությամբ դիմել է ՀՀ ԱՆ՝ մտահոգություն հայտնելով, որ «խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական զննության արձանագրությունը կազմելու ուղեցույցը» թերի է կիրառվում և որ ՊՈԱԿ-ի բժիշկները թերևս լավ չեն յուրացրել ուղեցույցի դրույթները, ուստի առաջարկել է ՊՈԱԿ-ի բժիշկների համար կազմակերպել ուսուցում՝ Ուղեցույցի լիարժեք կիրարկման նպատակով³:

Դեպքի հետ կապված ՀՀ արդարադատության նախարարությունից խմբի գրությանն ի պատասխան հայտնել են⁴, որ վերոնշյալ դեպքի արձանագրության ձևաթուղթ չլրացնելու փաստի առնչությամբ կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Հրամանով նախատեսված խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական զննության արձանագրության լրացման հիմքեր չեն եղել, քանի որ զննության ընթացքում բուժայցելուի մոտ հայտնաբերված մարմնական վնասվածքները հերթապահ բուժքրոջ կողմից չեն որակվել որպես խոշտանգման կամ վատ վերաբերմունքի դրսևորում (դրանք սահմանված կարգով արձանագրվել են վերջինիս բժշկական քարտում): Կալանավորված անձը նույնպես չի կատարել խոշտանգված լինելու վերաբերյալ որևէ հայտարարություն:

Հետամուտ լինելով բացահայտված խնդրին ու լուծման եղանակներին՝ 2021 թվականի օգոստոսի 9-ի թիվ 21-38 գրությամբ Խուժբը կրկին դիմել էր⁵ նախարարությանը՝ տեղեկանալու, թե ՊՈԱԿ-ի քանի բժիշկ է վերապատրաստվել, վերապատրաստումն ինչ թեմաներ է ընդգրկել, ովքեր են եղել ուսուցանողները, որքան գումար է ծախսվել վերապատրաստման համար և որ մարմինն է հոգացել վերապատրաստման ծախսերը:

²<http://pmg.am/hy/news/successful-cases/2021-09-16-21-45-33>

³<http://pmg.am/hy/news/successful-cases/2022-02-08-14-34-53>

⁴ http://pmg.am/images/%D5%84_21-30_%D5%8E%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B1%D5%B8%D6%80_%D5%AD%D5%B8%D5%B7%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A3%D5%B4%D5%A1%D5%B6_%D5%A4%D5%A5%D5%BA%D6%84_3.pdf

⁵ http://pmg.am/images/%D4%B5_21-38_%D5%80%D5%A1%D6%80%D6%81%D5%B8%D6%82%D5%B4_%D4%B2%D5%AA%D5%B7%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%8A%D5%88%D4%B1%D4%BF.pdf

ՀՀ արդարադատության նախարարությունից պատասխան գրությամբ տեղեկացրել են⁶, որ ՀՀ արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի կողմից համատեղ իրականացվող Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում ծրագրի շրջանակներում խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական զննության արձանագրության ձևաթուղթ կազմելու վերաբերյալ վերապատրաստումներին մասնակցել է ՊՈԱԿ-ի ողջ բժշկական անձնակազմը (բժիշկներ, բուժքույրեր և բուժակներ)՝ թվով 150 անձ:

Մինչդեռ, ինչպես երևաց արձանագրված կոնկրետ դեպքից, ՊՈԱԿ-ի բուժաշխատողները դեռևս ամբողջությամբ չեն տիրապետում վատ վերաբերմունքի դեպքերի արձանագրման առանձնահատկություններին ու պահանջներին:

2022թ. մարտին խումբը ազատագրված անձի ահազանգով «Վանաձոր» ԶԿՀ կատարած այցի ընթացքում պարզել է, որ այս ԶԿՀ-ում շարունակվում է անփույթ վերաբերմունքը խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի փաստաթղթավորման հարցում:

Մասնավորապես, դեպքի առնչությամբ բժիշկը տեղեկացրել է, որ ազատագրված անձի մարմնական վնասվածքների վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն և ներկայացվել ՊՈԱԿ ու դատախազություն դեռևս 2022թ. հունվարի 10-ին, սակայն նշված արձանագրությանը խումբը ծանոթանալու հնարավորություն չի ունեցել, քանի որ այն ոչ թղթային, ոչ էլ էլեկտրոնային տարբերակով առկա չի եղել: Այսինքն՝ փաստացի արձանագրությունը գոյություն չի ունեցել:

Բժշկի միակ պատճառաբանությունը տպող սարքի անսարքությունն է եղել, որի կապը փաստաթղթի էլեկտրոնային տարբերակի հետ բնավ բացատրելի չէ:

Նման վարքագիծը հերթական անգամ փաստում է, որ բժիշկների կողմից կա անփույթ վերաբերմունք, որ խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի փաստաթղթավորումը դեռևս պատշաճ չի իրականացվում, ինչն էլ կարող է հանգեցնել Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային խախտման՝ վատ վերաբերմունքի դեպքերով պատշաճ քննություն չիրականացնելու հիմքով:

Անդրադառնալով քննարկվող տարվա վիճակագրությանը՝ պետք է նշել, որ պաշտոնական տվյալների համաձայն՝ 2021թ.-ին ՀՀ քրեակատարողական հիմնարկներ

⁶ http://pmg.am/images/%D5%84_21-38.pdf
http://pmg.am/images/%D5%84_21-38.pdf

ընդունված թվով **241** ազատագրված անձանց մոտ նախնական բժշկական զննության արդյունքում արձանագրվել են տարբեր տեսակի մարմնական վնասվածքներ:

Արձանագրված 240 մարմնական վնասվածքների դեպքերով իրազեկվել են իրավասու մարմինները:

Նշված թիվը, ըստ քրեակատարողական հիմնարկների, հետևյալ պատկերն ունի՝

	ՔԿՅ	Մարմնական վնասվածքով քրեակատարողական հիմնարկ են ընդունվել	Իրազեկվել է իրավասու մարմիններին
1	«Արմավիր»	192	192
2	«Սևան»	0	0
3	«Արթիկ»	19	19
4	«Կոշ»	0	0
5	«Երևան- Կենտրոն»	0	0
6	«Յրազդան»	0	0
7	«Վարդաշեն»	1	1
8	«Նուբարաշեն»	3	3
9	«Վանաձոր»	2	2
10	«Գորիս»	10	9
11	«Դատ. հիվանդանոց»	2	2
12	«Աբովյան»	12	12
	ԸՆԴԱՄԵՆԸ	241	240

Փաստորեն՝ ներկայացված թվի մեջ գերակշիռ մասը բաժին է ընկնում «Արմավիր» քրեակատարողական հիմնարկին:

Ըստ պաշտոնական տվյալների՝ ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու,

առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» N 825-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 2.1 գլխով նախատեսված կարգով՝ 2021 թվականին կազմվել է խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական զննության ընդամենը **10 արձանագրություն և սահմանված կարգով տրվել ընթացք: Հաշվի առնելով բժշկական զննության արդյունքներով արձանագրված մարմնական վնասվածքների թիվն ու կազմված արձանագրությունների թիվը՝ կարող ենք փաստել, որ հնարավոր վատ վերաբերմունքի դեպքերով վնասվածքների արձանագրումը իրապես արդյունավետ չի իրականացվում:**

2021թ.-ին ՀՀ քրեակատարողական հիմնարկներից ստացվել է 246 բողոք, որոնցից **13 բողոք (դիմում) հասցեագրված է եղել ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնին:**

Հ/Հ	Քրեակատարողական հիմնարկ	Բողոք (դիմում)
1.	«Նուբարաշեն»	55
2.	«Գորիս»	15
3.	«Աբովյան»	3
4.	«Վարդաշեն»	3
5.	«Սևան»	11
6.	«Դատապարտյալների հիվանդանոց»	22
7.	«Վանաձոր»	20
8.	«Կոշ»	12
9.	«Արթիկ»	27
10.	«Հրազդան»	31
11.	«Երևան-Կենտրոն»	0
12.	«Արմավիր»	47
	ԸՆԴԱՄԵՆԸ՝	246

Ինչ վերաբերում է ազատագրված անձանց կողմից վատ վերաբերմունքի դեպքերով բողոքների քանակին՝ իսմբին չի հաջողվել պարզել, թե 2021 թվականի ընթացքում կալանավորված և դատապարտված անձանց կողմից քանի՞ դիմում-

բողոք է ներկայացվել խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի վերաբերյալ, քանի որ ըստ պաշտոնական պատասխանի՝ կալանավորված անձանց և դատապարտյալների կողմից ներկայացված բողոքները, օրենսդրական պահանջների համաձայն, գրաքննության չեն ենթարկվում, հետևաբար բովանդակության վերաբերյալ վիճակագրություն չի վարվում:

2021 թվականի ընթացքում Զրեակատարողական հիմնարկների վարչակազմերի կողմից խոշտանգումների և այլ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք դրսևորելու վերաբերյալ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում ստացվել է 2 գրություն, որոնցից մեկն ուղարկվել է համապատասխան քրեակատարողական հիմնարկ՝ քրեադատավարական ընթացակարգով հետագա ընթացքը լուծելու համար, իսկ մյուս գրությամբ արձանագրված հանգամանքների ուսումնասիրությամբ պարզվել է, որ քրեակատարողական հիմնարկում նախապատրաստված կյուրթերի հիման վրա հարուցվել է քրեական գործ և նախաքննությունը կատարելու նպատակով ուղարկվել է իրավասու մարմին:

Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում իրականացվել է մեկ ուսումնասիրություն՝ մամուլում առկա հրապարակման կապակցությամբ, որի արդյունքում պարզվել է, որ նշված դրվագով իրականացվում է նախաքննություն:

2021 թվականի ընթացքում 1 քրեակատարողական ծառայողի՝ ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի անվտանգության ապահովման բաժնի առաջատար մասնագետի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի (Կաշառք ստանալը) 2-րդ մասով և 312-րդ հոդվածի (Կաշառք տալը) 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ և վերջինիս լիազորությունները ժամանակավորապես դադարեցվել են:

2021թ.-ին ՀՀ քրեական օրենսգրքի 341-րդ հոդվածի 2-րդ մասով (**դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի կողմից ցուցմունք, բացատրություն կամ կեղծ եզրակացություն տալուն կամ սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելը, որը զուգորդվել է խոշտանգմամբ**) 309-րդ հոդվածի (պաշտոնեական լիազորությունների անցնելը) և 309.1-րդ հոդվածի (խոշտանգումը) հատկանիշներով ծառայողական քննություններ չեն իրականացվել, քրեակատարողական ծառայության աշխատակիցների նկատմամբ հարուցված, կարճված և/կամ կասեցված քրեական գործեր չեն եղել:

Կարող ենք արձանագրել, որ հնարավոր վատ վերաբերմունքի դեպքերի արձանագրման ու արդյունավետ քննության ապահովման հարցում պետությունը դեռևս հսկայական անելիքներ ունի, քանզի պրակտիկան և վիճակագրությունը վեր են հանել

ինչպես բժիշկների կարողությունների պակաս, այնպես էլ օրենսդրության պահանջների արդյունավետ կիրառման բացթողումներ:

1.2. Պահման պայմաններ

Խուճբը քրեակատարողական հիմնարկներում բնակության համար ոչ պիտանի պայմաններին անդրադարձել է իր բոլոր տարեկան զեկույցներում և հաշվետվություններում, սակայն խնդիրը շարունակում է արդիական մնալ և հարցը մինչև օրս համակարգային լուծում չի ստացել: Առանձին դեպքերում Խճբի կողմից բարձրացված խնդրահարույց դեպքերով պետության կողմից ձեռնարկվել են իրավիճակային լուծումներ: Օրինակ՝ գումար է հատկացվել մասնակի վերանորոգումների համար:

2021թ.-ին նույնպես Խուճբը մշտադիտարկման արդյունքում մի քանի քրեակատարողական հիմնարկներում արձանագրել է բնակության համար ոչ պիտանի մասնաշենքի և խցերի առկայություն՝ անձանց տևական ժամանակ այդտեղ պահելը որակելով անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող:

Այսպես, «Աբովյան» ԶԿՅ կատարած այցելության ժամանակ Խուճբն արձանագրել է, որ հիմնարկի՝ կալանավորված և խցային պայմաններում պահվող անձանց համար նախատեսված մասնաշենքը (մեկուսարանի շենք) պիտանի չէ բնակության համար, և



նման պայմաններում անձանց պահելը անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դրսևորում է, իսկ տևական ժամանակ այդ պայմաններում բնակվելը հավասարազոր է խոշտանգման⁷:

Նշված մասնաշենքը բնակեցվածության առումով ամենահագեցածն է, և այնտեղ

⁷<http://pmg.am/hy/news/successful-cases/2021-12-08-17-50-28>

պահվում են նաև անչափահասներ ու մանկահասակ երեխաներ ունեցող կալանավորված կանայք:

Դիտորդների խումբը 2015 թվականից ի վեր ամեն տարի տարեկան զեկույցներում բարձրաձայնել է այն մասին, որ տվյալ մասնաշենքը հիմնանորոգման կարիք ունի,




սակայն իրականացվել են միայն մասնակի վերանորոգումներ: 2021թ.-ին առաջացել է նաև ջրահեռացման խնդիր: Առաջին հարկում, որտեղ գտնվում են կարանտինային խցերը, պատժախցերը, աշխատակազմի սենյակները, բժշկական սենյակը, երկրորդ հարկից թափվող ջրի հոսքի պատճառով դարձել է բնակության համար ոչ պիտանի: Դիտորդների խումբն առաջարկել է ժամանակավորապես՝ մինչև խնդրին լուծում տալը, դադարեցնել այդ հարկի շահագործումը:

Խմբի հրատապ հաշվետվությանն ի պատասխան՝ Արդարադատության նախարարությունից տեղեկացրել են, որ դիմել են Զրեակատարողական ծառայությանը՝ 2022 թ.-ին միջոցներ տրամադրելու և մասնաշենքը հիմնանորոգելու համար⁸:

Դիտորդների խումբը ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ԶԿՀ կատարած այցելության ժամանակ արձանագրել է⁹, որ հացադուլ հայտարարած դատապարտյալներին հատկացված խցի (որպես կանոն, պահվում են հիմնարկի 1-ին հարկի խցերում) պահման

⁸<http://pmg.am/hy/news/successful-cases/2021-11-25-19-15-44>

⁹ http://pmg.am/images/22-05_%D4%B8%D5%80_%D5%86%D5%B8%D6%82%D5%A2%D5%A1%D6%80%D5%A1%D5%B7%D5%A5%D5%B6_%D5%94%D4%BF%D5%80.pdf



պայմաններն անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող են: Խուցը խոնավ է եղել, առկա է եղել գարշահոտություն, պատերի և առաստաղի ծեփն ամբողջությամբ թափված է եղել, խցում հակասանիտարական պայմաններ են եղել:

Խմբի հրատապ հաշվետվությանն ի պատասխան՝ ՀՀ արդարադատության նախարարությունից պատասխան գրությամբ հայտնել են¹⁰, որ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկը (այսուհետ՝ Հիմնարկ) շահագործման է հանձնվել դեռևս 1980 թվականին: Հիմնարկի վթարային սանհանգույցներն անբարեխիղճ շահագործման հետևանք են, իսկ առաջին հարկի խցերի սանհանգույցները վերանորոգվել են 2019 թվականին: Հիմնարկի առաջին հարկը կիսանկուղային է, իսկ հիդրոմեկուսիչ շերտը բնական ամորտիզացիայի հետևանքով քայքայվել է: Այն վերականգնելու համար անհրաժեշտ են խոշոր ֆինանսական միջոցներ, ինչը տնտեսական արդյունավետության տեսանկյունից արդարացված չի լինի, քանի որ քրեակատարողական հիմնարկներում պահման պայմանների բարելավման նպատակով ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի N 1717-Լ¹¹ որոշմամբ նախատեսված քրեակատարողական հիմնարկների

¹⁰ http://pmg.am/images/%D5%84_22-05_%D4%B8%D5%80_%D5%86%D5%B8%D6%82%D5%A2%D5%A1%D6%80%D5%A1%D5%B7%D5%A5%D5%B6_%D5%94%D4%BF%D5%80.pdf

¹¹ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137161>

օպտիմալացման պլանով, ի թիվս այլնի, նախատեսված է փակել սույն Հիմնարկը ևս, որի արդյունքում Երևան քաղաքի տարածքում կկառուցվի **քրեակատարողական նոր հիմնարկ**:

Բայց միևնույն ժամանակ նշել են, որ Հիմնարկի խցերի վերանորոգման աշխատանքներն ընդգրկված են 2022 թվականի ընթացիկ նորոգման աշխատանքների ցանկում:

Խմբի կողմից ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ԶԿՀ կատարած մեկ այլ այցելության ժամանակ Դիտորդները դիտարկել են¹² կարանտինային և 2-րդ հարկիմի քանի խցեր և արձանագրել, որ կարանտինային խցերն անմիջապես վիճակում են, առկա է խոնավություն, անձանց այնտեղ պահելը վտանգավոր է նրանց առողջության համար:

Նկատվել է նաև, որ 2-րդ հարկում դիտարկված բոլոր խցերի հատակները, բացի 29-րդ խցից, մասամբ կամ ամբողջությամբ սալիկապատ են, մինչդեռ 29-րդ խցի հատակը բետոնից է: Բացի այդ, դիտարկման պահին Դիտորդներն արձանագրել են, որ թեև այդ հարկի խցերը նոր են վերանորոգվել, սակայն 29-րդ խցի առաստաղից արդեն ջուր է կաթում, ինչի հետևանքով վնասվել է առաստաղի որոշ հատված: Ջուրը առաստաղից կաթում է խցի հատակին, ինչի հետևանքով հնարավոր է խցում խոնավության աստիճանի բարձրացում: Հարցը քննարկվել է հիմնարկի պետի հետ, ով խցերում առկա պայմանների տարբերությունը որևէ կերպ չի կարողացել պարզաբանել:

Նշվածի կապակցությամբ Խումբը դիմել է ՀՀ արդարադատության նախարարությանը՝ պարզելու համար՝ ինչով է պայմանավորված 29-րդ խցի՝ մյուսների համեմատ ակնհայտ ոչ բարվոք վիճակում գտնվելու հանգամանքը: Նաև, դիտարկելով խուցը, անհրաժեշտ են համարել միջոցներ ձեռնարկել խափանված ջրամատակարարման համակարգի վերանորոգման ուղղությամբ:

ՀՀ արդարադատության նախարարությունից պարզաբանել են¹³, որ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի 29-րդ խցի առաստաղի ջրի արտահոսքը դադարեցված է, քայքայված ծեփերը մաքրվել են և իրականացվել են առաստաղի հարդարման աշխատանքներ:

¹² http://pmg.am/images/%D4%B5_21-65.pdf

¹³ http://pmg.am/images/%D5%84_21-65_.pdf

Ինչ վերաբերում է Խցի՝ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի այլ խցերի հետ համեմատությամբ ոչ բարվոք վիճակին, նշել են, որ այն պայմանավորված է այնտեղ պահված ազատությունից զրկված անձանց ոչ բարեխիղճ վերաբերմունքով:

Առաջարկություններ

- Սահմանել հսկողություն հնարավոր վատ վերաբերմունքի դեպքերով նախնական զննության կատարման նկատմամբ և ցուցաբերել հետևողականություն:

- ՊՈԱԿ-ի բժիշկների համար կազմակերպել շարունակական վերապատրաստումներ՝ վատ վերաբերմունքի դեպքերի բժշկական զննության ու արձանագրությունների ճիշտ կազմման վերաբերյալ:

- Գործուն քայլեր ձեռնարկել «Աբովյան» ԶԿՀ-ի պահման պայմանները բարելավելու ու պահանվող ստանդարտներին համապատասխանեցնելու համար:

- Դիտարկել «Նուբարաշեն» ԶԿՀ-ի փակման հարցը:

2.ՔՈՎԻԴ 19-Ի ԻՐԱՎԻՃԱԿԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ

Քրեակատարողական հիմնարկները Քովիդ-19-ի տարածման տեսանկյունից գտնվում են բարձր ռիսկի տակ: Թեև Քովիդ-19-ի տարածման դեմ իրականացվող միջոցառումների տեսանկյունից 2020 թվականն առավել լարված էր՝ աննախադեպ սահմանափակումների պատճառով, սակայն 2021 թվականին ևս սահմանափակումները քրեակատարողական հիմնարկներում շարունակվել են:

Խումբն իր ուշադրության կենտրոնում է պահել Քովիդ-19-ի դեմ պայքարի միջոցառումների, տեսակցությունների սահմանափակումների, ինչպես նաև ազատագրվածների շրջանում պատվաստանյութերի հասանելիության հարցը:

Խմբի գործունեության շրջանակներում և ոլորտային փորձագետների ներգրավմամբ 2021 թվականին իրականացվել է նաև «Քովիդ-19-ի համաճարակի զարգացման մոդելավորում և կանխատեսում քրեակատարողական հիմնարկներում» հետազոտությունը¹⁴, որը թույլ է տալիս որոշել և գնահատել բռնկումների սցենարները և կանխարգելիչ տարբեր ռազմավարությունների կոմբինացիան, ցույց տալու համաճարակի առանձնահատկություններն ու կանխարգելիչ միջամտությունների արդյունավետությունը:

2.1.Քովիդ-19-ի համաճարակի զարգացման մոդելավորումը և կանխատեսումը քրեակատարողական հիմնարկներում

Քովիդ-19-ի զարգացման մոդելավորումը թույլ է տալիս վերլուծել հիվանդության տարածման հնարավորությունները քրեակատարողական հիմնարկներում և կանխարգելման ռազմավարությունների հնարավոր ազդեցությունը:

Քովիդ-19 հիվանդության էական բռնկումներ դիտվել են ամբողջ աշխարհում/ քրեակատարողական հիմնարկներում: Այդպիսի հիմնարկները Քովիդ-19-ի սպեցիֆիկ ռիսկի տակ են՝ պայմանավորված լայն շրջանակների դինամիկ փոխազդեցությամբ և անխուսափելի սերտ շփումներ հետևանքով:

Քովիդ-19-ի բռնկման ժամանակ քրեակատարողական հիմնարկներում գտնվողները, անձնակազմը և բուժանձնակազմը, այցելուները՝ բոլորը, ռիսկի տակ

¹⁴ http://pmg.am/images/CEI_COVID_19_MODEL_REPORT_25.09.21.pdf

են: Զրեակատարողական հիմնարկներում գնտվողները բարձր ռիսկի տակ են նաև պայմանավորված ուղեկցող հիվանդությամբ, առողջական վիճակով:

Մաթեմատիկական մոդելներն օգտակար գործիք են՝ հասկանալու հիվանդության տարածումը՝ ներառյալ համաճարակաբանական առանձնահատկությունները, գնահատելու հանրային առողջապահական վերահսկման ծրագրերի ազդեցությունը և կանխատեսելու համաճարակի զարգացման հնարավորությունները: Մոդելները կարող են օգտագործվել հակազդման կազմակերպման համար՝ քրեակատարողական հիմնարկներում Զովիդ-19-ի բռնկումները կանխելու կամ նվազեցմանն ուղղված միջամտությունների պոտենցիալ ազդեցությունը գնահատելու միջոցով:

Զրեակատարողական հիմնարկներում Զովիդ-19 համաճարակի զարգացման մոդելավորման և կանխատեսման համար կիրառվել է Ավստրալիայի Կիրբիի ինստիտուտի մասնագետների կողմից մշակված մոդելի տեղայնացված տարբերակը՝ հաշվի առնելով ՀՀ քրեակատարողական հիմնարկների և համաճարակի զարգացման առանձնահատկությունները: Մոդելը թույլ է տալիս գնահատել Զովիդ-19-ի հնարավոր բռնկումները և գնահատել կանխարգելիչ ծրագրերի ազդեցությունը, այդ թվում՝ անհատական պաշտպանիչ միջոցների օգտագործման, մեկուսացման, կարանտինի, ջերմաչափման, ազատազրկվածների թվի նվազեցման և այցելութների թվի կրճատման առումով: Մոդելը հաշվի է առնում տվյալ հիմնարկում վարքագծային բնորոշ և համաճարակաբանական կոնտեքստը:

Գնահատման համար Մոդելը ներառում է վիրուսի հնարավոր փոխանցումը ազատազրկվածների, անձնակազմի, բուժանձնակազմի և այցելուների շրջանում: Այն թույլ է տալիս գնահատել Զովիդ-19-ով խոցելի մարդկանց թվաքանակը՝ կախված սերտ կոնտակտների թվից, տվյալ քրեակատարողական հիմնարկ օրական ներս և դուրս եկողների թվից, Զովիդ-19-ի վերահսկմանն ուղղված տարբեր միջամտությունների առկայությունից: Մոդելում ներառված են Զովիդ-19-ի փոխանցման և հիվանդության զարգացման միջազգային վերջին փորձը և ապացուցողականությունը:

2.2. Խմբի դիտարկումները Քովիդ-19-ի հետ կապված

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի անդամները, Քովիդ-19 համավարակով պայմանավորված, համապատասխան ուսումնասիրություններ կատարելու նպատակով 2021 թ. ողջ ընթացքում պարբերաբար հարցում են կատարել՝ պարզելու համար, թե (N 21-31/02. 07. 2021)2021թ. հունվարի 1-ից մինչև հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում.

- ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում գտնվող որքան դատապարտյալ է հանձնել Քովիդ-19 հիվանդության թեստ, թեստերից քանիսն է եղել դրական, քանիսը՝ բացասական:

- ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում գտնվող որքան կալանավորված անձ է հանձնել Քովիդ-19 հիվանդության թեստ, դրանցից քանիսն է եղել դրական, քանիսը՝ բացասական:

- ՀՀ ԱՆ քրեակատարողական համակարգի աշխատակիցների շրջանում որքան անձ է հանձնել Քովիդ-19 հիվանդության թեստ, դրանցից քանիսն է եղել դրական, քանիսը՝ բացասական:

ՀՀ արդարադատության նախարարությունը հայցվող ամբողջական տեղեկատվությունը ներկայացրել է աղյուսակի տեսքով.

ՀՀ ԱՆ ԲԿ հիմնարկի անվանումը	Կալանավոր ված անձ			Դատապարտյ ալ			Համակարգի ծառայող, աշխատակից		
	Թեստ. քանակ	Դր.	Բացաս.	Թեստ. քանակ	Դր.	Բացաս.	Թեստ. քանակ	Դր.	Բացաս.
«Նուբարաշեն»	-	-	-	-	-	-			
«Վանաձոր»	1	-	1	-	-	-			
«Վարդաշեն»	-	-	-	-	-	-			
«Երևան- Կենտ.»	-	-	-	-	-	-			

«Գորիս»	-	-	-	-	-	-			
«Կոշ»	-	-	-	-	-	-			
«Արթիկ»	-	-	-	-	-	-			
«Սևան»	-	-	-	1	-	1			
«Աբովյան»	-	-	-	-	-	-			
«Դատ. հիվանդ»	2	-	2	1	-	1			
«Հրազդան»	2	-	2	-	-	-			
«Արմավիր»	-	-	-	-	-	-			
ԸԿԾ համակարգ	-	-	-	-	-	-	23	5	18
Ընդամենը՝	5	-	5	2	-	2	23	5	18

Քովիդ-19-ի դեմ պայքարի շրջանակներում կատարվող միջոցառումների համատեքստում խումբը նաև դիմել է ՀՀ ԱՆ (N 21-50/21.10.2021)՝ պարզելու, թե.

- ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկ կալանավորված կամ դատապարտված անձիմուտք գործելու ժամանակ արդյոք կատարվում է Քովիդ-19-ի թեստավորում: Եթե այո, ապա ում միջոցների հաշվին:

- Կալանավորված և դատապարտված անձանց ցանկության դեպքում արդյոք կատարվում է Քովիդ-19-ի դեմ պատվաստում: Եթե այո, ապա ում միջոցների հաշվին:

Հարցմանն ի պատասխան՝ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ից հայտնել են, որ իրենց բժշկական անձնակազմի կողմից իրականացվում է ինչպես ԸԿ հիմնարկ նոր մուտք գործած, այնպես էլ առողջական գանգատներով բժշկական անձնակազմին դիմած ազատագրված անձանց Քովիդ-19-ի ռապիդ թեստավորում (արյունային և քիթ-ըմպանային եղանակով), ինչի ծախսերը հոգում է ՀՀ առողջապահության նախարարությունը: Անհրաժեշտության դեպքում ԸԿ հիմնարկին տարածքային առումով մոտ գտնվող առողջության առաջնային պահպանման բժշկական հաստատությունում իրականացվում է նաև Քովիդ-19-ի ՊՇՌ հետազոտություն:

Ինչ վերաբերում է ազատագրված անձանց պատվաստվելու հարցին՝ վերջիններս, ըստ ցանկության, պատվաստվում են Քովիդ-19-ի դեմ՝ համաձայն ՀՀ

առողջապահության նախարարի համապատասխան հրամանների: Քովիդ-19-ի դեմ պատվաստումները ևս իրականացվում են տվյալ ԶԿ հիմնարկին տարածքային առումով մոտ գտնվող առողջության առաջնային պահպանման բժշկական հաստատությունում և հասանելի են ՀՀ-ում առկա Քովիդ-19-ի դեմ բոլոր տեսակի պատվաստանյութերը:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբը մեկ այլ գրությամբ (N 21-56/ 19.11.2021) փորձել է հստակեցնել, թե կան արդյոք մշակված չափանիշներ (ուղեցույց), որով առաջնորդվում են ՀՀ ԱՆ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի բուժաշխատողները՝ անձանց հիվանդանոց տեղափոխելու վերաբերյալ կարծիք ներկայացնելու համար (տվյալ դեպքում սատուրացիայի որ մակարդակն է սահմանային, որի դեպքում անձին տեղափոխում են հիվանդանոց):

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխարգելման նպատակով «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից բոլոր քրեակատարողական հիմնարկների համար սահմանվել են համապատասխան ընթացակարգեր՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի հրամանների:

Ջերմող և համավարակին բնորոշ այլ ախտանիշներով ազատությունից զրկված անձանց վաղ հայտնաբերման նպատակով ՊՈԱԿ-ի ստորաբաժանումների կողմից իրականացվում են զանգվածային ջերմաչափումներ, արագ թեստավորումներ՝ ռապիդ և քիթ-ըմպանային թեստերի միջոցով, սատուրոմետրիա, ինչպես քրեակատարողական հիմնարկ մուտք գործած, այնպես էլ զանգատներով բժշկական անձնակազմին դիմած ազատագրվածների շրջանում:

Ըստ այդմ, ազատագրված անձի կողմից ներկայացված զանգատների դեպքում ազատագրված անձը ենթարկվում է ջերմաչափման, սատուրոմետրիայի, ռապիդ թեստավորման (արյունային և քիթ-ըմպանային եղանակներով): Անհրաժեշտության դեպքում իրականացվում է ՊՇՌ թեստավորում, թոքերի ռենտգեն կամ ՀՇ հետազոտություն:

Քովիդ-19 համավարակին բնորոշ ախտանիշներով ազատագրված անձանց հայտնաբերման դեպքում վերջիններս մեկուսացվում և տեղափոխվում են ՊՈԱԿ-ի ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում տեղակայված ստորաբաժանում կամ առողջապահական մարմինների բուժական հաստատություններ՝ ստացիոնար բուժման նպատակով:

Զովիդ-19 ախտորոշումով ազատությունից զրկված անձանց բժշկական օգնությունը և սպասարկումը քրեակատարողական հիմնարկներում տրամադրվում է՝ հաշվի առնելով ՀՀ առողջապահության նախարարի 2021 թվականի սեպտեմբերի 24-ի «Հիվանդանոցային պայմաններում կորոնավիրուսային հիվանդությամբ (Զովիդ-19) բուժայցելուների վարման կլինիկական ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 3526-Լ հրամանի կարգավորումները:

Ըստ ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած տեղեկատվության՝ քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատազրկված անձանց շրջանում 2019 թվականից առ 10.12.2021թ. կորոնավիրուսային վարակի պատճառով արձանագրվել է մահվան 3 դեպք՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնում:


ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբը 2021 թվականին պարբերաբար դիտարկել է նաև կարանտինային խցերը և հարցում ուղարկել Զովիդ-19-ի պայմաններում այդտեղ պահվող ազատազրկված անձանց ժամկետների և պայմանների փոփոխության վերաբերյալ, թե ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկ կալանավորված կամ դատապարտված անձ մուտք գործելու դեպքում քանի օր է անձը պահվում կարանտինային խցում, և արդյոք պահվում է միայնակ, թե մուտք գործած այլ անձանց հետ միասին:

ՀՀ արդարադատության նախարարությունը, բարձրացված հարցադրումներին ի պատասխան, հայտնել է, որ ազատությունից զրկված անձը քրեակատարողական հիմնարկ ընդունվելուց հետո ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշմամբ սահմանված կարգով բժշկական հետազոտություն անցնելու և կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի պայմաններին ծանոթանալու նպատակով մինչև յոթ օր ժամկետով տեղավորվում է կարանտինային բաժանմունքի՝ այդ նպատակով նախատեսված խցում:

Զովիդ-19 համավարակի սուր բռնկման ժամանակահատվածում ՀՀ արդարադատության նախարարի ցուցումով ազատությունից զրկված անձանց կարանտինային բաժանմունքում պահման ժամանակահատվածը երկարացվել էր ևս յոթ օր ժամկետով՝ դառնալով 14 օր:

Ինչ վերաբերում է ազատազրկված անձանց իրենց ցանկությամբ պատվաստում ստանալու հնարավորություններին, ապա, ըստ ՀՀ ԱՆ տրամադրած տեղեկատվության, ազատազրկված անձանց համար հասանելի են եղել Հայաստանի Հանրապետությունում Զովիդ-19-ի դեմ առկա բոլոր տեսակի պատվաստանյութերը:

2021 թվականի ընթացքում Զովիդ-19 համավարակով պայմանավորված՝ քրեակատարողական հիմնարկներում կարճատև և երկարատև տեսակցությունների



տրամադրման գործընթացն իրականացվել է ոչ լիարժեք:

2021 թվականի ընթացքում ազատությունից զրկված անձանց տրամադրվել է 1042 երկարատև և 8351 կարճատև տեսակցություն:

ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ՀՀ կառավարության 2020 թվականի

սեպտեմբերի 11-ի «Կորոնավիրուսային հիվանդությամբ (Զովիդ-19) պայմանավորված կարանտին սահմանելու մասին» N 1514-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) նախատեսված սահմանափակումներով պայմանավորված՝ քրեակատարողական հիմնարկներում կարճատև և երկարատև տեսակցությունների տրամադրման գործընթացն իրականացվել է ոչ լիարժեք: Տեղեկացրել են նաև, որ հաշվի առնելով Որոշմամբ պարբերաբար սահմանվող տեսակցությունների արգելքը՝ անազատության մեջ պահվող անձանց կարճատև տեսակցությունները վերջիններիս ցանկությամբ փոխարինվել են տեսազանգով (2021 թվականին տրամադրվել է 1942 տեսազանգ): Ընդ որում՝ համավարակով պայմանավորված՝ արտաքին աշխարհի հետ կապն առավել արդյունավետ իրացնելու նպատակով ազատությունից զրկված անձանց տրամադրվել է լրացուցիչ 1 տեսազանգ ունենալու հնարավորություն՝ մինչև 10 րոպե տևողությամբ:

3. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՉԵՐԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

3.1. Խտրականությունից զերծ լինելու իրավունքը և պետության պարտավորությունները

Անձի՝ խտրականությունից զերծ լինելու իրավունքը սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ կողմից վավերացված և ստորագրված միջազգային կոնվենցիաներով:

Սահմանադրությունն արգելում է խտրականությունը՝ կախված մաշկի գույնից, ռասայից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ հայացքներից, սեռից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, հաշմանդամությունից, գենետիկական հատկանիշներից, աշխարհայացքից, գույքային վիճակից, տարիքից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, ծնունդից կամ անձնական ու սոցիալական բնույթի այլ հանգամանքներից¹⁵:

Մարդու իրավունքների վերաբերյալ բոլոր գլխավոր փաստաթղթերը, ընդգծելով անձի՝ խտրականությունից զերծ լինելու իրավունքի համամարդկային և արժեքավոր էությունը, սահմանում են մարդու իրավունքների՝ առանց խտրականության իրացվելու հնարավորությունը¹⁶: Պետք է նշել, որ դրանք վերաբերում են նաև անազատության մեջ պահվող անձանց:

Միջազգային իրավունքում խտրականությունը բնութագրվում է որպես ցանկացած տարբերակում, նախապատվություն կամ բացառում, որը հիմնված է կոնկրետ հանգամանքի վրա, և որը նպատակ ունի սահմանափակել անձի իրավունքների և ազատությունների ճանաչումը կամ իրացումը¹⁷: Այլ կերպ ասած՝ խտրականությունը նույնանման իրավիճակում գտնվող անհատների նկատմամբ տարբերակված վերաբերմունքն է առանց որևէ ողջամիտ կամ օբյեկտիվ հիմքի¹⁸:

Քրեակատարողական ոլորտը կարգավորող ներպետական օրենսդրությունը նույնպես պարունակում է խտրականությունն արգելող նորմեր: ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքը սահմանում են, որ պատիժը կատարելու և կալանքի տակ պահելու կարգն ու

¹⁵ՀՀ Սահմանադրություն, հոդված 29,

¹⁶Articles 1 (3) and 55 of the UN Charter, Article 7 of UNDR, Article 2,4 (1) and 26 of ICCPR, Article 2 of ICESCR, Article 2 of CRC, Article 14 of ECHR, Protocol No. 12 of the ECHR.

¹⁷HRC, General Comment No. 18, para. 7.

¹⁸ECtHR, Judgement of 23 July 1968, Case of Certain Aspects of the laws on the Use of Languages in Education in Belgium. *Willis v. United Kingdom*, no. 36042/97, § 48, ECHR 2002-IV, *VIRABYAN v. ARMENIA JUDGMENT*, no. 40094/05, 02/01/2013.

պայմանները տարածվում են բոլոր ազատագրկված անձանց վրա՝ անկախ նրանց ռասայից, մաշկի գույնից, սեռից, կրոնից, լեզվից, ազգային կամ սոցիալական ծագումից, ծնունդից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային կամ այլ դրույթունից¹⁹:

Պետք է նշել, որ խտրականությունից պաշտպանվող հատկանիշների՝ իրավական նորմերում նշված ցանկը համապարփակ չէ և կարող է ներառել անձանց անձնական և սոցիալական բնույթի այլ հատկանիշներ, որոնք նույնպես կարող են խտրականության թիրախ հանդիսանալ:

Այսպիսի հատկանիշներից են սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը:

Սեռական կողմնորոշումը բնութագրվում է որպես անհատի խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջությունը, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերությունները և/կամ հարաբերությունների ցանկությունը այլ անհատի հետ:

Գենդերային ինքնությունը անհատի իր իսկ գենդերի ընկալումն է և անհատական փորձը, որը կարող է համապատասխանել կամ չհամապատասխանել ծննդյան ժամանակ հաստատված սեռին: Այն սոցիալական ինքնության կատեգորիա է և վերաբերում է անհատի նույնականացմանը որպես տղամարդ, կին կամ այլ գենդեր²⁰:

Միջազգային իրավունքի համաձայն՝ սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը պետք է դիտարկվեն որպես անձնական և սոցիալական այլ բնույթի հանգամանքներ և հավասարաչափ պաշտպանվեն խտրականությունից, ինչպես սեռը, ռասան, հաշմանդամությունը: Մարդու իրավունքների պայմանագրերի վրա գործող մարմինները բազմիցս վերահաստատել են այս պնդումը՝ սահմանելով, որ գենդերային ինքնությունը և սեռական կողմնորոշումը ամբողջությամբ տեղավորվում են խտրականությունից պաշտպանվող հատկանիշների շարքում²¹:

Սեռական կողմնորոշման և գենդերային նույնականացման վերաբերյալ մարդու իրավունքների միջազգային իրավական նորմերի կիրառման Յոզյակարտյան սկզբունքների 9-րդ կետը սահմանում է, որ ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի նկատմամբ պետք է արժանապատվությունը հարգող վերաբերմունք ցուցաբերվի:

¹⁹ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 8, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելումասին» ՀՀ օրենք, հոդված 2, կետ 3,

²⁰ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆԵՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2020 Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ ՉԵԿՈՒՅՑ, «Փինք» իրավապաշտպան ՌԿ, Երևան, 2021թ. <https://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2021/08/lgbt-report-2020-hy.pdf>

²¹Identoba and Others v. Georgia, 2015, § 96), (Salgueiro da Silva Mouta v. Portugal, 1999, § 28; Fretté v. France, 2002, § 32. Vejdeland and Others v. Sweden, 2012, § 55, Committee Against Torture, General Comment No.2: Implementation of Article 2 by State parties, paras 21,22,

Սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը յուրաքանչյուր անձի արժանապատվության անբաժանելի մասն են կազմում²²: ՄԱԿ-ի Հատուկ կարիքներով դատապարտյալների վերաբերյալ ձեռնարկով սահմանվում է, որ նույնասեռական համարվող ազատագրված անձանց հիմնական կարիքը սեռական շահագործումից պաշտպանված լինելն է, ինչը հիմնականում հնարավոր է տեղի ունենա այլ դատապարտյալների կողմից: Ինչ վերաբերում է վերջիններիս նկատմամբ խտրական դրսևորումներին, ապա խնդրահարույց է դիտարկվում հատկապես իրավաբանական օգնություն տրամադրելու հարցը, քանզի գոյություն ունեցող խորը կարծրատիպերը խոչընդոտում են այս խումբ անձանց ապահովել պատշաճ իրավաբանական օգնությամբ²³:

Պետք է նշել, որ ՄԻԱԿ/ՁԻԱՀ ունեցող անձինք ևս պաշտպանվում են խտրականությունից միջազգային իրավունքի ներքո: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր նախադեպային որոշումներում սահմանել է, որ անձի առողջական կարգավիճակի հիմքով խտրականությունը, ինչպիսին ՄԻԱԿ վարակի առկայությունն է, պետք է պաշտպանվի խտրականությունից զերծ լինելու իրավունքի ներքո՝ կամ որպես հաշմանդամություն կամ որպես «այլ կարգավիճակ»²⁴: Դեռ ավելին՝ ՄԻԵԴ-ը փաստել է, որ ՄԻԱԿ ունեցող անձանց այլ դատապարտյալներից հիվանդության չտարածման պատրվակով առանձին և վատթար պայմաններում պահելը իրավաչափ չէ և խախտում է խտրականությունից և խոշտանգումներից, անմարդակային և նվաստացուցիչ վերաբերմունքից զերծ լինելու իրավունքները²⁵: Մյուս կողմից՝ ըստ ՄԻԵԴ պրակտիկայի՝ եթե տարբերակված վերաբերմունքը հետապնդում է «օրինական նպատակ», այն է՝ ապահովել ՄԻԱԿ վարակակիր ազատագրված անձանց ազատագրվման ավելի բարենպաստ պայմաններ՝ համեմատած այլ ազատագրված անձանց, պաշտպանել նրանց վարակիչ հիվանդություններից, նրանց ապահովել ավելի լավ սնունդ, ավելի երկար մարզումներ և մուտք դեպի սեփական խոհանոց և վազարան, կարող է օրինական համարվել և, հետևաբար, չի հանդիսանում անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք կամ խտրականություն²⁶:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն, վերանայելով թիվ (2006)2 հանձնարարականը Եվրոպական բանտային կանոնների վերաբերյալ, սահմանել է, որ

²²The Yogyakarta Principles on the Application of International Human Rights Law in relation to Sexual Orientation and Gender Identity,

²³UN Office on Drugs and Crime, Handbook on Prisoners with special needs, 2009:

²⁴*Kiyutin v. Russia*, 2011, § 57

²⁵*Martzaklis and Others v. Greece*

²⁶*Martzaklis and Others v. Greece*, 2015, 67-75.

բուժաշխատողը ազատագրված անձանց զննելիս պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի այն հանգամանքին, որ ՄԻԱՎ-դրական բանտարկյալները մեկուսացված չլինեն այլ բանտարկյալներից²⁷:

3.2. ԳՐՏ (գեյ, բիսեքսուալ, տրանս) անձանց իրավունքները ՔԿԳ-ներում

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատագրված անձինք նույնպես հասարակության մի մասն են կազմում, սակայն հասարակական կարծրատիպերի և նախապաշարմունքների պատճառով ենթարկվում են խարանի և խտրականության:

ՀՀ ԱՆ ՔԿԳ-ներում առավել խոցելի են ԳՐՏ (գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր) ազատագրված անձինք: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ բացի քրեակատարողական համակարգին հատուկ խնդիրներից, նրանք բախվում են խնդիրների իրենց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության պատճառով, ուստի և համարվում են առավել խարանված խումբ քրեակատարողական համակարգում:

Այս խմբի անձանց նկատմամբ խտրականության մասին խոսելիս նախ հարկ է անդրադառնալ նշված հասկացություններին:

Գեյերը նույնասեռական տղամարդիկ են, ովքեր խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունեն տղամարդու հետ:

Բիսեքսուալը անհատ է, որը զգացմունքային և/կամ սեռական գրավչություն ունի մեկից ավելի սեռերի/գենդերների նկատմամբ:

Տրանսը անձ է, ում գենդերային ինքնությունը և/կամ գենդերային արտահայտումը տարբերվում է ծննդյան պահին հաստատված սեռից և ներառում է տրանսսեքսուալ անցյալով կանանց և տղամարդկանց, տրանսսեքսուալ նույնականացող անձանց, տրանսգենդեր անձանց, հագուստափոխ անձանց և այլոց²⁸:

Դիտորդների խումբը տարիների ընթացքում արձանագրել է, որ այն քրեակատարողական հիմնարկներում, որտեղ պահվում են տղամարդիկ, ԳՐՏ անձանց

²⁷ Recommendation Rec(2006)2-rev of the Committee of Ministers to member States on the European Prison Rules, § 42.3, <https://rm.coe.int/09000016809ee581>

²⁸ ԼԳԲՏԱՆՁԱՆՑՄԱՐԴՈՒԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2020 թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԱՐԵԿԱԼՁԵԿՈՒՅՑ, "Փինք" իրավապաշտպան՝ Երևան, 2021թ.

նկատմամբ խտրական կամ վատ վերաբերմունքի, խոշտանգումների դրսևորման դեպքերը շարունակական և համակարգային բնույթ են կրում:

ԳԲՏ անձանց նկատմամբ խտրականության դրսևորումներին հսումբը պարբերաբար անդրադարձել է նախորդ տարեկան զեկույցներում և ընթացիկ հաշվետվություններում: 2021 թ. ընթացքում Խմբի կողմից արձանագրված փաստերը լրացուցիչ անգամ հավաստում են, որ քրեակատարողական հիմնարկներում շարունակվում է խոցելի խմբերի նկատմամբ տարբերակված վերաբերմունքը և խտրականությունը:

2021 թ. բազմաթիվ ահազանգեր են ստացվել ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող ԳԲՏ անձանցից, որոնք հիմնականում վերաբերել են պահման պայմաններին, առողջության հետ կապված խնդիրներին, այլ ազատազրկված անձանց և հիմնարկի վարչակազմի կողմից դրսևորվող խտրական վերաբերմունքին: Ահազանգերի հիման վրա կատարվել են այցեր, խնդիրներից որոշները տեղում լուծվել են, իսկ որոշների առթիվ ներկայացվել են գրություններ ՀՀ ԱՆ:

Թե՛ վարչակազմը, թե՛ այլ ազատազրկված անձինք ԳԲՏ անձանց անվանում են «արվամուլներ», «համասեռամուլներ», «շեղվածներ» կամ «գոմիկներ» և նրանց նկատմամբ դրսևորում արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք²⁹:

Նույնասեռական անձինք ներկայումս ևս քրեական ենթամշակույթի հիերարխիայում զբաղեցնում են ամենացածր դիրքը՝ անկախ այլ որակներից: Նույնասեռականներին են հավասարեցվում քրեական ենթամշակույթի կանոնները կոպտորեն խախտած դատապարտյալները՝ «թռածները»:

Քրեական ենթամշակույթում «նույնասեռականությունը» կարգավիճակ է, որը կարող է որևէ առնչություն չունենալ անձի սեռական կողմնորոշման հետ, իսկ «նույնասեռական» տերմինը խարան կամ պիտակ է, որով նվաստացնում և պատժում են այն անձանց, ովքեր կատարել են քրեական ենթամշակույթի կանոններով արգելվող կամ անընդունելի որևէ արարք:

Խումբը 2021 թ. այցելությունների ընթացքում արձանագրել է, որ նույնասեռական անձին չեն թույլատրել օգտվել տաքսոֆոնից՝ հեռախոսազանգ կատարելու համար:

«Արմավիր» ԶԿՀ այցելության ընթացքում արձանագրվել է, որ նույնասեռական անձանց համար կա առանձնացված տաքսոֆոն, որից այլ անձինք չեն օգտվում, իսկ այլ անձանց համար նախատեսված տաքսոֆոններից ԳԲՏ անձինք չեն կարող օգտվել: Այս հանգամանքը ևս մեկ անգամ փաստում է, որ ԳԲՏ անձանց համար իրերն առանձնացված են, և դրանցից այլ ազատազրկված անձինք չեն օգտվում:

²⁹ https://drive.google.com/file/d/1ZVgX-DbUdB5Sfj5tkcN42tFG5D_fr_fp/view

ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում շարունակում է լուրջ խնդիր մնալ նաև առանձնացված տարաներով սևնդի մատուցումը ԳԲՏ անձանց համար: «Արմավիր» և «Գորիս» ՔԿՀ-ներում խումբն արձանագրել է, որ սնունդը հիմնականում մատուցվում է մեկանգամյա օգտագործման տարաներով, կամ Նույնասեռական անձինք իրենց մոտ ունեն իրենց օգտագործման ամանները, որոնց մեջ լցվում է սնունդը: Արձանագրված փաստը լրացուցիչ անգամ հավաստում է քրեական ենթամշակույթի և առանձին խմբերի նկատմամբ տարբերակվող վերաբերմունքի առկայությունն ու ազդեցությունը տարբեր ոլորտներում, նույնիսկ սևնդի բաժանման հարցում:


«Արմավիր» ՔԿՀ այցելության ընթացքում արձանագրվել է նաև, որ հիմնարկում սանիտարահիգիենիկ աշխատանքները հիմնականում կատարում են ԳԲՏ անձինք: Նույնասեռական անձանց նկատմամբ վարչակազմի կողմից հնչեցվում են հայիոյանքներ, վիրավորական արտահայտություններ:

Նույնասեռական և նրանց հավասարեցված անձինք հիմնականում այլ ազատագրված անձանցից պահվում են առանձին խցերում, որոնք իրենց ոչ բարվոք վիճակով էականորեն տարբերվում են նույն քրեակատարողական հիմնարկների այլ խցերից:

ԳԲՏ անձանց խցային պայմանները



«Սևան» ՔԿՀ



«Գորիս» ԶԿՅ

ԳԲՏ անձինք հաճախ իրենց դիմումների հիման վրա են առանձին պահվում այլ դատապարտյալներից: Նրանք նշում են, որ դա արվում է իրենց կամքով և հանուն իրենց հարմարավետության և անվտանգության: ԶԿՅ վարչակազմը նույնպես հայտնում է, որ ԳԲՏ անձինք առանձին են պահվում իրենց ցանկությամբ, բացի այդ՝ դա արվում է նրանց անվտանգության համար:

«Գորիս» ԶԿՅ այցի ընթացքում արձանագրվել է, որ նույնասեռական և նրանց հավասարեցված անձանց ԶԿՅ տեղափոխելուց հետո միանգամից տեղավորել են նույնասեռական անձանց համար նախատեսված խցերում: Այնինչ վարչակազմը պնդում է, որ անձինք իրենց դիմումի հիման վրա են առանձնացել:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ ՄԻԵԴ-ը նման վերաբերմունքը որակում է որպես խտրականություն: Իքսն ընդդեմ Թուրքիայի գործով դիմողը նույնասեռական անձ էր, ով բանտում ավելի քան ութ ամիս լիովին մեկուսացված էր պահվում՝ այլ դատապարտյալներից պաշտպանվելու համար: Դատարանի համար համոզիչ չէր այն պատճառաբանությունը, որ դիմումատուին բանտային կյանքից ամբողջությամբ դուրս թողնելու գլխավոր պատճառը նրա ֆիզիկական անվտանգությունն ապահովելն էր: Նման գործելաոճի իրական պատճառը անձի նույնասեռականությունն էր: Որպես արդյունք՝ նշված որոշման մեջ դատարանը գտավ, որը դիմումատուն խտրականության է ենթարկվել իր սեռական կողմնորոշման հիմքով:

ԶԿՅ-ներում ազատագրված անձանց տեղաբաշխումը կատարվում է անձնագրային տվյալների հիման վրա: Այն գործում է նաև ազատագրված տրանս անձանց նկատմամբ, ինչը նշանակում է, որ անձնագրում սեռի նշումը փոխված չլինելու դեպքում տրանս

կանայք տեղաբաշխվում են տղամարդկանց, իսկ տրանս տղամարդիկ՝ կանանց քրեակատարողական հիմնարկներում:

Խումբն արձանագրել է, որ ԶԿՅ-ներից մեկում գտնվող տրանս անձը պահվում է բուժմասում առանձին՝ ելնելով իր անվտանգությունից: ԶԿՅ-ի պետը նշում է, որ տրանս կնոջ դեպքում չեն կարողանում հասկանալ, թե որտեղ պետք է կրի իր պատիժը, քանի որ «վերևն աղջիկ է, ներքևը՝ տղա»: Անձին այս կամ այն ԶԿՅ տեղավորելիս հաշվի են առնում միայն այդ անձի սեռական օրգանների առկայությունը՝ բաց թողնելով գենդերային ինքնության հարգման սկզբունքը:

Խմբի հարցումներին ի պատասխան՝ ՌԶ ԱՆ-ից պարզաբանել են, որ նույնասեռական անձանց հաշվառում չի իրականացվում: ԶԿՅ վարչակազմի կողմից նույնասեռական անձանց հաշվառում չիրականացնելը հիմնավորվում է ԳԲՏ անձանց չառանձնացնելու, չխտրականացնելու սկզբունքով: Ուստի խումբը ՌԶ ԶԿՅ-ներում պահվող ԳԲՏ անձանց թվի վերաբերյալ հստակ տեղեկատվություն չունի: Սակայն տվյալների բացակայությունը հանգեցնում է սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով դրսևորվող խոշտանգումների, խտրականության և վատ վերաբերմունքի վերաբերյալ վիճակագրության բացակայության, որի հետևանքով ԳԲՏ անձանց հիմնախնդիրները մնում են անտեսված և չլուծված:

Կարող ենք փաստել, որ ՌԶ քրեակատարողական հիմնարկներում գործող պրակտիկան՝ ԳԲՏ անձանց մյուս ազատազրկվածներից առանձին պահելու մասով, քողարկվում է նրանց անվտանգությունն ապահովելու պատրվակով, սակայն իրականում խտրականության դրսևորում է և ավելի է նպաստում ԳԲՏ անձանց նկատմամբ տարբերակված վերաբերմունքի և խարանի խորացմանը:

Իսկ ԶԿՅ-ներում նույնասեռական և նրանց հավասարեցված անձանց նկատմամբ դրսևորվող երևույթները վկայում են այն մասին, որ քրեակատարողական հիմնարկներում գերիշխում է քրեական ենթամշակույթը, նշված խմբին պատկանող անձանց նկատմամբ առկա է անհանդուրժող մթնոլորտ և նրանք ենթարկվում են խտրական վերաբերմունքի:

Խումբը բազմիցս է ՌԶ ԱՆ առաջարկություններով հանդես եկել՝ քրեական ենթամշակույթի դեմ պայքարը խստացնելու, ինչպես նաև մշակելու համապատասխան գործողությունների ծրագիր՝ քրեակատարողական հիմնարկներում խոցելի խմբերի նկատմամբ խտրական վերաբերմունքը բացառելու ուղղությամբ:

Առաջարկում ենք.

ա. նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ՝ սահմանելով խտրականության հասկացությունը, սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունն ուղղակիորեն նախատեսելով որպես խտրականությունից պաշտպանվող հատկանիշներ,

բ. քայլեր ձեռնարկել քրեակատարողական հիմնարկների աշխատակազմի շրջանում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վերաբերյալ տեղեկացվածությունը բարձրացնելու ուղղությամբ խտրականության վերաբերյալ կազմակերպել վերապատրաստման դասընթացներ՝ ներառելով սեռականության թեմաները,

գ. քայլեր ձեռնարկել ազատագրված անձանց շրջանում խտրականության վերացման ուղղությամբ՝ ներառելով սեռականության վերաբերյալ դասընթացներ,

դ. հաշվառել և վիճակագրություն վարել LQFS անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության խտրականությամբ զուգորդված բռնության, խոշտանգումների և այլ իրավախախտումների դեպքերի վերաբերյալ:

3.3. ՄԻԱՎ/ՁԻԱՅ ունեցող անձանց իրավունքները ՔԿԳ-ներում

ԶԿՅ-ում խտրական մթնոլորտը նկատվում է ինչպես նույնասեռական, սեռական բնույթի հանցագործություններ կատարած, այնպես էլ ՄԻԱՎ-դրական կարգավիճակ ունեցող անձանց նկատմամբ:

2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԱՆ ԶԿՅ-ներում պահվում է ՄԻԱՎ-դրական կարգավիճակ ունեցող 24 ազատագրված անձ: Վերջիններս ստանում են հակառետրովիրուսային (ՀՌՎ) բուժում: «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ բնակչության ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման և մոնիթորինգի նպատակով Հայաստանի Հանրապետությունում գործում է Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնը: ԶԿՅ-ներում բուժումն իրականացվում է «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ համագործակցությամբ:

Խումբն այցելությունների ընթացքում արձանագրել է ՄԻԱՎ-դրական կարգավիճակ ունեցող անձի նկատմամբ խտրականության, բժշկական գաղտնիքի խախտման դեպքեր: Մասնավորապես՝ պլանային այցերից մեկի ժամանակ նկատվել է տարբերակված վերաբերմունք ՁԻԱՅ ունեցող անձի նկատմամբ: Նախ՝ անձի կարգավիճակը բուժաշխատողի կողմից դիտորդներին անմիջապես բացահայտվել է՝ բուժական

հատվածի դիտարկման ընթացքում: Պետք է նշել, որ ՄԻԱՎ կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվությունը բժշկական գաղտնիք է, դրա մասին դիտորդներին, ինչպես նաև այլ անձանց, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, հայտնելը կոպիտ խախտում է³⁰: «Զրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ տվյալ ԶԿՅ-ի բժիշկների որոշմամբ անձին առանձնացրել են և շարունակաբար պահել բուժմասի ստացիոնար բուժման սենյակում: Բժիշկների կողմից խմբի դիտորդներին հայտնել են, որ անձը իր կարգավիճակի պատճառով չի կարող մյուսների հետ մնալ, շփման առարկաները նույնպես առանձնացվել են, և անձը մինչև ազատագրվման ժամկետի ավարտը պետք է առանձին մնա: Ընդ որում՝ որպես ստացիոնարում պահման հիմք՝ չի նշվում անձի ՁԻԱՅ կարգավիճակը, այլ նշվում են տարբեր այլ հիմքեր: Օրինակ՝ բժշկական փաստաթղթերում նշում են, որ անձին պարբերաբար տեղափոխում են խուց, այնուհետև բուժմաս, բայց իրականում նա միշտ պահվում է բուժմասի ստացիոնարում: Պետք է նշել, որ ԶԿՅ-ում գտնվող մյուս ազատագրված անձինք ևս տեղյակ էին տվյալ անձի կարգավիճակի մասին և խուսափում էին նրա հետ շփումից: Անձի հետ զրույցի ընթացքում վերջինս հայտնեց, որ ինքը մեկուսացված է իր ցանկությամբ: Ճիշտ է՝ կցանկանար պահվել այլ անձանց հետ, սակայն մեկուսացված լինելն իր համար ավելի հարմար է, այլ եղանակ չի տեսնում:

Ակնհայտ է, որ անձի նկատմամբ խտրականություն է դրսևորվում ելնելով իր կարգավիճակից: Ընդ որում՝ խտրականություն է դրսևորվում ոչ միայն ԶԿՅ-ի աշխատակիցների, ազատագրված մյուս անձանց, այլև բժիշկ-մասնագետների կողմից, որոնց կոչումը առողջական խնդիրներ ունեցող անձանց հետ աշխատելն է և պետք է որ բավարար գիտելիքներ ունենան ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիների վերաբերյալ: Մինչդեռ բուժական աշխատողի խոսքերն այն մասին, որ անձին առանձին պահելը և նրա սննդի և այլ պարագաներ առանձնացնելը պայմանավորված է հիգիենայով, խոսում է այն մասին, որ խտրականությունը պայմանավորված է գիտելիքների պակասով:

Մեկ այլ դեպքում անձին տեղափոխել են այլ ԶԿՅ՝ պայմանավորված իր կարգավիճակով: Մասնավորապես՝ «Նուբարաշեն» ԶԿՅ կատարած այցի ընթացքում Խումբն արձանագրել է, որ քանի որ խցերը նախատեսված են 8 հոգու համար, և այդ ծանրաբեռնվածության պայմաններում ՄԻԱՎ-դրական կարգավիճակ ունեցող անձի հետ ոչ ոք չի ցանկանում համատեղ մնալ, ուստի անձին բժշկական ցուցումով տեղափոխել են «Դատապարտյալների հիվանդանոց» ԶԿՅ:

³⁰ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=142602>

Առաջարկում ենք.

- քայլեր ձեռնարկել քրեակատարողական հիմնարկների աշխատակազմի, «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի և ազատազրկված անձանց շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի վերաբերյալ տեղեկացվածությունը բարձրացնելու ուղղությամբ,
- քայլեր ձեռնարկել ՄԻԱՎ/ՁԻԱՅ-դրական անձանց նկատմամբ խտրականությունը նվազեցնելու ուղղությամբ:

3.4. Օտարերկրյա ազատազրկված անձանց իրավունքները ՔԿԳ-ներում

2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԱՆ ՔԿԳ-ներում պահվում է թվով 114 օտարերկրյա քաղաքացի:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներ մուտք գործած օտարերկրացիներն ըստ վարչակազմի իրենց հասկանալի լեզվով հնարավորինս իրազեկվում են իրենց իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկի ներքին կանոնակարգի մասին:

Սակայն խումբը 2021թ.-ի դեկտեմբերի 24-ին «Արմավիր» ՔԿԳ կատարած այցի ընթացքում արձանագրել է, որ օտարերկրյա քաղաքացին ՔԿԳ-ում գտնվելու ընթացքում իր իրավունքների և պարտականությունների մասին պատշաճ չի իրազեկվել:

Խումբն արձանագրել է, որ օտարերկրյա քաղաքացիները հիմնականում չեն կարողանում հաղորդակցվել, չի ապահովվում թարգմանությունը: Այդ փաստը հաստատել է նաև ՀՀ արդարադատության նախարարությունը՝ խմբի հարցումներին ի պատասխան: ՀՀ ԱՆ մասնավորապես նշել է, որ հայերենին չտիրապետող ազատությունից զրկված օտարերկրացի անձանց հետ հաղորդակցության ընթացքում առաջանում են որոշ դժվարություններ: Այն է՝ թարգմանիչներ չլինելու պատճառով տարվող աշխատանքները լիարժեք չեն իրականացվում, ուստի, ներկայումս քայլեր են ձեռնարկվում՝ թարգմանիչների հետ կապված հարցի վերջնական և ինստիտուցիոնալ լուծման ուղղությամբ:

Խումբը նաև արձանագրել է, որ օտարերկրացիների հետ մասնագիտական աշխատանքի կազմակերպումն իրականանում է ոչ թե թարգմանիչ մասնակցությամբ, այլ ՔԿԳ-ում այդ լեզվին տիրապետող մեկ այլ դատապարտյալի/կալանավորի օգնությամբ, ինչն իր հերթին ունի մի շարք էթիկական խնդիրներ:

ՀՀ արդարադատության նախարարությունից խմբի հարցմանն ի պատասխան հայտնել են, որ մշտապես քայլեր են ձեռնարկվում ԶԿՀ-ների գրադարաններն օտարալեզու գրականությամբ համալրելու ուղղությամբ: Այն իրականացվում է ՀՀ-ում օտարերկրյա պետությունների դեսպանատների և հյուպատոսական ծառայությունների հետ համագործակցությամբ: Մինևույն ժամանակ տեղեկացրել են, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների գրադարանները որոշ չափով համալրված են ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, վրացերեն, պարսկերեն և արաբերեն գրականությամբ:

Անդրադարձ կատարելով կրոնի ազատության իրավունքն իրացնելու պայմաններին՝ ՀՀ արդարադատության նախարարությունից և ԶԿՀ վարչակազմից հայտնել են, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում ապահովվում է ազատությունից զրկված օտարերկրացիների մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը: ՀՀ ԱՆ-ից նաև տեղեկացրել են, որ անհրաժեշտության դեպքում հրավիրվում են հոգևորականներ, ինչպես նաև ազատությունից զրկված օտարերկրացիները դիմում են ՀՀ ԱՆ համապատասխան քրեակատարողական հիմնարկի վարչակազմին՝ կրոնական ծիսակատարությունների կազմակերպման նպատակով, իսկ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկի վարչակազմը սահմանված կարգով աջակցում է համապատասխան տարածքների և անհրաժեշտ պարագաների տրամադրման հարցում: Սակայն խումբն այցելությունների ընթացքում արձանագրել է, որ օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև այլ կրոնական համոզմունք ունեցող անձանց համար աղոթքի վայրեր նախատեսված չեն: Վերջիններս կամ այցելում են հիմնարկի հայկական եկեղեցի կամ իրենց աղոթքը կատարում են խցերում:

Առաջարկում ենք.

- օտարերկրյա քաղաքացիների համար ապահովել իրենց իրավունքներին և պարտականություններին պատշաճ ծանոթացում,
- ապահովել պատշաճ թարգմանություն,
- ապահովել այլ կրոնական դավանանք ունեցող անձանց աղոթքի համար առանձին վայր:


3.5. Կանանց և անչափահասների իրավունքները «Աբովյան» ՔԿԳ-ում

Կանայք սովորաբար բանտարկյալների շրջանում փոքր մաս են կազմում, սակայն կարևոր է հաշվի առնել նրանց բնորոշող և տղամարդկանցից տարբերվող առանձնահուկ կարիքներն ու խոցելիության գործոնները: Առավել խոցելի և սակավաթիվ լինելու պատճառով հաճախ ազատագրված կանանց նկատմամբ ուշադրությունն ու վերաբերմունքը նվազ է լինում: Նաև այն փաստը, որ բանտային կանոններն ու պայմաններն ի սկզբանե ձևավորվել են արական սեռի ներկայացուցիչներին համապատասխան, հաճախ առաջացնում են անհարմարավետություններ կանանց համար: Բացառություն չէ նաև «Աբովյան» քրեակատարողական հիմնարկը, որը կառուցվել է 1957 թվականին և նախատեսված է եղել անչափահաս դատապարտյալների համար՝ ճարտարապետաշինարարական ընդհանուր կանոններով և կանանց առանձնահատկություններից բխող հարմարեցված պայմանների բացակայությամբ:

Պահման պայմաններ, պատշաճ կացարան

Դիտորդների խումբը 2021 թվականի մշտադիտարկման արդյունքում դիտարկել է

Աբովյան ՔԿԳ-ում կանանց թվի վերաբերյալ ինֆոգրաֆիկա



«Աբովյան» քրեակատարողական հիմնարկի մեկուսարանի մասնաշենքը, որտեղ պահվում են կալանավորված կանայք, փակ ուղղիչ հիմնարկ տեղաբաշխված ազատագրված դատապարտված կանայք, ինչպես նաև կալանավորված և դատապարտված անչափահասներ, կանանց տեղամասը, որը կացարանային տիպի երկհարկ շինություն է, ինչպես նաև պատժախցերն ու կարանտինային

հատվածը:

Խումբն իր ամենամյա զեկույցներում մշտապես արձանագրել է, որ մեկուսարանի մասնաշենքը գտնվում է անմխիթար վիճակում՝ խոնավ է, թե՛ խցերում, թե՛ միջանցքների պատերին առկա են պատի քայքայումներ և խոնավության հետևանքով առաջացած

բորբոսի հետքեր³¹: Սակայն այն, ինչին 2021 թվականի պլանային այցելության ընթացքում ականատես եղավ Խումբը, վատթարագույնն էր, ինչի վերաբերյալ ահազանգեց թե՛ ՀՀ արդարադատության նախարարությանը, թե՛ հանդես եկավ հանրայնորեն՝ ասուլիսների ու հարցազրույցների տեսքով³²:

Մասնավորապես, Խումբն արձանագրել է, որ կալանավորված և խցային պայմաններում պահվող անձանց համար նախատեսված մասնաշենքը (մեկուսարանի շենք) պիտանի չէ բնակության համար, և նման պայմաններում անձանց պահելը անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դրսևորում է, իսկ տևական ժամանակ այդ պայմաններում բնակվելը հավասարազոր է խոշտանգման³³:

Պլանային այցելության ժամանակ «Աբովյան» ԶԿՀ-ում պահվող անձանց թիվը 70 էր, որից 15 կին գտնվում էր կացարանային հատվածում՝ կիսաբաց ռեժիմում, 4 կին՝ բաց ռեժիմում, 5 տղա անչափահաս: Համեմատության համար նշենք, որ 2020 թվականին ազատագրված կանանց թիվը 52 էր³⁴, իսկ 2019 թվականին՝ 75³⁵:



2021 թվականին փաստացի նկատվում է ազատագրված կանանց թվաքանակի ավելացում՝ համեմատ 2020 թվականի: Այդ թվում 46 կին, որոնց մեծամասնությունը կալանավորված է, ինչպես նաև 5 կալանավորված անչափահաս տղա, պահվում են մեկուսարանի մասնաշենքում: Կացարանային հատվածում համեմատաբար առավել բարվոք շենքային պայմաններում բնակվող միայն 7 կին կար:

Մեկուսարանի շենքն ուղղակի բնակության համար պիտանի չէ, այս պայմաններն անմարդկային են: Այդ մասնաշենքում պարբերաբար եղել և շարունակվում են ջրամատակարարման ու ջրահեռացման հետ կապված խնդիրներ, որոնք նույնիսկ

³¹<https://bit.ly/3dh0Qrw>

³²<https://bit.ly/3AdMkKi>

³³<http://pmg.am/hy/news/successful-cases/2021-12-08-17-50-28>

³⁴<https://bit.ly/3dh0Qrw>

³⁵<https://bit.ly/3JLDS7X>




մասնակի նորոգումից հետո չեն լուծվում: 2021 թվականի նոյեմբերին տեղի ունեցած հերթական վթարի արդյունքում շենքում ստեղծվել էր անընդունելի իրավիճակ:

Խմբի դիտարկման պահին շենքի առաջին հարկում պատերն ու առաստաղը թաց էին և այնպիսի խոնավության ու գոլորշու միջավայր էր, որ

հնարավոր չէր նույնիսկ կես ժամ դիմանալ այդ միջավայրում:

Նշենք, որ առաջին հարկում են տեղակայված կարանտինային խցերը, ինչպես նաև ԶԿՅ աշխատակազմի սենյակները՝ բոլորը ծայրահեղ անմխիթար վիճակում: Կարանտինային խցում և կողքի խցում, որտեղ կալանավորված կանայք կային, թաց էր նաև հատակը. կալանավորված կնոջ հավաստմամբ՝ ամբողջ գիշեր չորացրել էր հատակը, որ հնարավոր լիներ այդ խցում գտնվել:

Անմխիթար վիճակում էր նաև «Աբովյան» ԶԿՅ-ի առաջին հարկում տեղակայված բժիշկների սենյակը, որտեղ խոնավությունն ու առաստաղի ներկաշերտի թափված, խոնավությունից առաստաղի բացված վիճակը կարող էր նույնիսկ դեղորայքի որակի վրա ազդել, քանի որ դեղորայքը գտնվում էր անմիջապես խոնավ առաստաղի տակ տեղադրված պահարանում:



«Աբովյան» ԶԿՅ-ի խցային


պայմաններում բնակվող անձանց համար նախատեսված մասնաշենքում արձանագրված անմարդկային պայմանների վերաբերյալ ԽՈՒՄԲԸ 2021 թվականի նոյեմբերի 11-ի N 21-55 հրատապ հաշվետվությամբ ահազանգել է ՀՀ արդարադատության նախարարությանը, որին ի պատասխան՝ նախարարությունն արձագանքել է հետևյալ կերպ.

ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկը հիմնադրվել է 1958 թվականին, իսկ շենք-շինությունները շահագործման են հանձնվել 1958-1973 թվականներին: Հիմնարկում կապիտալ վերանորոգման աշխատանքներ չեն իրականացվել:

ՀՀ պետական բյուջեով հատկացված համապատասխան ֆինանսական միջոցների շրջանակներում իրականացվել են բոլոր հնարավոր միջոցառումները՝ Հիմնարկի կոմունալ կենցաղային պայմանները բարելավելու, ինչպես նաև Հիմնարկի անվտանգ և անխափան շահագործումն ապահովելու նպատակով:

Այս համատեքստում հարկ է նշել, որ 2018 թվականի դեկտեմբերի 15-ին կազմվել են Հիմնարկի արտաքին և ներքին կոյուղու ցանցի, ներքին ջրամատակարարման ցանցի, սանհանգույցների, բաղնիքների և խոհանոցների վերանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:

2019 թվականի հոկտեմբերի 25-ին նշված նախագծից իրականացվել է Հիմնարկի արտաքին ջրահեռացման համակարգի վերանորոգումը: Նախագծում մնացած աշխատանքների կատարման նպատակով 2019 թվականի դեկտեմբերին անցկացվել էր նախնական մրցույթ, որի տեխնիկական առաջադրանքի համաձայն՝ իրականացվելու էր Հիմնարկի բոլոր



մասնաշենքերի լոգարանների և սանհանգույցների, ներքին ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի վերանորոգման աշխատանքներ, սակայն ֆինանսական միջոցների բացակայության պատճառով 2020 թվականին պայմանագիրը լուծարվեց:

Այսպիսով, Հիմնարկում առկա շինարարական աշխատանքները լիարժեք կատարելու նպատակով անհրաժեշտ են խոշոր ֆինանսական ներդրումներ:

Այս համատեքստում ՀՀ արդարադատության նախարարությունը 2022 թվականի բյուջետային հայտով նախատեսել էր ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությանը ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում լայնածավալ շինարարական աշխատանքներ իրականացնելու նպատակով տրամադրել համապատասխան ֆինանսական միջոցներ, ըստ այդմ 2022 թվականին նախատեսվում է վերանորոգել նաև Հիմնարկը:



Հղի կամ իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող կանայք

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբը, 2021 թվականին դիտարկելով հղի և իրենց մոտ մինչև 3 տարեկան երեխա ունեցող կանանց իրավունքները, արձանագրել է բազմաթիվ խնդիրներ: Նշենք, որ տարախներ շարունակ «Աբովյան» ԶԿՀ-ում հղի կին չի եղել: 2021 թվականին կալանավորված հղի կին է եղել, ով, ի դեպ, ողջ հղիության ընթացքում պահվել է վերոնշյալ մասնաշենքում, որտեղ խմբի կողմից գրանցվել են խիստ մտահոգիչ պայմաններ:

Նախորդ տարվա համեմատ մեծացել է նաև իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող կանանց թիվը, որոնցից երկուսը գտնվել են կալանքի տակ: Ծննդաբերությունից 2 ամիս անց խմբի անդամները տեսակցել են կալանավորված անձ Ն.Ն.-ին և նրա 2 ամսական երեխային, ով ծնվել է այն ժամանակահատվածում, երբ կինը գտնվել է անազատության մեջ: Դիտարկման արդյունքում պարզվել է, որ երեխան շարունակ

ջերմում և փսխում է: Ըստ կալանավորված անձ Ն.Ն-ի խոսքերի՝ երեխան, որպես հավելյալ սնունդ ստանում է միայն կաթ, չի տրամադրվում մանկական թեյ: Բացի այդ, դժվարություններ են առաջանում երեխային խցային պայմաններում պահելու հետ կապված: Մեկուսարանը օդափոխության համակարգ չունի, խցի միայն փոքր պատուհանն է բացվում:

Խցային պայմաններում բնակվող Մ.Ա-ն, որն իր մոտ ուներ 2 տարեկան երեխա, Խմբի անդամների հետ զրուցելիս ևս բարձրացրել է խցի անհարմարավետության հարցը, նաև նշել 2-ամյա երեխայի համար զբաղվածության և ժամանցի ապահովման խնդիրներ: Երեխան ձանձրանում և չի կարողանում զբաղվուք գտնել, ինչն ազդում է նրա զարգացման վրա:

Կան խնդիրներ կապված զբոսանքի կազմակերպման հետ, որը, ըստ կալանքի տակ գտնվող նորածին երեխա ունեցող Ն.Ն.-ի, տրամադրվում է օրը 2 ժամ, իսկ երեխան վատառողջ է, և բժիշկը ևս ցուցել է մաքուր օդին հաճախ զբոսնել:

Բացի այդ, թույլատրվում է միայն եփված սնունդ ստանալ հանձնուքի տեսքով: Այդ սնունդը երեք օրից ավել պահել հնարավոր չէ, քանի որ խցի սառնարանը փոքր է, իսկ հիմնարկի սառնարանում շատ սնունդ պահել չեն կարող, քանի որ ընդհանուր է:

Լոգանքը շաբաթական 1 անգամ է տրամադրվում: Իրենք խցում թեյնիկով ջուր են տաքացնում և անհրաժեշտության դեպքում լողանում: Երեխայի լոգանքը ևս այդպես է կազմակերպվում:

Լվացքը կազմակերպելը ևս դժվար է: Մեկուսարանի լվացքի մեքենայով լվանում են միայն սպիտակեղենը, իսկ իրենց, այդ թվում նաև երեխաների հագուստը լվանում են ձեռքով (մինչդեռ տղամարդկանց համար նախատեսված ԶԿՅ-ներում լվացքը



կազմակերպվում է շաբաթը մեկ անգամ՝ նախատեսված թե՛ սպիտակեղենի, թե՛ արտահագուստի համար): Չկա չորացնելու հնարավորություն. ամռանը չորացնում են դրսում, իսկ ձմռանը շորերը չորացնելը խնդիր է (ի տարբերություն տղամարդկանց համար նախատեսված ԶԿՅ-ների, որտեղ լվացքատանը կից առկա են չորանոցներ):

Հիմնարկը մանկական դեղեր չի ստանում: Էսպումիզան, Բորոտիկ, ջերմիջեցնող դեղամիջոցներ, որոնք կանայք ձեռք են բերում սեփական միջոցների հաշվին:

Համաձայն ՀՀ Կառավարության 2006թ. օգոստոսի 3-ի N1543-Ն որոշուման ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգի 16-րդ կետի երկրորդ պարբերության համաձայն՝ անչափահասները, հղի կամ իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձինք կարող են տեղավորվել իրենց վիճակի առանձնահատկություններին համապատասխան պայմաններ ունեցող խցերում կամ կացարաններում:

79-րդ կետի համաձայն՝ հղի կամ իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող կալանավորված անձինք և դատապարտյալները կալանավորվածներին պահելու վայրում կամ ուղղիչ հիմնարկում տեղավորվում են այնպես, որպեսզի հնարավորինս նվազագույնի հասցվի այլ կալանավորված անձանց կամ դատապարտյալների հետ շփումը: Հղի կամ իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող կալանավորված անձանց և դատապարտյալների համար նախատեսված խցերում կամ կացարաններում տեղադրվում են միահարկ մահճակալներ, յուրաքանչյուր երեխայի տրվում է մանկական մահճակալ, իսկ խցերը կամ կացարաններն ապահովվում են տաք ջրով:

81-րդ կետի համաձայն՝ հղի կանայք կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձինք սննդով և այլ պարագաներով ապահովվում են սահմանված չափաբաժնով: Բացի այդ, պետք է ապահովվի մանկական սնունդ՝ առողջապահության համակարգի մանկական հաստատություններում գտնվող համապատասխան տարիքի երեխաների համար նախատեսված նորմերով: Մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձինք ստանում են երեխայի խնամքի համար անհրաժեշտ պարագաներ:

82-րդ կետի համաձայն՝ երեխա ունեցող անձանց համար պետք է հատկացված լինի զբոսանքի համար նախատեսված՝ կանաչապատված կամ խաղահրապարակ ունեցող բակ:

Փաստացի պատշաճ կացարանի և տաք ջրի հասանելիության հարցը լուծված չէ, ինչը մտահոգիչ է, և անմիջական ազդեցություն է ունենում այդ պայմաններում ապրող երեխաների խնամքի վրա: Լուծված չէ նաև մոր հետ բնակվող մինչև 3 տարեկան երեխաների սննդի և դեղորայքի ապահովման հարցը, ինչի կապակցությամբ Խմբի կողմից ՀՀ արդարադատության նախարարությանն ուղակվել է գրություն: Պատասխան գրությամբ ՀՀ արդարադատության նախարարությունից նշել են, որ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում գտնվող մանկահասակ երկու երեխաների մոտ առողջական խնդիրների հենքով՝ բժշկի ցուցումով, ինչպես նաև ծնողների

համաձայնությամբ, սնունդը տրամադրվել է «Մայակովսկու առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի մանկաբույժի կողմից տրամադրված սննդամթերքի ցանկին համապատասխան: Բացի այդ, լրացուցիչ տրամադրվել են նաև «Hip» տեսակի մրգային, բանջարեղենային մանկական այուրեններ և շիլաներ: Ըստ ՀՀ ԱՆ գրության, երկուսուկես տարեկան երեխային, ծնողի ցանկությամբ, տրամադրվում է մեծահասակի սնունդ, ինչպես նաև լրացուցիչ տրամադրվում են կաթնամթերք և մրգեր: Մանկահասակ երեխաներին հացը տրամադրվում է ըստ պահանջի՝ ծնողի ցանկությամբ: Մանկահասակ երեխաներն ապահովված են հավելյալ սնունդով, ծնողների ցանկությամբ թեյի փոխարեն տրամադրվում է կաթ և հյութ:

Միաժամանակ, ՀՀ ԱՆ գրության մեջ նշվում է, որ նախարարության կողմից իրականացվում են վերլուծական աշխատանքներ՝ ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված սննդի չափաքանակների և տրամադրվող սննդի չափաքանակների միջև հարմոնիզացիա ապահովելու ուղղությամբ:

Ինչ վերաբերում է մինչև 3 տարեկան երեխաների լոգանքի կազմակերպմանը՝ ՀՀ ԱՆ-ից պատասխան գրությամբ խմբին տեղեկացրել են, որ «Աբովյան» ԶԿՀ-ում պահվող մինչև երեք տարեկան մանկահասակ երեխայի լոգանքը տրամադրվում է ծնողի ցանկությամբ՝ խցում կամ տեղամասի բաղնիքում: Միաժամանակ ընդգծել են, որ ազատությունից զրկված անձանց հավելյալ լոգանքի տրամադրումը կախված է հավելյալ ջրի, գազի և էլեկտրաէներգիայի ծախսերի հետ, իսկ խնդրո առարկա ռեսուրսների գերծախսը կհանգեցնի ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 16-ի N 896-Ա որոշմամբ նախատեսված նորմերի խախտման:


ՀՀ արդարադատության նախարարության առջև բարձրացվել է նաև մինչև 3 տարեկան երեխաների համար անհրաժեշտ դեղորայքի բացակայության հարցը, ինչին ի պատասխան՝ ՀՀ ԱՆ-ից նշել են, թե «Աբովյան» ԶԿՀ-ում գտնվում է երեք մանկահասակ երեխա, որոնք գրանցված են Հիմնարկին շատ մոտ գտնվող գյուղ Մայակովսկու պոլիկլինիկայում և հաշվառված են մանկաբույժի մոտ: Մանկահասակ երեխաներին դեղորայքի տրամադրումը կատարվում է նշված պոլիկլինիկայում, իսկ անհրաժեշտության դեպքում, մասնավորապես՝ մարմնի ջերմաստիճանի բարձրացման դեպքում, հրավիրվում է շտապ օգնություն, որը երեխաներին տեղափոխում է մասնագիտացված մանկական բժշկական հաստատություն:

ՀՀ ԱՆ-ից պատասխան գրությամբ խմբին նաև տեղեկացրել են, որ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի ստորաբաժանումներն իրենց գործունեությունը ծավալում են ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրված համապատասխան լիցենզիաների համաձայն: Ըստ այդմ, մանկական

ուղղվածությունն ունեցող դեղամիջոցներ ՊՈԱԿ-ը չի կարող ստանալ և տրամադրել ՊՈԱԿ-ի՝ Հիմնարկում տեղակայված ստորաբաժանմանը, քանի որ Ստորաբաժանումը, ինչպես նաև ՊՈԱԿ-ը չունեն ՋՋ առողջապահության նախարարության կողմից տրամադրված մանկական բժշկական օգնության տրամադրման համար լիցենզիա և համապատասխան մասնագետ: Ընդ որում, լիցենզիայի բացակայությունը պայմանավորված է նաև նրանով, որ ՊՈԱԿ-ի գործառույթը ԶԿՅ-ներում գտնվող կալանավորված անձանց և դատապարտյալների բժշկական օգնության և սպասարկման տրամադրումն է, իսկ նրանց հետ բնակվող մանկահասակ երեխաները չեն կարող դիտարկվել դրա ներքո: Այդուհանդերձ, ՋՋ ԱՆ-ից պատասխան գրությամբ խմբին տեղեկացրել են, որ Արդարադատության նախարարության կողմից ներկայումս դիտարկվում են հարցի հնարավոր լուծման տարբերակներ:

Կապն արտաքին աշխարհի հետ

2021 թվականի դիտարկման արդյունքում կանայք դարձյալ բարձրաձայնել են արտաքին աշխարհի հետ կապի և հատկապես իրենց երեխաների հետ շփման հարցը՝ մասնավորապես նշելով, որ հեռախոսակապը թանկ է, մեկ քարտի արժեքը 1.000 դրամ է, որը բավարարում է 15-20 րոպե հեռախոսագրույցին: Կանանցից մեկը, ով ունի երեք երեխա և փորձում է հնարավորինս հաճախ շփվել նրանց հետ, խմբին ասել է, որ դա ֆինանսապես մեծ բեռ է ընտանիքի համար, բայց չի ուսել հարազատների հետ, ինչպես նաև չտեղեկանալ երեխաներից, չի կարող: Մեկ այլ կալանքի տակ գտնվող կին ևս գտնում է,





որ հեռախոսակապից օգտվելու համար
նաժառենտսված ժամանակահատվածը քիչ
է և չի բավարարում երեխաների հետ
լիարժեք շփման համար:

Խմբի անդամները նաև դիտարկման
ընթացքում նկատել են, որ կանայք
օգտվում են միջանցքում տեղակայված
հեռախոսներից, որոնց հարևանությամբ
շատ մոտ կանգնած են լինում հերթապահ

աշխատակիցները: Փաստացի ամբողջ խոսակցությունը լսվում է միջանցքում
խախտելով անձի անձնական կյանքի իրավունքը: Հեռախոսագրույցը հաճախ լսելի է նաև
հեռախոսին մոտ գտնվող խցերում: Կանայք ստիպված են լինում օտար մարդկանց,
ինչպես նաև ԶԿՀ աշխատակից տղամարդկանց ներկայությամբ խոսել իրենց
երեխաների, ամուսինների, զուգընկերների հետ:

Խմբի անդամների հետ առանձնագրույցների ընթացքում անազատության մեջ
գտնվող կանայք բարձրացրել են նաև իրենց երեխաների հետ տեսակցության հարցը:

Մասնավորապես, կալանավորված անձ Մ.Ա.-ն ունի երկու երեխա: Նրանցից մեկը՝
երկու տարեկան երեխան, իր մոտ է, իսկ մյուսը՝ 4 տարեկանը, այլևս չի կարող իր հետ
գտնվել ԶԿՀ-ում, քանի որ օրենքի շրջանակներում մինչև 3 տարին լրացած երեխաներին
է միայն թույլատրվում լինել մոր կողքին: Մայրը նշում է, որ երեխաներն իրար հետ շատ
կապված են ու շատ կարոտում են միմյանց, իսկ տեսակցությունների քանակը լրացել է,
չեն կարողանում հանդիպել, միաժամանակ հեռախոսակապից օգտվելը մեծ բեռ է
ընտանիքի համար:

Խմբի կողմից բարձրացված ազատագրված կանանց՝ հեռախոսակապից օգտվելու
խնդրին ի պատասխան՝ ՀՀ ԱՆ-ից պատասխան գրությամբ տեղեկացրել են, որ
համաձայն Հիմնարկի պետի կողմից հաստատված ժամանակացույցի՝ կալանավորված
անձինք և դատապարտյալներն ամեն օր հնարավորություն ունեն մինչև 15 րոպե
տևողությամբ օգտվել հեռախոսակապից: Անհրաժեշտության դեպքում հեռախոսակապի
տևողությունը կարող է երկարաձգվել մինչև 10 րոպե: Ինչպես նաև հավելել են, որ ՀՀ
արդարադատության նախարարությունում քննարկման փուլում է ազատությունից
զրկված անձանց՝ պետության միջոցների հաշվին հեռախոսակապով ապահովելու
հնարավորության հարցը:

«Աբովյան» ՔԿԳ-ում գտնվող օտարերկրյա քաղաքացիություն ունեցող կանանց խնդիրները

2021 թվականի ընթացքում Խմբին ահազանգել են իրենց պատիժը Հայաստանում կրող օտարերկրյա քաղաքացիություն ունեցող կանայք, որոնք բարձրացրել են իրենց քաղաքացիության երկիր արտահանձնելու հարցը: ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում գտնվող օտարերկրյա քաղաքացիներ Ս. Ս. Ֆ. Ա.-ն և Ս. Ս. Հ.-ն, իրենց քաղաքացիության երկիր արտահանձնելու գործընթացի վերաբերյալ չեն կարողացել ստանալ պատշաճ տեղեկատվություն, մասամբ նաև լեզվական խնդիրների պատճառով:

Վերոգրյալի հիման վրա Խումբը դիմել է ՀՀ արդարադատության նախարարությանը, որին ի պատասխան հայտնել են, որ ՀՀ արդարադատության նախարարը՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև «Դատապարտյալների փոխանցման մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) դրույթներով, բավարարել է ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող դատապարտյալ Ս. Ս. Հ.-ի պատժի մնացած մասը կրելու նպատակով Իրանի Իսլամական Հանրապետություն փոխանցման վերաբերյալ դիմումը:

Հիմք ընդունելով վերոնշյալ Համաձայնագրի 10-րդ հոդվածը՝ ՀՀ արդարադատության նախարարությունը կից փաստաթղթերն ուղարկել է ՀՀ ԱՆ «Թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ 19.10.2021թ. Ն/11.1/13275-2021 գրությամբ՝ անգլերեն լեզվով պաշտոնական թարգմանություն ապահովելու համար: Թարգմանությունը ստանալուց հետո ՀՀ արդարադատության նախարարությունը նշյալ փաթեթը դիվանագիտական ուղիներով կներկայացնի ԻԻՀ իրավասու մարմնին՝ դատապարտյալի փոխանցման վերաբերյալ իրենց համաձայնությունը և անհրաժեշտ փաստաթղթերը ստանալու նպատակով: Դատապարտյալի փոխանցումը հնարավոր կլինի իրականացնել ԻԻՀ իրավասու մարմնի կողմից համաձայնությունը ստանալուց հետո:

Ինչ վերաբերում է ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող Պերուի Հանրապետության քաղաքացի հանդիսացող դատապարտյալ Ս.Ս Ֆ.Ա.-ի պատժի մնացած մասը կրելու նպատակով իր քաղաքացիության երկիր փոխանցման վերաբերյալ դիմումին՝ ՀՀ ԱՆ-ից պատասխան գրությամբ Խմբին տեղեկացրել են, որ այն բավարարվել է ՀՀ արդարադատության նախարարի կողմից բարի կամքի դրսևորմամբ, քանի որ Հայաստանի Հանրապետության և Պերուի Հանրապետության միջև բացակայում է դատապարտյալների փոխանցման ոլորտը կարգավորող որևէ երկկողմ կամ բազմակողմ միջազգային պայմանագիր:

Դատապարտյալի փոխանցումն իրականացնելու և օրը համաձայնեցնելու պատրաստակամության մասին ՀՀ արդարադատության նախարարությունը դիվանագիտական կապուղիներով տեղեկացրել է պերուական կողմին, իսկ 12.11.2021թ. /11.1/36836-2021 գրությամբ վերահաստատել է իր պատրաստակամությունը՝ խնդրելով հստակեցնել փոխանցման ժամկետները: Դատապարտյալի փոխանցումը հնարավոր կլինի իրականացնել պերուական կողմից արձագանք ստանալուց հետո:

Խումբը ՀՀ ԱՆ-ից ստացած պատասխանը փոխանցել է օտարերկրյա քաղաքացիություն ունեցող դատապարտյալ կանանց:

Վերոգրյալի հիման վրա, առաջարկում ենք.

- կազմակերպել մեկուսարանի մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքներ և այն համապատասխանեցնել կանանց առանձնահատկություններին:

- Վերանորոգման ընթացքում նախատեսել օդափոխության համակարգի անցկացում՝ ՔԿՀ մեկուսարանի մասնաշենքում:

- Վերանորոգման ընթացքում հաշվի առնել հղի կանանց և իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխաներ ունեցող կանանց առանձնահատկությունները և առանձնացնել ու պատշաճ կահավորել խուցը կամ կացարանը՝ հղի և իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող ազատությունից զրկված կանանց համար:

- Հատուկ պահանջներին համապատասխան խցերը կահավորել և սահնակագույցները հարմարեցնել հղի կանանց և մինչև երեք տարեկան երեխաների առանձնահատուկ պահանջներին՝ ապահովել տաք ջրով, զուգարանակոնքի և լոգանք ընդունելու, ինչպես նաև երեխայի լոգանքն ապահովելու հնարավորությամբ:

- Հղի կանանց և իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող կանանց համար նախատեսել առանձնացված խաղահրապարակ և կանաչապատ զբոսաբակ:

- Փոքրիկների համար նախատեսել իրենց տարիքին համապատասխան զարգացման համար անհրաժեշտ խաղեր և պարագաներ:

- Մինչև 3 տարեկան երեխաներին տրամադրել լրացուցիչ հավելյալ սնունդ:

- Ավելացնել երեխաների հետ բնակվող ազատագրված կանանց զբոսանքի ժամերը:

- Դիտարկել կանանց համար նախատեսված լոգանքի ժամերի ավելացման հարցը, հատկապես հոյի և կերակրող մայրերի պարագայում:

- Ստեղծել մինչև երեք տարեկան երեխաների լոգանքի կազմակերպման լրացուցիչ պայմաններ:

- Լուծումներ գտնել լվացքի կազմակերպման և չորացման համար, նախատեսել չորանոցներ:

- Ապահովել մինչև երեք տարեկան երեխաների դեղորայքի տրամադրման հնարավորությունը:

- Կանանց և անչափահասներին տրամադրել անվճար հեռախոսաքարտեր, ավելացնել հեռախոսակապից օգտվելու ժամերը և հաճախականությունը:

- Հեռախոսագրույցների համար հատկացնել համապատասխան առանձնացված տարածք՝ հեռախոսագրույցի գաղտնիությունն ապահովելու նպատակով:

- Ավելացնել անչափահաս երեխա ունեցող կանանց տեսակցությունների քանակն իրենց երեխաների հետ:

- Օտարերկրյա քաղաքացիություն ունեցող կանանց համար ապահովել թարգմանչի ծառայություն և պատշաճ տեղեկատվություն՝ իրենց վերաբերող փաստաթղթերի, ինչպես նաև իրենց քաղաքացիության երկիր տեղափոխելու գործընթացների վերաբերյալ:

4. ԱԶԱՏԱԳՐԿԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՍԱՆ

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ

Ներպետական կարգավորումների համաձայն՝ ազատագրված անձինք ունեն կրթություն ստանալու իրավունք, որի իրացման համար քրեակատարողական հիմնարկների վարչակազմը պարտավոր է համապատասխան պայմաններ և հնարավորություններ ստեղծել: Կրթությունը կարևոր նշանակություն ունի նաև ազատագրված անձանց վերասոցիալականացման կազմակերպման գործընթացում: Այն նպաստում է նրանց մասնագիտական կարողությունների բարելավմանը և անձնականաճին, բարձրացնում է աշխատանք գտնելու հավանականությունը: Բացի այդ, նպաստում է նրանց սոցիալական վերականգնմանը և հասարակության մեջ վերաինտեգրվելուն:

Կրթության իրավունքի իրացմանն ուղղված քայլերի ձեռնարկումը և մասնագիտական կրթության նոր ծրագրերի ներդրումն առանցքային նշանակություն ունեն ԶԶ արդարադատության համար: Այդ ուղղությամբ համապատասխան գործողություններ են նախատեսվել քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ. ռազմավարությամբ: Մասնավորապես, նախատեսվում է իրականացնել ազատագրված անձանց մասնագիտական կրթության կարիքների գնահատում և ըստ այդմ մշակել կրթական նոր ծրագրեր կամ փոփոխել առկա ծրագրերը:

Ըստ ԶԶ արդարադատության նախարարության տրամադրած տեղեկատվության՝ 2021թ. ընթացքում հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագիրն իրականացվել է «Աբովյան», Արմավիր», «Սևան» և «Նուբարաշեն» ԶԿԶ-ներում, որինմասնակցել է թվով 15 սովորող: Նրանցից 2-ն ավարտել են 12-րդ դասարանը և ստացել միջնակարգ կրթության ատեստատ և թվով 1 սովորող, ավարտելով 9-րդ դասարանը, ստացել է հիմնական կրթության վկայական: 2022թ. ծրագիրն իրականացվել է «Աբովյան» և «Նուբարաշեն» ԶԿԶ-ներում: Կրթությունը շարունակում է 8 սովորող:

Հայաստանում 12-ամյա միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթությունը պարտադիր է մինչև սովորողի 19 տարին լրանալը, եթե այդ իրավունքը չի իրացվել ավելի վաղ: Ըստ այդմ, «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ն իրականացնում է մինչև 19 տարեկան ազատագրված անձանց հանրակրթական ուսուցումը: Այսինքն՝ հանրակրթական ուսուցման մեջ ներառված չեն

բոլոր այն կալանավորված անձինք և դատապարտյալները, ովքեր ունեն հանրակրթություն ստանալու կարիք՝ անկախ տարիքից: Մինչդեռ ազատագրված անձանց շրջանում բազմաթիվ դեպքեր են արձանագրվում, երբ անձը 19 տարեկանից բարձր է, բայց ունի, օրինակ, 2-րդ կամ 5-րդ դասարանի կրթություն: Արդարադատության նախարարության տվյալներով՝ 2021թ. փետրվար ամսվա դրությամբ քրեակատարողական հիմնարկներում գտնվող թերի միջնակարգ կրթություն ունեցող դատապարտյալների և կալանավորված անձանց թիվը մոտ 300 է:

Խնդրի կարգավորման նպատակով ՀՀ արդարադատության նախարարությունը 2021թ. մշակել է «Կրթության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» և «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծերը, որոնցով նախատեսվում է հանրակրթություն ստանալու օրենսդրական երաշխիքներ սահմանել նաև 19 տարեկանը լրացած ազատագրված անձանց պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց համար՝ ապահովելով նրանց կրթության իրավունքի իրական և արդյունավետ իրացումը: Փոփոխություններն ուժի մեջ են մտել 2022թ. օգոստոսի 1-ից: Դատապարտյալները սեպտեմբերից հնարավորություն կունենան դիմելու և ընդգրկվելու կրթական պրոցեսում: Ծրագրի շահառու կղառնան այն դատապարտյալները, որոնք 1 տարի կամ ավելի պատիժ պետք է կրեն: 19 տարեկանից բարձր անձանց համար ավելի խտացված է լինելու ուսումնական ծրագիրը: Կրթությունն իրականացվելու է ինչպես առկա, այնպես էլ հեռավար եղանակներով:

«Արթիկ երեկոյան դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից «Արթիկ» ԶԿՀ-ում իրականացված հանրակրթական ծրագրում 2021-2022թթ. ուսումնական տարում ընդգրկվել է 22 անձ:

Սակայն շարունակում է խնդրահարույց մնալ այն, որ ազատագրված անչափահասների հանրակրթություն ստանալու գործընթացն ընդհատվում է, երբ նրանք, խափանման միջոցի կամ պատժատեսակի փոփոխմամբ դուրս գալով քրեակատարողական հիմնարկից, համայնքում դպրոց չեն հաճախում: Պատճառն այն է, որ առկա չեն համայնքում նրանց նկատմամբ հետևողականություն ցուցաբերելու, այն է՝ վերահսկողություն իրականացնելու կամ ուղղորդելու մեխանիզմներ:



Օրենսդրական կարգավորումների տեսանկյունից խնդիրներ չկան, որպեսզի դատապարտյալները, ՀՀ մյուս քաղաքացիների նման, բարձրագույն կամ հետբուհական կրթություն ստանան: Այս դեպքում խնդիրն այն է, որ նրանք գտնվում են փակ հաստատությունում, ինչը նշանակում է, որ հասարակությունից կտրված են: Դրանով պայմանավորված՝ խնդիրներ են առաջանում ուսումնական հաստատությունների հետ կապ հաստատելու տեսանկյունից: Բացի այդ, նրանք դժվարանում են վճարել ուսման վարձը: Քրեակատարողական հիմնարկներում աշխատանքի հարցը կարգավորված չէ: Եթե նույնիսկ դատապարտյալներն աշխատում են, ապա նվազագույն աշխատավարձ են ստանում, որով հնարավոր չէ հոգալ ուսման վարձը: Առկա են նաև տեխնիկական բնույթի խնդիրներ: Այս համատեքստում կարևոր է նշել հիմնարկների շենքային պայմանները, որոնք ուղղակիորեն ազդում են կրթության կազմակերպման որակի վրա: Օրինակ՝ եթե հիմնարկն ապահովված չէ օդափոխության համակարգով, նշանակում է, որ ուսումնական նպատակով հատկացված սենյակները ևս չեն օդափոխվում:

Այդ պատճառով քիչ է բարձրագույն կամ հետբուհական կրթություն ստացող ազատազրկված անձանց թիվը: Օրինակ՝ 2021թ. Եվրասիա միջազգային համալսարանի «Իրավագիտություն» ամբիոնի բակալավրի ծրագրով առցանց սովորել է «Նուբարաշեն» ԶԿՀ-ի 1 դատապարտյալ:

ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց զբաղվածության ապահովման, ազատ ժամանակի արդյունավետ օգտագործման, նոր գիտելիքների և աշխատանքային հմտությունների ուսուցման նպատակով մշտապես կազմակերպվում և իրականացվում են համապատասխան միջոցառումներ: Այդ միջոցառումները և կրթական ծրագրերն իրականացվում են ինչպես հեռավար (կորոնավիրուսային հիվանդության (Զովիդ-19) պատճառով), այնպես էլ՝ դեմ առ դեմ ձևաչափով:

«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի կենտրոն» ՊՈԱԿ-ը 2021թ. քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատությունից զրկված անձանց համար ՀՀ արդարադատության նախարարի «Իրավախախտում կատարած անձանց 2021 թվականի գեղագիտական դաստիարակության



և կրթության ուսումնական ծրագրի (մոդուլ) դասախոսությունների ու գործնական պարապմունքների ցանկերը հաստատելու մասին» N 22-Ա հրամանով հաստատված ծրագրով «Աբովյան», «Արմավիր», «Սևան», «Կոշ», «Նուբարաշեն» և «Երևան-Կենտրոն» ԶԿՅ-ներում և Պրոբացիայի ծառայությունում իրականացրել են դասընթացներ հետևյալ թեմաներով՝ «Հայոց լեզու և գրականություն», «Օտար լեզու (անգլերեն, ռուսերեն)», «Բիզնես գրագիտություն», «Համակարգչային հմտություններ», «Դեկորատիվ կիրառական արվեստ (խեցեգործություն, գծանկար, գծագրություն, մանրանկարչություն, կոլաժ, վիտրաժ)», «Հայագիտություն և մշակույթ», «Վարսավիրական հմտություններ», «Ընտանեկան բռնության կանխարգելում (հույզերի կառավարում)»: Միջոցառման մեջ ներգրավված անձանց ընդհանուր թիվը կազմել է 160 անձ, որից ավարտական հավաստագիր է ստացել 83 մասնակից, իսկ մասնակցության վկայագիր՝ 7 մասնակից:

ՊՈԱԿ-ի կողմից «Աբովյան» ԶԿՅ-ում իրականացված «Վարսավիրական հմտություններ», «Հայոց լեզու և գրականություն», «Ընտանեկան բռնությունների կանխարգելում և հույզերի կառավարում», «Անգլերեն լեզվի» դասընթացներին ընդգրկվել է 15 կին դատապարտյալ:

2021թ. ապրիլ ամսից Հայաստանի շախմատի ֆեդերացիան «Նուբարաշեն» ԶԿՅ-ում իրականացրել է առցանց կրթական ծրագիր՝ շախմատի ուսուցում, որին մասնակցել է 12 անձ: «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամի «Ջերմատնային մշակաբույսերի մշակություն և կառավարում» առցանց դասընթացին մասնակցել է «Նուբարաշեն» ԶԿՅ-ի 1 դատապարտյալ: «Արմավիր» ԶԿՅ-ում «Ինստիտյուտ Ռոբոտիքս» ՓԲԸ-ի կողմից իրականացվող SS ոլորտի ժամանակակից գիտելիքներ և քաղաքացիական մասնագիտություն ստանալու դասընթացներում ընդգրկվել է 35 անձ: «Արմավիր» ԶԿՅ-ում Մետրո միջազգային գեղեցկության ակադեմիայի կողմից իրականացված վարսավիրական դասընթացին մասնակցել է 1 դատապարտյալ, ստացել է վկայական: Իսկ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում 1 դատապարտյալ հեռավար մասնակցել է ծրագրավորման դասընթացների և այլն:



Ինչպես տեսնում ենք, ազատագրված անձանց մասնագիտական ուսուցումը կազմակերպելու ուղղությամբ նույնպես քայլեր ձեռնարկվում են, սակայն նշված դասընթացները ոչ բոլոր քրեակատարողական հիմնարկներում են կազմակերպվում:



Բացի այդ, մտահոգության տեղիք է տալիս այն, որ մասնագիտական ուսուցման դասընթացները պարբերական և շարունակական բնույթ չեն կրում: Հասարակական կազմակերպությունները դասընթացները կազմակերպում են դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում, որոնց ավարտից հետո համապատասխան ֆինանսավորում չեն ունենում՝ դրանց պարբերականությունը և շարունակականությունն ապահովելու համար: Մյուս կողմից էլ ազատագրվածանձինք չեն կարողմեկհիմնարկումանկասած մասնագիտական ուսուցումը շարունակելայլիհիմնարկում, քանի որ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն»-ի կողմից դասընթացները ոչ բոլոր հիմնարկներում են կազմակերպվում: Այսինքն՝ ինչպես ազատագրվելուց, այնպես էլ մեկ հիմնարկից մեկ այլ հիմնարկ տեղափոխվելուց հետո անձը զրկվում է մասնագիտական ուսուցում ստանալու հնարավորությունից:

5.ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ազատությունից զրկված անձանց աշխատանքով ապահովելը նպաստավոր ազդեցություն է ունենում դատապարտյալների միջանձնային հարաբերությունների հանդարտ ընթացքի, կարգապահության, անազատության մեջ գտնվող անձանց վերասոցիալականացման և հետագայում հասարակության մեջ վերաինտեգրման համար:

Խմբի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում³⁶ պարզ դարձավ, որ 2021թ.ընթացքում քրեակատարողական հիմնարկներում պահվող **398 դատապարտյալ** ընդգրկված է եղել քրեակատարողական հիմնարկների տարաբնույթ աշխատանքներում: Կերոնշյալ դատապարտյալներից վարձատրվող աշխատանքներում ներգրավված է եղել **255 անձ**, իսկ չվարձատրվող աշխատանքներում՝ **143 անձ**, **թափուր է եղել**

Հ/Հ	ՔԿՀ անվանումը	Տեխնիկատնտեսական վարձատրվող	Չվարձատրվող	Հիմնադրամ	Այլ գործատու	Թափուր
1.	«Նուբարաշեն»	6	11	7	2	28
2.	«Գորիս»	5	2	-	-	4
3.	«Աբովյան»	26	20	5	4	1.25
4.	«Վարդաշեն»	17	5	-	48	7
5.	«Սևան»	9	20	-	-	11
6.	«Դատապարտյալների հիվանդանոց»	6	2	7	-	4
7.	«Վանաձոր»	8	20	3	-	3
8.	«Կոշ»	15	9	-	-	9
9.	«Արթիկ»	18	14	3	2	0
10.	«Հրազդան»	4	7	2	-	3
11.	«Երևան-Կենտրոն»	-	-	-	-	-
12.	«Արմավիր»	33	33	23	2	16
	Ընդհանուր	147	143	50	58	86.25

86.25 հաստիքային միավոր:

Չվարձատրվող աշխատանքի հասկացությունը ըստ ԱՆ-ի

³⁶Հիմք՝ ԱՆ № /12.0.1/7417-2022 պատասխան գրությունը

Որոշ դատապարտյալներ, իրենց դիմումի համաձայն, որոշակի աշխատանքներ կատարում են առանց վարձատրության, ովքեր թեև հաշվառվում են որպես աշխատող դատապարտյալ, սակայն նրանց հետ պայմանագիր չի կնքվում: Դատապարտյալները չվարձատրվող աշխատանքներում ընդգրկվում են հանգստյան ժամերից դուրս՝ օրական առավելագույնը երկու ժամ՝ համապատասխան քրեակատարողական հիմնարկի պետի որոշման:

Ըստ դիտորդական խմբի ուսումնասիրությունների՝ չվարձատրվող աշխատանքներում ներգրավված անձանց իրավունքները հաճախ խախտվում են և չի պահպանվում նախարարության կողմից սահմանված օրական 2 ժամյա աշխատանքի պայմանը: Չվարձատրվող այդ աշխատանքի մի մասը, որը սովորաբար լինում է ՔԿՅ-ի ամենակեղտոտ աշխատանքը, կատարում են տվյալ ՔԿՅ-ում պատիժ կրող նույնասեռականները, այնինչ 2021թ. առկա են եղել թափուր հաստիքներ:

Տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքի նկարագրությունը ըստ ԱՆ-ի

Քրեակատարողական հիմնարկների տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում ընդգրկված դատապարտյալները կատարում են հետևյալ աշխատանքները՝ բանվորություն, շինարարություն, հանձնուքի տեղափոխում, սննդի բաշխում, լվացքատան սպասարկում, մաքրություն և այլն: Վարձատրությունը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված նվազագույն աշխատավարձի չափով:

Դիտորդական խմբի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քրեակատարողական հիմնարկներում տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում ներգրավվող դատապարտյալները չեն խրախուսվում ո՛չ ՔԿՅ-ի, ո՛չ ազատագրվածների կողմից: Ավելին, նրանց ազատագրվածներն անվանում են «աբսյուլդներ», իսկ վերջիններիս ծառայությունը՝ «աբսյուլդնոց»: Իրենց կատարած աշխատանքի արդյունքում վերջիններս որակվում են ավելի ստորադաս, քան այն անձինք, ովքեր ապրում են

չգրված կանոններով: Ինչ վերաբերում է ՔԿՅ-ի կամ ՔԿՎ-ի կողմից խրախուսանքներին՝ Դիտորդական խումբը բազմիցս արձանագրել է, որ տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում ներգրավված ազատագրկված անձինք իրենց կատարած որակյալ աշխատանքի և դրական բնութագրի համար չեն ներկայացվում խրախուսանքի, իսկ ներկայացվածները ստանում են մերժումներ:

«Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի հետ կնքված կոմիսիայի պայմանագրերի շրջանակներում հիմնականում կատարվել են (ՀՀ սնանկության դատարանի 2021 թվականի նոյեմբերի 25-ի թիվ ՍՆԴ/1782/04/21 վճռով «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամը ճանաչվել է սնանկ) ստեղծագործական աշխատանքներ՝ տարբեր նյութերից պատրաստվել են հուշանվերներ և այլ իրեր, որոնք իրացվել են նույն հիմնադրամի կողմից, իսկ վարձատրության չափը կախված է եղել աշխատանքների վաճառքից ստացված գումարից, որը փոխանցվել է դատապարտյալի անձնական հաշվին:

Այլ գործատուի մոտ դատապարտյալներն ընդգրկվում են ցանկացած բնույթի աշխատանքներում (բացառությամբ ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 15-ի N 135-Ն որոշմամբ հաստատված արգելված աշխատանքների), իսկ վարձատրության չափը սահմանում է գործատուն՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված նվազագույն աշխատավարձի չափից ոչ պակաս:

Քրեակատարողական համակարգի աշխատակիցների աշխատանքային պայմանները

Մշտադիտարկման ընթացքում խումբն ուշադրության կենտրոնում է պահում քրեակատարողական համակարգի աշխատակիցների աշխատանքային պայմանների վիճակը, քանի որ հարգանքը յուրաքանչյուրի նկատմամբ և արժանապատիվ աշխատանքային պայմանները բխում են մարդու իրավունքների արժեհամակարգից:

Դիտարկման ընթացքում պարզ է դարձել, որ քրեակատարողական համակարգի աշխատակիցների աշխատանքային պայմանները հեռու են պատշաճ որակվելուց, ինչը նաև ազդում է աշխատանքի գրավչության և թափուր աշխատատեղերի բավականին մեծ թվի վրա:

Կից ներկայացվում է թափուր աշխատատեղերի հաստիքների ցուցակը՝ 2022 թվականի ապրիլի 1-ի դրությամբ, ինչպես նաև քրեակատարողական համակարգի

աշխատակիցների աշխատանքային պայմանները վավերագրող լուսանկարներ, որոնք
 ԽՈՒՄԲԸ կատարել է տարեկան պլանային այցելությունների ժամանակ:

ԹԱՓՈՒՐ ՀԱՍՏԻՔՆԵՐ 01. 04. 2022թ.

Ստորաբաժանման անվանումը	Հաստիքների անվանումը	Թափուրհաստ.
ՔԿԾ կենտրոնական մարմին	Գլխավոր քարտուղարի տեղական	1
Անվտանգության ապահովման բաժին	Երկրորդ կարգի մասնագետ	4
պահպանության ապահովման բաժին	Երկրորդ կարգի մասնագետ	2
Օպերատիվ բաժին	Պետի տեղակալ	1
	Առաջատար մասնագետ	1
Հատուկ նշանակության բաժին	Երկրորդ կարգի մասնագետ -- 167 859	4
Ուղեկցումների բաժին	Երկրորդ կարգի մասնագետ 167 859	1
Կենցաղային ապահովման բաժին	Պետի տեղակալ 212309 քաղ ծառայող	1
Նյութատեխնիկականապահովման բաժին	Ավագ հաշվառող 175 932 քաղ ծառայող	1
Նուբարաշեն ՔԿՀ		
Սոցիալական հոգեբանական և իրավական բաժին	առաջատար մասնագետ 183869	2
Կալանավորված և դատապարտվածների հաշվառման բաժին	Առաջատար մասնագետ 150799	1
Օպերատիվ բաժին	Առաջատար մասնագետ 183 869	1
Անվտանգության ապահովման բաժին	Կրտսեր մասնագետ 164 850	10

Պահպանման ապահովման բաժին	Երկրորդ կարգի մասնագետ 166 071	1
	Կրտսեր մասնագետ 164 850	7
«ՎԱՐԴԱՇԵՆ» ՔԿՅ	Պետի տեղակալ - 367077	1
Տնտեսական ապահովման բաժին	Կրտսեր մասնագետ (պահեստապետ) – 164850	1
Անվտանգության ապահովման բաժին	Երրորդ կարգի մասնագետ 165230	3
	Կրտսեր մասնագետ – 164850	8
Պահպանության ապահովման բաժին	Կրտսեր մասնագետ – 164850	7
«ՍԱԱՆ» ՔԿՅ	Երկրորդ կարգի մասնագետ - 95903 (քաղծառ.)	1
Ընդհանուր աշխատանքների խումբ	Խմբի ղեկավար – 202309 (քաղծառ.)	1
Տնտեսական ապահովման բաժին	Առաջատար մասնագետ – 183869	1
Պահպանության ապահովման բաժին	Կրտսեր մասնագետ – 164850	1
Հաշվապահական հաշվառման բաժին	Երկրորդ կարգի մասնագետ – 95903 (քաղծառ.)	1
«ԱՐՄԱՎԻՐԻ» ՔԿՅ	Պետի տեղակալ - 367077	1
Կադրերի և անձնակազմի հետ տարվող աշխատանքների բաժանմունք	Առաջատար մասնագետ – 183869	1
Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժին	Գլխավոր մասնագետ (հոգեբան) – 2012309 (քաղծառ.)	2
Կալանավորված անձանց և դատապարտյալների հաշվառման բաժին	Երկրորդ կարգի մասնագետ – 166071	1
Ընդհանուր աշխատանքների խումբ	Երկրորդ կարգի մասնագետ – 95903 (քաղծառ.)	1

Տնտեսական ապահովման բաժին	Առաջատար մասնագետ (պահեստապետ) – 183869	1
Օպերատիվ բաժին	Գլխավոր մասնագետ – 267206	1
Անվտանգության ապահովման բաժին	Առաջատար մասնագետ – 183869	2
	Առաջին կարգի մասնագետ – 180746	1
	Երկրորդ կարգի մասնագետ – 166071	5
	Երրորդ կարգի մասնագետ – 165230	9
	Կրտսեր մասնագետ – 164850	7
Պահպանության ապահովման բաժին	Երկրորդ կարգի մասնագետ – 166071	3
	Կրտսեր մասնագետ – 164850	2
«ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՅԻՎԱՆԴԱՆՈՑ» ԶԿՅ		
Տնտեսական ապահովման բաժին	Կրտսեր մասնագետ (առաքիչ- կրպակի սպասարկող) – 164850	1
Անվտանգության ապահովման բաժին	Երկրորդ կարգի մասնագետ – 165230	2
	Կրտսեր մասնագետ– 164850	15
Պահպանության ապահովման բաժին	Երրորդ կարգի մասնագետ – 165230	3
	Կրտսեր մասնագետ – 164850	17
«ԱԲՈՎՅԱՆ» ԶԿՅ		
Տնտեսական ապահովման բաժին	Կրտսեր մասնագետ (առաքիչ- կրպակի սպասարկող) – 164850	1
	Կրտսեր մասնագետ (պահեստապետ) – 164850	1
Պահպանության ապահովման բաժին	Կրտսեր մասնագետ – 164850	1

Հաշվապահական հաշվառման խումբ	Խմբի ղեկավար – 212309 (քաղծառ.)	1
«ԱՐԹԻԿ» ՔԿՀ		
Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժին	Գլխավոր մասնագետ (հոգեբան) – 2012309 (քաղծառ.)	1
«ԳՈՐԻՍ» ՔԿՀ		
Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժին	Առաջատար մասնագետ (հոգեբան) – 183869	1
Տնտեսական ապահովման բաժին	Կրտսեր մասնագետ (պահեստապետ) – 164850	1
Անվտանգության ապահովման բաժին	Կրտսեր մասնագետ – 164850	1
Պահպանության ապահովման բաժին	Կրտսեր մասնագետ – 164850	1
«ՎԱՆԱՁՈՐ» ՔԿՀ	Պետ - 387580	1
Կադրերի և անձնակազմի հետ տարվող աշխատանքի խումբ	Առաջատար մասնագետ – 183869	1
Հերթապահ խումբ	Առաջին կարգի մասնագետ – 180746	1
Սոցիալակն, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժին	Գլխավոր մասնագետ (հոգեբան) – 267206	1
Տնտեսական ապահովման բաժին	Կրտսեր մասնագետ (պահեստապետ) – 164850	1
	Կրտսեր մասնագետ (առաքիչ- կրպակի ապասարկող) – 164850	1
Օպերատիվ բաժին	Առաջատար մասնագետ – 183869	1
Անվտանգության ապահովման բաժին	Երկրորդ կարգի մասնագետ – 165230	1
Պահպանության ապահովման բաժին	Երկրորդ կարգի մասնագետ - 166071	1
	Երրորդ կարգի մասնագետ – 165230	1
	Կրտսեր մասնագետ – 164850	4

«ԵՐԵՒԱՆ-ԿԵՆՏՐՈՆ» ԶԿՅ		
Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների խումբ	Գլխավոր մասնագետ(հոգեբան) – 212309 քաղծառ.	1
Անվտանգության ապահովման բաժին	Կրտսեր մասնագետ – 164850	1
Ընդհանուր		164



«Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ–ի թափուր հաստիքներ

ՔԿ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ	Բաժանմունք	Մասնագետ
Դատապարտյալների հիվանդանոց	Հոգեբուժական բաժանմունք	Հոգեբույժ
Դատապարտյալների հիվանդանոց	Թերապիա և պոլ. Օգնության բաժանմունք	Բժիշկ
Դատապարտյալների հիվանդանոց	Ինֆեկցիոն բաժանմունք	Բաժ. ղեկավար
Դատապարտյալների հիվանդանոց	Նարկոլոգիական բաժանմունք	Բժիշկ
Դատապարտյալների հիվանդանոց	Ախտորոշիչ բաժանմունք	Բաժ. ղեկավար
Դատապարտյալների հիվանդանոց	Թոքախտաբանական բաժանմունքի	Թոքաբան
Վանաձոր	Հոգեբուժական բաժանմունք	Հոգեբույժ
Գորիս	Հոգեբուժական բաժանմունք	Հոգեբույժ




«Արույան» քվարտ



«Արթիկ» քվարտ



«Գորիս» քվարտ



«Նուբարաշեն» քԿՅ



«Դատապարտյալների հիվանդանոց» քԿՅ

6. ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ ՈՒ

ՈԱԶՄԱՎԱՐՎԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ 2019 թվականին ընդունվեց «Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի» ռազմավարությունը, որը ոլորտի ինդիքների լուծման և արդիականացման համար կարևոր քայլ էր:

Ռազմավարության նպատակը միջազգային չափանիշներին համապատասխան քրեակատարողական և պրոբացիայի համակարգի կայացումն էր, ինչպես նաև պատժողական քաղաքականությունից անցումը վերականգնողական արդարադատության, քրեական պատիժների ոլորտում վերականգնողական արդարադատության սկզբունքների արմատավորումը, պատժի նպատակների արդյունավետ իրացումը, քրեական ենթամշակույթի հաղթահարումը, քրեակատարողական և պրոբացիայի համակարգում կոռուպցիայի հաղթահարումը, կրկնահանցագործության նվազեցումն ու հասարակական անվտանգության ապահովումը³⁷:

Այդ նպատակները կյանքի կոչելու համար ռազմավարությամբ առանձնացվել են նաև հիմնական ռազմավարական ուղղությունները՝

- Հայաստանի Հանրապետության քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի օրենսդրության կատարելագործում,
- Ազատությունից զրկված անձանց պահման պայմանների բարելավում, քրեակատարողական հիմնարկների օպտիմալացում և արդիականացում, քրեակատարողական հիմնարկների և Պրոբացիայի ծառայության շենքային պայմանների բարելավում և տեխնիկական հագեցում,
- Քրեակատարողական հիմնարկներում հաշմանդամություն ունեցող անձանց պահման մատչելի պայմանների ապահովում,
- Ազատությունից զրկված անչափահաս անձանց պահման պայմանների բարելավում,
- Կոռուպցիայի և քրեական ենթամշակույթի հաղթահարում,

³⁷Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարություն

- Զրեակատարողական ծառայությունում կադրային քաղաքականության և Պրոբացիայի ծառայության կարգավիճակի վերանայում,
- Զրեակատարողական և պրոբացիայի համակարգում էլեկտրոնային կառավարման գործիքների ներդրում,
- Դատապարտյալների և պրոբացիայի շահառուների վերասոցիալականացում,
- Մատուցվող բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների որակի բարելավում:

Սույն զեկույցի մեջ անդրադարձ է կատարվում ռազմավարությամբ նախանշված մի շարք ուղղությունների, որոնք հաշվետու տարվա ընթացքում հանդիսացել են Խմբի մշտադիտարկման առարկա: Այդպիսիք են, օրինակ, բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների վիճակը քրեակատարողական հիմնարկներում, անչափահաս անձանց և խոցելի խմբերին վերաբերող առանձնահատկությունները, քրեակատարողական հիմնարկներում պահման պայմանների հետ կապված հարցեր և այլն:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է առանձնակի ուշադրություն դարձնել քրեակատարողական հիմնարկների օպտիմալացման և արդիականացման հարցին:

ՀՀ արդարադատության նախարարությունն այս նպատակի ներքո նախատեսում է մի կողմից քրեակատարողական հիմնարկների և պրոբացիայի ծառայության շենքային ու տեխնիկական հագեցվածության ապահովում և ենթակառուցվածքների զարգացում, մյուս կողմից՝ քրեակատարողական ծառայության և քրեակատարողական հիմնարկների կառավարման ու գնահատման մոդելի արդիականացում՝ դիտարկելով սննդի ապահովման, սանիտարահամաճարակային միջոցառումների և այլ գործառնությունների դիտարկման միջոցով:

Զրեակատարողական ծառայության և քրեակատարողական հիմնարկների կառավարման ու գնահատման մոդելի արդիականացման վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության կողմից մինչ այս պահը կատարվել է ուսումնասիրություն, պրակտիկայում, սակայն, զգալի և շոշափելի արդյունքներ այս առնչությամբ դեռևս չեն արձանագրվել:

Հուսադրող է այն հանգամանքը, որ այս խնդրի ներքո վերջապես լուծում է ստացել համակարգում սննդի ապահովման հարցը մասնավոր հատվածին պատվիրակելը: Սրա արդյունքում 2020 թվականի հունիսից սկսած ՀՀ ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող անձանց սննդի տրամադրման գործընթացն իրականացվում է մասնավոր ընկերության կողմից: Նման ձևաչափի

արդյունքում կտրուկ մեծացել է ԶԿՅ-ում սննդից օգտվողների քանակը, ինչն էլ հանգեցրել է ազատագրված անձանց փոխանցվող հանձնուքների թվի նվազմանը, ըստ այդմ՝ նաև ազատագրված անձանց ընտանիքի հոգսն ու ծախսերը:

Միևնույն ժամանակ հիմք ընդունելով Խմբի անդամների այցերն ու դիտարկումները՝ պետք է նշել, որ սննդի որակն ու կազմակերպումը մշտական ուշադրության և շարունակական զարգացման առարկա են: Ինչը պահանջում է ՀՀ արդարադատության նախարարությունից վերահսկել մատուցվող սննդի որակի պահպանումն ու հնարավոր խնդիրների բացառումը: Ասվածի օրինակ է այն հանգամանքը, որ 2021 թվականի ընթացքում դատապարտյալներին և կալանավորված անձանց հատկացվող սննդի որակը և դրա կալորիականությունը ստուգելու նպատակով փորձաքննություն իրականացնելու գործընթաց չի կազմակերպվել: Պատահական չէ, որ 2022 թվականին ՀՀ գլխավոր դատախազության կողմից ԶԿՅ-ներում մատակարարվող սննդի որակի ստուգման արդյունքում հայտնաբերվել են խախտումներ³⁸:

Առանձնակի ուշադրության և մտահոգության տեղիք է տալիս քրեակատարողական հիմնարկների օպտիմալացման հարցը՝ մի կողմից առանձին հիմնարկների ենթակառուցվածքների բարեփոխումների ու վերանորոգման, մյուս կողմից՝ որոշ ԶԿՅ-ների փակման ու նոր հիմնարկների կառուցման հարցը:

Մասնավորապես, չնայած այն հանգամանքին, որ նախատեսվում էր «Նուբարաշեն» և «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկների փակումը՝ շենքային վատ պայմանների և տեխնիկական պարամետրերին չհամապատասխանելու պատճառով, միևնույն է դրանք շարունակում են գործել: Ավելին, պետության կողմից շարունակաբար տեղի է ունենում հատկապես «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի վերանորոգումներ ու բարեկարգմանն ուղղված աշխատանքների ծախսեր: Այսինքն, մի կողմից պետությունը ընդունում է, որ հիմնարկը չի համապատասխանում ստանդարտներին և որոշում է փակել, մյուս կողմից շարունակում է ծախսեր կատարել, որոնք ըստ էության, առկա խնդիրները չեն լուծում:

Չնայած այն հանգամանքին, որ նախատեսվում էր կառուցել նոր քրեակատարողական հիմնարկ՝ 1200 անձի համար՝ Սիլիկյան թաղամասում, սակայն ռազմավարությամբ նախատեսված ժամկետները մոտենում են ավարտին, մինչդեռ նույնիսկ պլանավորում այդ ուղղությամբ չի իրականացվել: Նմանատիպ մոտեցում նախատեսված էր նաև «Գորիս» քրեակատարողական հիմնարկի առնչությամբ,

³⁸<http://pmg.am/hy/news/successful-cases/2022-04-04-14-03-41?fbclid=IwAR3-X7siyCm37yFJUIREyxYoYZRWcwakpjZ0SslDci8eDgMQOao-yqDCtI>

մասնավորապես՝ փակել այն և կառուցել 350 լրակազմ ունեցող քրեակատարողական հիմնարկ: Այս ուղղությամբ նույնպես դեռևս գործուն քայլեր չեն ձեռնարկվել:

Այս առնչությամբ ՀՀ արդարադատության նախարարության կողմից Դիտորդների խմբի հարցմանն ի պատասխան հայտնել են, որ նոր քրեակատարողական հիմնարկի կառուցման համար նախապատրաստական աշխատանքների շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարության կողմից ձեռնարկվել են մի շարք քայլեր: Մասնավորապես, տեղի են ունեցել հանդիպում-քննարկումներ միջազգային գործընկերների հետ՝ նոր քրեակատարողական հիմնարկի մոդելի ընտրության միջազգային բոլոր չափանիշների վեր հանման և դրանք հայաստանյան օրինակով տեղայնացնելու հարցում: Նոր քրեակատարողական հիմնարկի տարածքի ընտրության համար որպես հիմնական տարբերակ դիտարկվում է նախկին «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկի տարածքը: Հաշվի առնելով նշվածը՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից պլանավորվել և ուսումնասիրվել է նախկին «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկի և դրան հարող տարածքները՝ հնարավոր հողային խնդիրները վեր հանելու նպատակով: Ըստ այդմ՝ Երևան քաղաքի Նուբարաշենի խճուղի 2, Նուբարաշենի խճուղի 3/5 և Նուբարաշենի խճուղի 7 հասցեներում նախատեսվող մեծածավալ շինարարական աշխատանքներին ընդառաջ կառույցների տեղակայման տեղամասերում առաջացել է ինժեներաերկրաբանական հետազոտություն իրականացնելու անհրաժեշտություն, որի ավարտական արդյունքների հենքով էլ արդեն իսկ հնարավոր կլինի վերջնականացնել տեղադիրքի ընտրությունն ու մշակել նոր «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկի մոդելը, և ըստ այդմ՝ զարկ կտրվի նախագծանախահաշվային աշխատանքների կազմակերպմանը:

Հարցի առնչությամբ հիմնական մտահոգությունը, սակայն, կապված է նրա հետ, որ ռազմավարության և նպատակների հիմքում դրված է ՀՀ քրեական արդարադատության համակարգում պատժողական քաղաքականությունից անցում դեպի վերականգնողական արդարադատություն: Ինչը ենթադրում և *պահանջում է ոչ այնքան նոր հիմնարկների կառուցում, որքան համակարգի շարունակական բարելավում, ազատագրված անձանց նվազած թվի պահպանում*, համալիր մոտեցում ազատագրված այլընտրանքների պրակտիկ կիրառման ուղղությամբ և այլն:

Մեկ այլ հարց կապված է արդեն իսկ փակված քրեակատարողական հիմնարկների հետ: Մասնավորապես, ՀՀ Կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 28-ի որոշմամբ դադարեցվել է «Կոշ» և «Հրազդան» քրեակատարողական հիմնարկների գործունեությունը: Հաշվի առնելով վերջին տարիներին ազատագրված անձանց ընդհանուր թվի և նաև այդ ԶԿՀ-ներում ազատագրվածների նվազումը՝ նման որոշումը

լիովին ընունելի և ողջունելի է: Մինևույն ժամանակ պետությունը և մասնավորապես Արդարադատության նախարարությունը պետք է նախապես պլանավորած լիներ նաև այդ հիմնարկների փակման արդյունքում աշխատակիցների զբաղվածության հարցի լուծման հնարավորությունները:

Այս տեսանկյունից սակայն ընդունելի չէ հիմնարկների աշխատակիցների ուղղորդումը պրոբացիայի ծառայություն: Սա բացատրվում է նրանով, որ պրոբացիայի ծառայությունը հենվում և գործում է առավելապես վերականգնողական արդարադատության սկզբունքի վրա, ինչը ենթադրում է համապատասխան մտածողությամբ և կարողություններով աշխատակիցների առկայություն: Բնավ չթերագնահատելով քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների կարողություններն ու դերը՝ պետք է արձանագրել, որ ընդունելի չէ պատժիչ ոլորտից աշխատողների տեղափոխությունը պրոբացիայի ծառայություն, առավել ևս առանց վերապատրաստումների ու կարողությունների զարգացման:

Խոսելով պրոբացիայի ծառայության մասին՝ հուսադրող կարելի է գնահատել վերջինիս շարունակական զարգացումը երկրում:

Ինչպես հայտնում են Արդարադատության նախարարությունից, պրոբացիայի համակարգում վարչարարությունը կրճատելու, համակարգի գործունեությունը թափանցիկ և հաշվետու դարձնելու նպատակով Եվրոպայի խորհրդի հետ արդյունավետ համագործակցության արդյունքում մշակվել է e-probation էլեկտրոնային կառավարման համակարգի տեխնիկական առաջադրանքը, ինչը երաշխիքներ կստեղծի ցանկացած ձևաչափով հաշվետվություններ ստանալու արդյունքում ճշգրիտ վերլուծական աշխատանքներ իրականացնելու համար: Փաստացի, դա կապահովի ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության առավել արդյունավետ գործունեությունը, շահառուների վերասոցիալականացմանն ուղղված համալիր և նպատակային միջոցառումների շարունակական իրականացումը, հանցանք կատարած անձանց հասարակություն վերաինտեգրելուն ուղղված քաղաքականության կատարելագործումը և կրկնահանցագործության նվազեցումը: Մինևույն ժամանակ, Քրեական և Քրեական դատավարության օրենսգրքերի ուժի մեջ մտնելով իրական հնարավորություն կստեղծվի պրոբացիայի ծառայության համար նախատեսված իրավասությունների ու խափանման միջոցների լիարժեք իրականացման համար: Այդ գործընթացը մի կողմից կնպաստի քրեակատարողական հիմնարկների շարունակական բեռնաթափմանը, մյուս կողմից՝ պրոբացիայի ու վերականգնողական արդարադատության զարգացմանը:

Կարելի է արձանագրել, որ քրեակատարողական համակարգում մի կողմից ձեռնարկվում են միջոցառումներ ու գործողություններ ուղղված՝ համակարգի արդիականացմանն ու, ըստ այդմ, նաև առկա խնդիրների լուծմանը, ինչի արդյունքում արդեն իսկ արձանագրվում են դրական փոփոխություններ, մյուս կողմից, սակայն, դրանք համակարգային բնույթ չեն կրում, կյանքի չեն կոչվում ռիսկերի գնահատման հետ համահունչ: Հաշվի առնելով ներկայացվածն ու զեկույցում ներկայացվող մի շարք այլ հարցեր՝ անհրաժեշտ է ապահովել ոլորտի բարելավման շարունակական գործընթաց և համալիր միջոցառումների իրականացում:

7. ՂԱՏԱԽԱԳՐԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ՀԱՐՑԵՐԸ

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատախազը հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ: Նույն հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի 1-ին նախադասության համաձայն՝ իր լիազորություններն իրականացնելիս դատախազն իրավունք ունի ստուգելու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության մարմինների, դրանց կազմում գործող ստորաբաժանումների, ինչպես նաև պատիժները և հարկադրանքի այլ միջոցներ կիրառող մարմինների վարչակազմերի պատիժները և հարկադրանքի այլ միջոցների կիրառմանը վերաբերող այն իրավական ակտերի համապատասխանությունը գործող օրենսդրությանը, որոնք վերաբերում են պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձի հիմնական իրավունքներին, պատժի կրման կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման՝ օրենքով սահմանված կարգին, հիմքերին ու պայմաններին: Նույն կետի 2-րդ նախադասության համաձայն՝ օրենսդրությանը հակասող ակտ հայտնաբերելիս դատախազը միջնորդում է վերանայել այն, իսկ այն դեպքերում, երբ, **դատախազի կարծիքով, հապաղումը կարող է հանգեցնել ծանր հետևանքների, դատախազն իրավունք ունի կասեցնելու այդ ակտի գործողությունը** և այն վերանայելու միջնորդագիր ներկայացնելու ակտն ընդունած մարմին կամ ակտը վերացնելու միջնորդագիր ներկայացնել ակտն ընդունած մարմնի համապատասխան վերադաս մարմին կամ պաշտոնատար անձին:

Խնդրահարույց է այն հանգամանքը, որ օրենսդիրը որևէ ժամկետային սահմանափակում չի նախատեսել դատախազության կողմից հիշատակված մարմինների իրավական ակտերի կասեցման և վերանայման միջնորդագիր ներկայացնելու համար: Տեսականորեն դատախազությունը կարող է այդ ակտերը կասեցնել և վերանայման միջնորդագիր ներկայացնել ակտն ընդունելուց հետո մեկ ամսվա, 10 ամսվա, նույնիսկ 10 տարվա ժամանակահատվածում:

Մինևույն ժամանակ օրենսդիրը նաև չի նախատեսել նույն իրավական ակտը, կամ նույն հարցին վերաբերով իրավական ակտը մեկ անգամից ավելի կասեցնելու և վերանայման միջնորդագիր ներկայացնելու արգելքը: **Տեսականորեն դատախազությունը կարող է նույն ակտը անսահմանափակ թվով**

անգամ կասեցնել և վերանայման միջնորդագիր ներկայացնել, նույնիսկ եթե քրեակատարողական ծառայության մարմինները վերանայել են այդ ակտերը: Այս հանգամանքը անհնար է դարձնում անձի վերաբերյալ հարցի վերջնական լուծումը:

Որպես օրինակ՝ ցանկանում ենք ներկայացնել հետևյալ դեպքերը.

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովը (այսուհետ՝ Տեղաբաշխման հանձնաժողով) 09.03.2020թ. կայացրել է որոշում՝ դատապարտյալ Ա. Կ.-ին կիսափակ ուղղիչ հիմնարկից կիսաբաց ուղղիչ հիմնարկ տեղափոխելու վերաբերյալ: 25.01.2021թ. ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության կողմից կասեցվել է Տեղաբաշխման հանձնաժողովի՝ 09.03.2020թ. որոշումը և այն վերանայելու վերաբերյալ ներկայացվել է միջնորդագիր: 30.09.2021թ. Տեղաբաշխման հանձնաժողովը վերանայել է դատապարտյալ Ա.Կ.-ին կիսաբաց ուղղիչ հիմնարկ տեղափոխելու վերաբերյալ իր իսկ 09.03.2020թ. որոշումը և այն թողել է ուժի մեջ: 06.12.2021թ. դատախազության կողմից կրկին որոշում է կայացվել Տեղաբաշխման հանձնաժողովի՝ 09.03.2020թ. և 30.09.2021թ. որոշումները կասեցնելու և դրանք վերանայելու միջնորդություն ներկայացնելու վերաբերյալ: Տեղաբաշխման հանձնաժողովի առաջին՝ 09.03.2020թ. որոշումը, դատախազության կողմից կասեցվել և վերանայելու միջնորդություն ներկայացվել է 25.01.2021թ., այսինքն՝ կայացնելուց շուրջ 10 ամիս անց: Երկրորդ՝ 30.09.2021թ. որոշումը դատախազության կողմից կասեցվել և վերանայելու միջնորդություն ներկայացվել է 06.12.2021թ., այսինքն՝ ավելի քան երկու ամիս անց: Ընդ որում՝ դատախազությունը 06.12.2021թ. որոշմամբ կասեցրել է նաև Տեղաբաշխման հանձնաժողովի 09.03.2020թ. որոշումը (կայացման պահից շուրջ 1 տարի 9 ամիս անց):

Մեկ այլ՝ դատապարտյալ Ի.Օ.-ի գործով 09.03.2020թ. Տեղաբաշխման հանձնաժողովը կայացրել է որոշում՝ վերջինիս կիսափակ ուղղիչ հիմնարկից կիսաբաց ուղղիչ հիմնարկ տեղափոխելու վերաբերյալ: 16.12.2020թ. դատախազության կողմից կասեցվել է Տեղաբաշխման հանձնաժողովի՝ 09.03.2020թ. որոշումը և այն վերանայելու վերաբերյալ ներկայացվել է միջնորդագիր: 30.09.2021թ. Տեղաբաշխման հանձնաժողովը վերանայել է դատապարտյալ Ի.Օ.-ին կիսաբաց ուղղիչ հիմնարկ տեղափոխելու վերաբերյալ 09.03.2020թ. որոշումը և այն թողել է ուժի մեջ: 30.11.2021թ. դատախազության կողմից կրկին որոշում է կայացվել Տեղաբաշխման հանձնաժողովի՝ 09.03.2020թ. և 30.09.2021թ.

որոշումները կատեցնելու և դրանք վերանայելու միջնորդություն ներկայացնելու վերաբերյալ: Տեղաբաշխման հանձնաժողովի առաջին՝ 09.03.2020թ. որոշումը դատախազության կողմից կատեցվել և վերանայելու միջնորդություն ներկայացվել է 16.12.2020թ., այսինքն՝ շուրջ 9 ամիս անց: Երկրորդ՝ 30.09.2021թ. որոշումը դատախազության կողմից կատեցվել և վերանայելու միջնորդություն ներկայացվել է 30.11.2021թ., այսինքն՝ երկու ամիս անց: Ընդ որում՝ դատախազությունը 30.11.2021թ. որոշմամբ կատեցրել է նաև Տեղաբաշխման հանձնաժողովի 09.03.2020թ. որոշումը:

Չի բացառվում, որ երկու դեպքում էլ Տեղաբաշխման հանձնաժողովի կողմից իր նախկին որոշումներն ուժի մեջ թողնելու դեպքում դատախազությունը կրկին կատեցնի Տեղաբաշխման հանձնաժողովի որոշումները և միջնորդի վերանայել: Այսինքն՝ այս գործընթացը կարող է անվերջ շարունակվել: Արդյունքում դատապարտյալները չեն կարող որևէ կերպ լինել պաշտպանված:

Ինչպես արդեն նշվել է, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ օրենսդրությանը հակասող ակտ հայտնաբերելիս դատախազը միջնորդում է վերանայել այն, իսկ այն դեպքերում, երբ, **դատախազի կարծիքով հապաղումը կարող է հանգեցնել ծանր հետևանքների, դատախազն իրավունք ունի կատեցնելու այդ ակտի գործողությունը:** Դատախազի՝ երկու գործերով էլ հիշատակված որոշումների մեջչկա որևէ պատճառաբանում, թե ինչու պետք է կատեցնել Տեղաբաշխման հանձնաժողովի որոշումները, որն է ծանր հետևանքը, արդյոք չկատեցնելը կարող է հանգեցնել ծանր հետևանքների, թե ոչ: Այս հանգամանքը համոզմունք է ձևավորում, որ նշված ակտերի համատարած կատեցումները դատախազության համար հանդիսանում է մեխանիկական գործընթաց, այլ ոչ թե իրավունքի իրացում՝ պայմանավորված կոնկրետ իրավիճակով:

ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածը սահմանում է խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը, համաձայն որի՝

1. Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:
2. Մարմնական պատիժներն արգելվում են:
3. Ազատությունից զրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի իրավունք:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

Դատախազության կողմից Տեղաբաշխման հանձնաժողովի որոշումների կասեցման արդյունքում, այդ կարճ ժամանակահատվածում, դատապարտյալները գտնվել են 5 քրեակատարողական հիմնարկներում: Դատախազության կողմից Տեղաբաշխման հանձնաժողովի որոշումների կասեցման և վերանայման միջնորդության պատճառով նշված անձանց քրեակատարողական հիմնարկը (այդ թվում ուղղիչ հիմնարկի տեսակը) շարունակ փոփոխվել է:

Խիդերն ընդդեմ Ֆրանսիայի գործով (Khider v. France 09.07.2009 (№ 39364/05)) Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել էր Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում: Հիշյալ գործով դիմումատուն գանգատվում էր պահման պայմաններից և իր դեմ կիրառված անվտանգության միջոցների դեմ՝ որպես «հատուկ հսկողություն պահանջող ազատագրվածի»: Մասնավորապես նա գանգատվում էր բազմաթիվ տեղափոխություններից մի բանտից մյուսը, ինչպես նաև մենախցում երկարատև գտնվելուց: Հիշյալ գործով Դատարանն արձանագրել էր, որ խոշտանգումների կանխարգելման Եվրոպական կոմիտեն Ֆրանսիայի վերաբերյալ իր 2007 զեկույցում մատնանշել էր ազատագրվածի՝ մի բանտից մյուսը շարունակական տեղափոխությունների վնասակար հետևանքների մասին: Այդ կերպ, թեև տեղափոխությունը կարող էր անհրաժեշտ լինել բանտում անվտանգության ապահովման և փախուստը բացառելու համար, տվյալ գործով դիմումատուի հաճախակի տեղափոխությունն, ըստ էության, շատ քիչ էր արդարացված: Բացի այդ, դրանք կարող էին դիմումատուի մոտ առաջացնել անհանգստության բարձր զգացողություն՝ հաշվի առնելով ադապտացումը տարբեր բանտերում:

ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածը սահմանում է հետևյալը.

1. Յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

2. Վարչական վարույթի ընթացքում յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող բոլոր փաստաթղթերին ծանոթանալու իրավունք, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիքների:

3. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Անհրաժեշտ ենք համարում նաև արձանագրել, որ դատապարտյալներն այս ամբողջ գործընթացներում ներգրավված չեն եղել, մասնակից չեն դարձվել, չեն լսվել:

Գտնում ենք, որ Դատախազության մասին ՀՀ օրենքի՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության մարմինների, դրանց կազմում գործող ստորաբաժանումների, ինչպես նաև պատիժները և հարկադրանքի այլ միջոցներ կիրառող մարմինների վարչակազմերի պատիժները և հարկադրանքի այլ միջոցների կիրառմանը վերաբերող օրենսդրությանը հակասող ակտ հայտնաբերելիս նշված ակտերի **կասեցման և վերանայման միջնորդագիր ներկայացնելու որևէ ժամկետային սահմանափակում չնախատեսելը**, ինչպես նաև Դատախազության մասին ՀՀ օրենքի՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության մարմինների, դրանց կազմում գործող ստորաբաժանումների, ինչպես նաև պատիժները և հարկադրանքի այլ միջոցներ կիրառող մարմինների վարչակազմերի պատիժները և հարկադրանքի այլ միջոցների կիրառմանը վերաբերող օրենսդրությանը հակասող ակտ հայտնաբերելիս նշված ակտերի **մեկ անգամից ավելի կասեցնելու և վերանայման միջնորդագիր ներկայացնելու արգելք չնախատեսելը** հանդիսանում են լուրջ օրենսդրական բացեր:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի՝ հանրային իշխանությունը, այդ թվում՝ դատական իշխանությունը, պարտավոր է հարգել և պաշտպանել մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները:

«2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են»:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածի՝

«Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր»:

Սահմանադրական այս իրավունքներն անմիջական գործող իրավունքներն են՝ համաձայն Սահմանադրության 3-րդ հոդվածի.

«3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է իրավական որոշակիության սահմանադրական պահանջների բովանդակությանը՝ արձանագրելով մասնավորապես ներքոնշյալը.

ա) իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են իրավական որոշակիության սկզբունքը, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի (03.05.2016թ. ՍԴՈ-1270),

բ) օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (...) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ կտա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը (18.04.2006թ. ՍԴՈ-630),

գ) իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու, թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը (13.05.2008թ. ՍԴՈ-753),

դ) իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության (02.12.2014թ. ՍԴՈ-1176),

ե) իրավական որոշակիությունը նաև իրավական անվտանգության կարևոր բաղադրիչ է, որով, ի թիվս այլնի, ապահովվում է նաև վստահությունը հանրային իշխանության և դրա հաստատությունների նկատմամբ: Իրավական պետությունում բացառապես որոշակի՝ կանխատեսելի, հստակ և բոլորի համար մատչելի օրենսդրական կարգավորումների միջոցով պետք է երաշխավորվի առկա իրավակարգի հետագա գոյության նկատմամբ վստահության պաշտպանությունը (18.11.2019թ. ՍԴՈ-1488),

զ) իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում իշխանության կողմից գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ (02.04.2014թ. ՍԴՈ-1142, 09.06.2015թ. ՍԴՈ-1213),

է) իրավական որոշակիության սահմանադրաիրավական սկզբունքի գործողությունը տարածվում է բոլոր օրենքների վրա՝ անկախ այն հանգամանքից, թե վերջիններս ունեն հիմնական իրավունք սահմանափակող, թե հիմնական իրավունքի իրացումը կարգավորող բնույթ (14.03.2017թ. ՍԴՈ-1357),

ը) նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար՝ օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը

չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով (03.05.2016թ. ՍԴՈ-1270, 18.11.2019թ. ՍԴՈ-1488):

ՀՀ Սահմանադրական դատարանը, «Ռոբերտ Քոչարյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» 07.05.2019 թ ՍԴՈ-1459 որոշման մեջ հղում կատարելով իր 25.01.2019թ ՍԴԱՈ-7 աշխատակարգային որոշմանը, որում անդրադարձել էր դատարանների կողմից Սահմանադրության մեկնաբանության և կիրառման հարցին, արտահայտել է իրավական դիրքորոշումներ, մասնավորապես,

«Այն հանգամանքը, որ սահմանադրական արդարադատության ոլորտը, Սահմանադրության 171-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, դուրս է Վճռաբեկ դատարանի գործառույթների շրջանակից, չի նշանակում, որ Վճռաբեկ դատարանը չունի Սահմանադրությունը մեկնաբանելու և կիրառելու լիազորություն, և որ «Որպես Սահմանադրության գերակայության ապահովման միջոց՝ **Սահմանադրության վերջնական և համապարտադիր մեկնաբանությունն ու կիրառումն է** Սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունը, իսկ հանրային իշխանության բոլոր մարմինները՝ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իրենց լիազորությունների շրջանակներում մեկնաբանում և կիրառում են Սահմանադրությունը, հատկապես եթե, Սահմանադրության 3-րդ հոդվածին համահունչ, խոսքն անմիջականորեն գործող իրավունքի, այն է՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների մասին է, որոնցով սահմանափակված է **ամբողջ հանրային իշխանությունը**»:

ՎԻՃԱԿԱԳՐՎԱԼ ՏՎՅԱԼՆԵՐ 2021Թ.

2021 թ. քրեակատարողական հիմնարկներում արձանագրվել է 13 մահվան, 3 ինքնասպանության, 366 ինքնավնասման դեպք

Դիտորդների խումբը համապատասխան ուսումնասիրություններ կատարելու նպատակով, ՀՀ արդարադատության նախարարությանը խնդրել են տրամադրել տեղեկույթ³⁹ 2021 թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում քրեակատարողական հիմնարկներում ազատազրկված անձանց շրջանում արձանագրված մահերի ընդհանուր քանակի, մահվան դեպքերի պատճառների, մահվան դեպքերի կապակցությամբ հարուցված քրեական գործերի, հայտարարված հացադուլների քանակի, փախուստի և փախուստի փորձերի ընդհանուր թվի, ինքնավնասման և ինքնասպանության արձանագրված դեպքերի, դրանց դրսևորման եղանակների և պատճառների, քրեակատարողական հիմնարկների վարչակազմի կողմից ինքնավնասումների և ինքնասպանության դեպքերի առնչությամբ՝ դրանց պատճառները պարզելու, հետագայում նմանատիպ դեպքերը կանխելու նպատակով կատարված ծառայողական քննությունների կամ ուսումնասիրությունների, ինքնասպանություն կատարած անձանց գործերով հարուցված քրեական գործերի, քրեակատարողական ծառայողների պատճառով կամ մեղավորությամբ կատարված (եթե այդպիսիք կան) ինքնավնասման և ինքնասպանության դեպքերի վերաբերյալ:

ՀՀ արդարադատության նախարարությունից պատասխան գրությամբ տեղեկացրել են⁴⁰, որ 2021 թվականի ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող անձանց շրջանում արձանագրվել է.

Մահվան 13 դեպք՝ 8-ը՝ քաղաքացիական բժշկական հաստատություններում, իսկ 5-ը՝ քրեակատարողական հիմնարկներում:

Ինքնասպանության 3 դեպք՝ 1-ը «Նուբարաշեն» ԲԿՀ –ում և 2-ը «Արմավիր» ԲԿՀ –ում:

Ինքնավնասման 366 դեպք:

Հացադուլ հայտարարելու 374 դեպք:

³⁹ http://pmg.am/images/%D4%B5_21-72_%D5%80%D5%A1%D6%80%D6%81%D5%B8%D6%82%D5%B4_%D4%BB%D5%B6%D6%84%D5%B6%D5%A1%D5%B%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80.docx.pdf

⁴⁰ http://pmg.am/images/%D5%84_2072.pdf

2021 թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատված

Քկ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ	ԻՆՔՆԱՍՊԱ ՆՈՒԹՅՈՒՆ	ԻՆՔՆԱՎՆԱ ՍՈՒՄ	ՀԱՅԱ ԴՈՒԼ	ՄԱՀՎԱՆ ԴԵՊԵ
Արմավիր	2	62	153	2
Նուբարաշեն	1	139	73	1
Արթիկ		67	54	
Վանաձոր		14	22	1
Դատապ. հիվ		31	30	6
Աբովյան		16	—	
Գորիս		4	7	
Վարդաշեն		8	9	
Սևան		—	—	
Երևան-Կենտ.		1	2	
Կոշ		4	2	
Հրազդան		20	22	



Փախուստի 2 դեպք՝ «Վաղարշապատ» բժշկական կենտրոնից և ՀՀ ԱՆ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկից: Փախուստի փորձ չի արձանագրվել:

Ինչ վերաբերում է հաշվետու ժամանակահատվածում քրեակատարողական ծառայողների պատճառով կամ մեղավորությամբ ինքնասպանության հնարավոր դեպքերի վերաբերյալ տեղեկությանը՝ նշել են, որ այն ստանալու նպատակով անհրաժեշտ է դիմել նախաքննությունն իրականացնող մարմին:

Տեղեկացրել են նաև, որ ինքնավսասման դեպքերի արդյունավետ կանխարգելման նպատակով 2020 թվականի դեկտեմբերի 10-ին Հայաստանի Հանրապետության

արդարադատության նախարարի կողմից հաստատվել է «Քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանությունների և ինքնավնասումների կանխարգելման ռազմավարության իրականացման 2021-2022 թթ-ի միջոցառումների մասին» N 513-Լ հրամանը⁴¹: Ինքնավնասումների կանխարգելման շրջանակներում յուրաքանչյուր ինքնավնասման դեպքով կազմվել են նյութեր, անցկացվել է հետաքննություն, ինչպես նաև իրականացվել են սոցիալ-հոգեբանական բնույթի աշխատանքներ, ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկի հոգեբանների կողմից տարվել են հոգեբանական աշխատանքներ, որի արդյունքում կազմվել է հոգեբանական եզրակացություն ինքնավնասման հնարավոր դրդապատճառների և վարքի հետագա կանխատեսումների վերաբերյալ:

Ի դեպ արձանագրված ինքնավնասումները հիմնականում կատարվել են մեկանգամյա օգտագործման սայրի կամ կրակայրիչի մետաղական գլխիկի միջոցով քերծվածք կամ կտրվածք անելու, ինչպես նաև զանազան իրեր և առարկաներ կուլ տալու եղանակով:

Որպես արձանագրված ինքնավնասումների և ինքնախեղումների պատճառներ՝ նշվել են նյարդային գերլարման, հոգեկան հուզմունքի, անհավասարակշռության, ապագայի անորոշության, մեղքի զգացման հոգեվիճակում գտնվելը, անձնական, ընտանեկան, առողջական խնդիրները, քրեական գործի, խափանման միջոցի, պատժախուլց տեղափոխելու, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ կայացված որոշումների հետ անհամաձայնությունը, այլ քրեակատարողական հիմնարկ, ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ, բժշկական կենտրոն տեղափոխվելու ցանկությունը, իրականացված խուզարկությունը, արգելված իրերի հայտնաբերումը, բուժանձնակազմի, խցակիցների հետ խնդիրները:

⁴¹ <https://www.moj.am/legal/view/article/1366/>

2021 թ. ընթացքում 187 անձ պայմանական վաղաժամկետ ազատ է արձակվել:

Դիտորդների խումբը, 2021թ-ի վերաբերյալ համապատասխան ուսումնասիրություններ կատարելու նպատակով, դիմել են⁴² ՀՀ արդարադատության նախարարությանը՝ տրամադրելու տեղեկություն այն մասին, թե 2021 թ-ի ընթացքում պայմանական վաղաժամկետ ազատ արձակման վերաբերյալ քանի միջնորդություն է ներկայացվել դատարան, քանի դեպքում է որոշում կայացվել միջնորդություն չներկայացնելու մասին, քանի անձ է պայմանական վաղաժամկետ ազատ արձակվել և քանիսն են պայմանական վաղաժամկետ ազատ արձակվելու մերժում ստացել դատարանների կողմից:

Ըստ ՀՀ արդարադատության նախարարության պատասխան գրությամբ⁴³ ներկայացված տեղեկատվության՝ 2021 թվականի ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատությունից զրկված անձանց շրջանում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ դատարան է ներկայացվել 248 միջնորդություն, կայացվել է դատարան միջնորդություն չներկայացնելու վերաբերյալ 400 որոշում, դատարանների կողմից 187 անձ պայմանական վաղաժամկետ ազատ է արձակվել, իսկ 184 անձ՝ մերժում ստացել: Նախարարության կողմից տեղեկատվությունը ներկայացվել է ըստ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների: Ինչ վերաբերում է ՀՀ ԱՆ «Կոշ» և «Հրազդան» քրեակատարողական հիմնարկներին, դրանց մասով տրամադրվել է առկա տեղեկությունը, քանի որ հիմնարկների փաստաթղթերն արխիվացվել են:

⁴² http://pmg.am/images/%D4%B5_21-75_%D5%80%D5%A1%D6%80%D6%81%D5%B8%D6%82%D5%B4_%D5%8E%D5%A1%D5%B2%D5%A1%D5%AF%D5%A5%D5%BF.docx.pdf

⁴³ http://pmg.am/images/%D5%84_21-75_%D5%80%D5%A1%D6%80%D6%81%D5%B8%D6%82%D5%B4_%D5%8E%D5%A1%D5%B2%D5%A1%D5%AF%D5%A5%D5%BF.pdf



2021 թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատված

Քկ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ	Դատարան ներկայացված միջնորդություն ներ	Միջնորդություն չներկայացնելու վերաբերյալ որոշումներ	Դատարանի կողմից Պ/Վ ազատված անձ	Պ/Վ ազատումը դատարանի կողմից մերժված անձ
Արմավիր	104	75	29	13
Նուբարաշեն	5	62	3	44
Արթիկ	22	56	9	19
Վանաձոր	11	85	22	51
Դատապ. հիվ	9	24	9	11
Աբովյան	7	5	8	1
Գորիս	8	25	17	12
Վարդաշեն	50	27	37	9
Սևան	31	40	37	23
Երևան-Կենտ.	1	1	—	1
Կոշ	—	—	7	—
Հրազդան	—	—	9	—

2021թ. ընթացքում ազատագրված անձանց կարճատև և երկարատև տեսակցությունների տրամադրում

Քովիդ-19 համավարակով պայմանավորված՝ քրեակատարողական հիմնարկներում կարճատև և երկարատև տեսակցությունների տրամադրման գործընթացն իրականացվել է ոչ լիարժեք:

2021 թ. ընթացքում ազատությունից զրկված անձանց տրամադրվել է 1042 երկարատև և 8351 կարճատև տեսակցություն: Այդ մասին Դիտորդների խումբը տեղեկատվություն է տրամադրել ՀՀ արդարադատության նախարարությունը: **Խումբը նաև** հարցման միջոցով⁴⁴ **փորձել է պարզել**, թե 2021 թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում կարճատև և երկարատև տեսակցություններից քանիսն են եղել լրացուցիչ, օրական կտրվածքով միջինը քանի անձ է օգտվել զբոսանքից և որոնք են եղել զբոսանքից հրաժարվելու պատճառները:

ՀՀ արդարադատության նախարարությունը պատասխան գրությամբ 2021 թվականի ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատությունից զրկված անձանց *տրամադրված երկարատև և կարճատև տեսակցությունների թվաքանակի վերաբերյալ հայցվող տեղեկությունը ներկայացրել է* ըստ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների: Համաձայն որի՝ ազատությունից զրկված անձանց տրամադրվել է 1042 երկարատև (2 լրացուցիչ) և 8351 (9 լրացուցիչ) կարճատև տեսակցություն:

Ի դեպ նախարարությունից ի գիտություն հայտնել են, որ ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 11-ի «Կորոնավիրուսային հիվանդությամբ (Covid-19) պայմանավորված կարանտին սահմանելու մասին» N 1514-Ն որոշմամբ⁴⁵ (այսուհետ՝ Որոշում) նախատեսված սահմանափակումներով պայմանավորված՝ քրեակատարողական հիմնարկներում կարճատև և երկարատև տեսակցությունների տրամադրման գործընթացն իրականացվել է ոչ լիարժեք:

Տեղեկացրել են նաև, որ հաշվի առնելով Որոշմամբ պարբերաբար սահմանվող տեսակցությունների արգելքը՝ անազատության մեջ պահվող անձանց կարճատև

⁴⁴ http://pmg.am/images/%D4%B5_20-76_%D5%80%D5%A1%D6%80%D6%81%D5%B8%D6%82%D5%B4_%D5%8F%D5%A5%D5%BD%D5%A1%D5%AF%D6%81%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.docx.pdf

⁴⁵ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=145874>

տեսակցությունները վերջիններիս ցանկությամբ փոխարինվել են տեսազանգով (2021 թվականին տրամադրվել է 1942 տեսազանգ): Ընդ որում՝ համավարակով պայմանավորված՝ արտաքին աշխարհի հետ կապն առավել արդյունավետ իրացնելու նպատակով ազատությունից զրկված անձանց տրամադրվել է լրացուցիչ 1 տեսազանգ ունենալու հնարավորություն՝ մինչև 10 թույլ տևողությամբ:

Ինչ վերաբերում է 2021 թվականի ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում զբոսանքի իրավունքից օգտված ազատությունից զրկված անձանց վիճակագրական տվյալներին՝ այն նույնպես ներկայացվել է ըստ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների: Իսկ ազատությունից զրկված անձանց շրջանում զբոսանքի իրավունքից հրաժարվելու հիմնական պատճառը եղել են եղանակային պայմանները:

2021 թվականի ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում ընդհանուր առմամբ կազմակերպվել է 56 կրոնական միջոցառում, որոնց մասնակցել է 665 անձ



2021 թ. հունվարի 1–ից մինչև դեկտեմբերի 31–ն ընկած ժամանակահատված

Քկ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ	Կարճատև տեսակցությունների թվաքանակը/ լրացուցիչ տեսակցությունների թվ.	Երկարատև տեսակցություն ների թվ./ լրացուցիչ տեսակցությունների թվ.
Արմավիր	2824/4	381/1
Նուբարաշեն	1340	165/1
Արթիկ	558	34
Վանաձոր	667	67
Դատապ. հիվ	625	45
Աբովյան	461/1	31
Գորիս	270	42
Վարդաշեն	436/3	80
Սևան	311	42
Երևան-Կենտ.	91/1	22
Կոշ	199	40
Հրազդան	569	93

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողությունն իրականացնող հասարակական դիտորդների խմբի անդամները (այսուհետ՝ Դիտորդների խումբ) համապատասխան ուսումնասիրություններ կատարելու նպատակով դիմել են⁴⁶ ՀՀ արդարադատության նախարարություն՝ խնդրելով տեղեկացնել, թե 2021 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքն իրացնելու նպատակով ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում գտնվող ազատազրկված քանի անձ է դիմել իր կրոնական առաջնորդին հանդիպելու համար, նշված դիմումներից քանիսն է բավարարվել, իսկ քանիսը մերժվել և նշված հանդիպումներն արդյոք ազդում են ազատազրկված անձին տրամադրվող տեսակցությունների քանակի վրա:

ՀՀ արդարադատության նախարարությունը պատասխան գրությամբ տեղեկացրել է⁴⁷ հետևյալը.

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում գտնվող ազատությունից զրկված անձանց մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի իրացման, այդ թվում հոգևոր պահանջմունքների բավարարման նպատակով, Հայ առաքելական եկեղեցու հոգևոր սպասավորների կողմից 2021 թվականի ընթացքում պարբերաբար կատարվել են այցելություններ ՀՀ ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկներ, որոնց ընթացքում հոգևոր սպասավորները հանդիպումներ են ունեցել ցանկություն հայտնած ազատությունից զրկված անձանց հետ:

Բացի այդ, հոգևոր սպասավորների կողմից կատարվել են մկրտություններ, անցկացվել են պատարագներ, իսկ տոնական օրերին (տաղավար տոներին)՝ տոնակատարություններ:

2021 թվականի ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում ընդհանուր առմամբ կազմակերպվել է 56 կրոնական միջոցառում, որոնց մասնակցել է 665 անձ:

Հայ առաքելական եկեղեցու սպասավորներից բացի ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներ այցելում են նաև Հայաստանի Հանրապետությունում գրանցված այլ կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Կրոնական կազմակերպությունների հետ հանդիպումների վերաբերյալ դիմումները հիմնականում բավարարվում են, սակայն վերոնշյալ կազմակերպությունների հետ հանդիպումների վերաբերյալ առանձին հաշվառում չի իրականացվում, ուստի դիմումների բավարարման և մերժման առնչությամբ տեղեկություն տրամադրել հնարավոր չէ:

⁴⁶ http://pmg.am/images/%D4%B5_22-18_%D5%80%D5%A1%D6%80%D6%81%D5%B8%D6%82%D5%B4_%D4%BF%D6%80%D5%B8%D5%B6.pdf

⁴⁷ http://pmg.am/images/%D5%84_22-18_%D5%80%D5%A1%D6%80%D6%81%D5%B8%D6%82%D5%B4_%D4%BF%D6%80%D5%B8%D5%B6.pdf

Փաստել են նաև, որ Հայ առաքելական եկեղեցու սպասավորների, ինչպես նաև այլ կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումները չեն ազդում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատությունից զրկված անձանց տրամադրվող տեսակցությունների քանակի վրա:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

0010 Երևան Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594004

Էլ. փոստ arpine.sargsyan@gov.am

№ /12.2/50371-2022

«.....» 2022թ.

**ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ
ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ՉԱՐՈՒՀԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ**

(Էլ հասցե՝ prisonarmenia@gmail.com)

Հարգելի՛ տիկին Հովհաննիսյան,

Ի պատասխան Ձեր՝ ՀՀ արդարադատության նախարարությունն ստացված թիվ Ս/70399-2022 գրության՝ կից ներկայացվում է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2021 թվականի տարեկան հաշվետվության վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության մեկնաբանությունները և լուսանկարչական հավելվածը:

Առդիր՝ «2» Էլ. ֆայլ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Arpine Sargsyan

Signed by: SARGSYAN ARPINE 6404940545

ԱՐՓԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Կատարող՝ Պարույր Աղաբաբյան

ՀՀ ԱՆ քրեական օրենսդրության, քրեակատարողական

և պրոբացիայի ոլորտի քաղաքականության մշակման վարչություն

Հեռ.՝ 59-41-56

Մ Ե Կ Ն Ա Բ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի (այսուհետ՝ Խումբ) 2021 թվականի տարեկան հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն) համալիր ուսումնասիրությունից հետևում է, որ Հաշվետվությամբ անդրադարձ է կատարվել քրեակատարողական համակարգի մի շարք ոլորտներին, մասնավորապես՝ կալանավորված անձանց և դատապարտյալների պահման պայմաններին, տրամադրվող բժշկական օգնությանն ու սպասարկմանը, նոր կորոնավիրուսային վարակին՝ COVID-19-ին, կալանավորված անձանց և դատապարտյալների սննդի կազմակերպմանը և սննդի որակին, ենթադրյալ խտրականության դրսևորումներին և այլն:

Ստորև ներկայացնում ենք Հաշվետվության մեջ ընդգրկված՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներին առնչվող դիտարկումների վերաբերյալ համապատասխան մեկնաբանությունները՝ ըստ բաժինների.

1. ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԵՔԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԶՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ

1.1. Բժշկական զննության և մարմնական վնասվածքների արձանագրման թերացումներ.

2021 թվականի հունիսին Խումբն արագ արձագանքել է «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում ազատազրկված անձի հարազատների՝ ոստիկանների կողմից խոշտանգումների ենթարկելու վերաբերյալ ահազանգին և պարզել, որ նախնական զննության ընթացքում տվյալ ազատազրկված անձի մարմնական վնասվածքների վերաբերյալ համապատասխան արձանագրություն չի կազմվել քրեակատարողական հիմնարկում, ինչպես ահազանգել էին հարազատները:

«Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ)՝ ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում տեղակայված ստորաբաժանման բժիշկը

Խմբի անդամների այն հարցին, թե ինչու արձանագրություն չի կազմվել, պատասխանել է, որ այն կազմվում է միայն այն դեպքում, երբ քրեակատարողական հիմնարկ մուտք գործած անձը հայտնում է հնարավոր խոշտանգման կամ վատ վերաբերմունքի մասին, մնացած դեպքերում, անկախ մարմնական վնասվածքների առկայությունից, արձանագրություն չի կազմվում, այլ տվյալները գրանցվում են ազատությունից զրկված անձի բժշկական քարտում, իսկ վերոնշյալ կալանավորված անձը չի կատարել խոշտանգված լինելու վերաբերյալ որևէ հայտարարություն:

Խումբը դեպքի առնչությամբ 2021 թվականի հուլիսի 2-ի թիվ 21-30 գրությամբ դիմել է ՀՀ ԱՆ՝ մտահոգություն հայտնելով, որ «խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական զննության արձանագրությունը կազմելու ուղեցույցը» թերի է կիրառվում և որ ՊՈԱԿ-ի բժիշկները թերևս լավ չեն յուրացրել ուղեցույցի դրույթները, ուստի առաջարկել է ՊՈԱԿ-ի բժիշկների համար կազմակերպել ուսուցում՝ ուղեցույցի լիարժեք կիրարկման նպատակով:

Խմբի կողմից հայտնաբերված վերոհիշյալ թերության կապակցությամբ հարկ է նշել, որ ՊՈԱԿ-ի՝ ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում տեղակայված ստորաբաժանումում հայտնաբերված բացթողումը արդեն իսկ կարգավորվել է, դատախազության համապատասխան ստորաբաժանումից տրամադրվել են նշված դեպքով հիշյալ ստորաբաժանման կողմից կազմված արձանագրության պատճենը, որը ներկայումս գտնվում է ՊՈԱԿ-ի տրամադրության տակ, իսկ բազմաթիվ խախտումներ կատարած ստորաբաժանման ղեկավարն իր դիմումի համաձայն ազատվել է զբաղեցրած պաշտոնից՝ հաշվի առնելով այն, որ Արդարադատության նախարարությունը և ՊՈԱԿ-ը խստորեն հետևում են նաև բժշկական օգնության և սպասարկման առնչությամբ վարվող փաստաթղթաշրջանառությանը:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում (այսուհետ՝ Հիմնարկ) պահվող ազատագրված անձանց նկատմամբ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական զննության արձանագրության ձևաթղթի կազմումը, ներկայացման ընթացակարգը կարգավորվում է ՀՀ կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 26-ին ընդունված թիվ 825-Ն որոշմամբ:

ՀՀ արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի կողմից համատեղ իրականացվող Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում ծրագրի շրջանակներում խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական զննության արձանագրության ձևաթուղթ կազմելու վերաբերյալ

վերապատրաստումներին մասնակցել է ՊՈԱԿ-ի ողջ բժշկական անձնակազմը (բժիշկներ, բուժքույրեր և բուժակներ)՝ թվով 150 անձ:

Հարկ ենք համարում նշել նաև, որ վերոնշյալ դասընթացներից առաջ և հետո եղել են դեպքեր, երբ ՊՈԱԿ-ի աշխատակիցները չեն կարողացել կողմնորոշվել ձևաթղի լրացման անհրաժեշտության հարցում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ եղել են որոշակի անհասկանալի իրադրություններ՝ նշված ձևաթղթի լրացման կարգավորումների բացակայության պատճառով:

ՊՈԱԿ-ի ստորաբաժանումների ղեկավարների, ինչպես նաև մյուս աշխատակիցների հետ բազմիցս քննարկվել են պրակտիկայում հանդիպող իրադրությունները, որը հնարավորություն է տվել լուծել մինչ այս անհասկանալի համարվող խնդիրները: ՊՈԱԿ-ի վարչակազմի կողմից կազմակերպվել են լրացուցիչ քննարկումներ, տրվել են կոնկրետ հանձնարարականներ խնդրո առարկա հարցի լուծման կապակցությամբ:

Ի լրումն վերոգրյալի՝ հայտնում ենք, որ ներկայումս խոշտանգման արձանագրության վերաբերյալ անհասկանալի իրադրությունների ժամանակ կապ է հաստատվում նաև համապատասխան փորձագետների հետ, որոնց ներգրավմամբ իրականացվել են համապատասխան վերապատրաստումները, և դրա շրջանակներում խնդրահարույց հարցերը ստանում են իրենց լիարժեք պատասխանները:

Ինչ վերաբերում է խմբի այն հետևությանը, որ «հնարավոր վատ վերաբերմունքի դեպքերի արձանագրման ու արդյունավետ քննության ապահովման հարցում պետությունը դեռևս հսկայական անելիքներ ունի», հարկ է արձանագրել, որ վատ վերաբերմունքի հնարավոր դեպքերի բացահայտումը գտնվում է Կառավարության ուշադրության ներքո և այս ուղղությամբ ձեռնարկվել են անհրաժեշտ օրենսդրական և գործնական քայլեր, քայլերի ձեռնարկումը և հարցի մշտադիտարկումը շարունակվելու է: Բայցև պետք է փաստել, որ նման հետևության հիմքում չեն կարող դրվել պարզապես առկա վիճակագրական տվյալները, քանզի չեն վկայակոչվել այնպիսի դեպքեր, որոնք անուշադրության են մատնվել կամ չեն արձանագրվել, իսկ այլ գործընթացներում հնարավոր բացթողումները, ինչպես նշվեց, շտկվել են:

1.2. Պահման պայմաններ.

Հիմնարկների բնականոն գործունեությունն ապահովելու, անազատության մեջ պահվող անձանց համար միջազգային նվազագույն չափորոշիչներին համապատասխանող պահման պայմաններ ապահովելու նպատակով յուրաքանչյուր տարի ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությանը (այսուհետ՝ Ծառայություն)

հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում իրականացվում են շինարարական աշխատանքներ, այդ թվում՝ կոսմետիկ և կապիտալ:

Հարկ է նշել որ գործող 10 Հիմնարկներից 9-ը նախագծվել և կառուցվել են Խորհրդային Հայաստանի գոյության տարիներին և դրանց տիպային և կառուցվածքային առանձնահատկություններով պայմանավորված՝ շատ դեպքերում հնարավոր չէ իրականացնել լայնամասշտաբ վերակառուցման և վերանորոգման աշխատանքներ՝ ապահովելու միջազգային չափորոշիչներին համապատասխանող պահման պայմաններ: Բայցև պետք է փաստել, որ անգամ այս պայմանի հաշվառմամբ առանձնացվել են այն կարիքները, որոնք ենթակա են բավարարման, և մշակվել է դրանց լուծման կարճաժամկետ և երկարաժամկետ պլաններ՝ ըստ դրանց առանձնահատկությունների:

2022 թվականի ընթացքում Ծառայությանը հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում իրականացվել (իրականացվում) են հետևյալ շինարարական աշխատանքները, որոնք միանշանակ ուղղված են անազատության մեջ պահվող անձանց պահման պայմանների բարելավմանը, մասնավորապես.

1) **«Արմավիր» Հիմնարկում** ներկայումս իրականացվում են օդափոխության՝ համատեղված ջեռուցման հետ և օդորակման համակարգի կառուցման, տեղադրման շինարարական աշխատանքներ (պայմանագրի ընդհանուր գումարը՝ 978.000,0 հազար ՀՀ դրամ, կապալառու կազմակերպությունը՝ «Գրիգորյան շին» ՍՊԸ), որոնք նախատեսվում է ավարտել 2022 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակում, ներկայումս իրականացվել է աշխատանքների շուրջ 70%-ը:

2) **«Աբովյան» Հիմնարկում** ներկայումս իրականացվում են ներքին ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի, սանհանգույցների և բաղնիքների վերանորոգման, կապիտալ շինարարական աշխատանքներ (ընդհանուր գումարը՝ 48.996,0 հազար ՀՀ դրամ, կապալառու կազմակերպությունը՝ «Արտ պլաս» ՍՊԸ): Շինարարական աշխատանքները գտնվում են ավարտական փուլում (կատարված է աշխատանքների շուրջ 80%-ը):

3) **«Վարդաշեն» Հիմնարկում** ներկայումս իրականացվում են նախկին կիսաբաց ուղղիչ հիմնարկի պահման պայմաններում գտնվող հարկի՝ քննչական մեկուսարանի պահման պայմաններին համապատասխանեցման՝ վերակառուցման շինարարական աշխատանքներ (պայմանագրի ընդհանուր գումարը՝ 46.512,516 հազար ՀՀ դրամ, կապալառու կազմակերպությունը՝ «Արտաշատի ԷՑՇ» ՍՊԸ), ներկայումս իրականացվել է աշխատանքների շուրջ 60%-ը:

4) **Հիմնարկներում անազատության մեջ պահվող և հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար հատուկ հարմարեցված պայմանների**

ստեղծման նպատակով իրականացվում են լայնածավալ շինարարական աշխատանքներ (պայմանագրի ընդհանուր գումարը՝ 45.245,694 հազար ՀՀ դրամ, կապալառու կազմակերպությունը՝ «Արտաշատի ԷՑՇ» ՍՊԸ) ներկայումս իրականացվել է աշխատանքների շուրջ 60%-ը:

5) **«Սևան» Հիմնարկում** իրականացվում են արտաքին և ներքին ջրահեռացման ցանցի վերակառուցման շինարարական աշխատանքներ (պայմանագրի ընդհանուր գումարը՝ 13.491,0 հազար ՀՀ դրամ, կապալառու կազմակերպությունը՝ «Արտդիան» ՍՊԸ), ներկայումս իրականացվել է աշխատանքների մոտ 30 %-ը:

Հարկ է նշել նաև, որ արդեն իսկ կատարված են «Արմավիր», «Սևան», «Վանաձոր», «Աբովյան», «Արթիկ» Հիմնարկներում համապատասխան վերակառուցման շինարարական աշխատանքներ կատարելու նպատակով (նախատեսվում է իրականացնել 2023 թվականի բյուջեով) նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները (պայմանագրերի արժեքը՝ 40.308,0 հազար ՀՀ դրամ, կատարող կազմակերպություններ՝ «Շիննախագիծ» և «Արմատրոյ» ՍՊ ընկերություններ)⁴⁸: Դրանց շրջանակներում սպասվում են լայնածավալ փոփոխություններ:

Ինչ վերաբերում է «Նուբարաշեն» Հիմնարկի գործունեության դադարեցման վերաբերյալ առաջարկությանը, ապա հարկ է նշել, որ այն ներառված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությունը, դրա իրականացման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը և ծրագրի կատարումը համակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 1717-Լ որոշմամբ հաստատված հավելված 2-ում՝ որպես առանձին միջոցառում, այն հնարավոր իրականացնել նոր Հիմնարկի շահագործումից հետո: Այս առումով ուշադրության է արժանի այն, որ միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի աջակցությամբ, հաջողվել է արդեն իսկ ունենալ նոր Հիմնարկի մոդելը, տեխնիկական նախնական գծագիրը, նոր Հիմնարկի հայեցակարգը: Նոր Հիմնարկի տարածքի ընտրության համար որպես հիմնական տարբերակ դիտարկվել է նախկին «Էրեբունի» Հիմնարկի տարածքը, որտեղ իրականացվել են ինժեներա-երկրաբանական հետազոտություններ:

⁴⁸ Համապատասխան լուսանկարները կից ներկայացվում են 1 Էլեկտրոնային Ֆայլով:

Նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման աշխատանքների տեխնիկական բնութագիրը կազմելու նպատակով հայտարարվել է մրցույթ, որի արդյունքում կազմվել է նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների տեխնիկական բնութագիրը, որն ուղարկվել է ՀՀ ԿԱ քաղաքաշինության կոմիտե՝ հետագա ընթացքն ապահովելու և արդեն իսկ նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար մրցույթ հայտարարելու նպատակով:

Հատկանշական է, որ նոր Հիմնարկի շահագործման պայմաններում իրենց գործունեությունը կդադարեցնեն Երևանում գտնվող բոլոր Հիմնարկները՝ «Վարդաշեն», «Երևան-կենտրոն», «Նուբարաշեն», «Դատապարտյալների հիվանդանոց»:

2021 թվականի ընթացքում կատարված շինարարական աշխատանքները ներկայացվում են ստորև.

1) «Արմավիր» Հիմնարկ.

Թվով 10 խցում վերանորոգվել են սանհանգույցները: Փոխարինվել են 50 հատ ջրախառնիչ ցնցուղ, 80 հատ լվացարանի ծորակ և 80 հատ ճգախողովակ:

Ճաշարանի մասնաշենքում մասնակի վերանորոգման և մաքրման աշխատանքներ են իրականացվել արտաքին ջրահեռացման ցանցում:

Բուժսպասարկման մասնաշենքում վերանորոգվել է տաք և սառը ջրամատակարարման ներքին համակարգը:

Ամբողջությամբ վերանորոգվել են վարչական մասնաշենքի տանիքը, մասնակի նորոգվել են դահլիճի, ճաշարանի, երկարատև տեսակցության մասնաշենքի, պահպանության մասնաշենքի, այցելուների սպասասրահի և կաթսայատան տանիքները:

Ամրացման աշխատանքներ են իրականացվել կաթսայատանը տեղակայված արևային ջրատաքացման համակարգերի ջրի կուտակման երկու բաքերի հիմքերում:

Ջեռուցման համակարգի անխափան շահագործումն ապահովելու նպատակով իրականացվել են ընթացիկ և մասնակի վերանորոգման աշխատանքներ:

2) «Աբովյան» Հիմնարկ.

Մեկուսարանի մասնաշենքում փոխարինվել են ծորակներ և ցնցուղներ, ընթացքի մեջ են 2 սանհանգույցների վերանորոգման աշխատանքները:

Վերանորոգվել են Հիմնարկի գլխավոր մուտքի մետաղական դարպասները, շարժաբեր մեխանիզմները, ինչպես նաև՝ ոռոգման ցանցի էլեկտրական շարժիչն ու պոմպը:

Կանանց տեղամասում փոխարինվել են ծորակներ և ցնցուղներ, վերանորոգվել է նույն տեղամասի էլեկտրամատակարարման վահանակը:

Փոխարինվել է Հիմնարկի արևային ջրատաքացուցիչ համակարգի շրջանառու պոմպը, նորոգվել է մեկուսարանի մեկ սանհանգույց, վերանորոգվել և փոխարինվել են ջրամատակարարման սարք-սարքավորումները:

3) «Վարդաշեն» Հիմնարկ.

Իրականացվել են կարանտինային տեղամասում 2 սանհանգույցի և մեկ պատժախցի վերանորոգումներ: Մասնակի վերանորոգվել են պատժախցի և կարանտինային տեղամասի միջանցքները և ներքին ջրամատակարարման ցանցը:

Փոխարինվել են արևային ջրատաքացուցիչ համակարգի օդահան և ճնշման կարգավորիչ փականները: Կարգավորվել է հովացնող համակարգի էլեկտրականության ծրագիրը: Հիմնարկում վերանորոգվել և փոխարինվել են նորով ջրամատակարարման սարք-սարքավորումները, վերանորոգվել են քամուց վնասված տանիքները: Մասնակի վերանորոգման աշխատանքներ են իրականացվել արտաքին ջրամատակարարման ցանցում, նորոգվել, փչամաքրման աշխատանքներ են իրականացվել արտաքին և ներքին ջրահեռացման ցանցերում: Ընդհանուր 100 քմ մակերեսով փոխարինվել են կացարանների լինոլիումե հատակները:

4) «Երևան-Կենտրոն» Հիմնարկ.

Մեկուսարանի մասնաշենքում փոխարինվել են ծորակներ, փականներ, ճգախողովակներ և ցնցուղներ:

Տեղադրվել են 2 նոր սանհանգույցներ և 1 լվացարան, վերանորոգվել են բաղնիքի ջրատաքացուցիչ բաքի փականներն ու վնասված խողովակները:

Փչամաքրման աշխատանք է իրականացվել արտաքին կոյուղու ցանցի վրա:

5) «Արթիկ» Հիմնարկ.

Փոխարինվել են Հիմնարկը ջրամատակարարող կենտրոնական էլեկտրաշարժիչը և պոմպը, մեծ տրամաչափի փականներն ու էլեկտրական սարքավորումները:

Վերանորոգվել, ամրացվել և 1մ բարձրացվել է թիվ 3 դիտաշտարակը:

Վերանորոգվել է ճաշարանի մասնաշենքի արտաքին կոյուղու ցանցը: Մասնակի նորոգման և ամրացման աշխատանքներ են իրականացվել մասնաշենքերի տանիքներում:

Փոխարինվել և նոր շրջանառու պոմպեր են տեղադրվել կաթսայատանը և արևային ջրատաքացուցիչ համակարգի վրա:

6) «Դատապարտյալների հիվանդանոց» Հիմնարկ.

Հիմնարկի արտաքին կոյուղու ցանցը մասնակի վերանորոգվել և փչամաքման աշխատանքներ են իրականացվել:

Հիմնարկում վերանորոգվել և փոխարինվել են նորոզ ջրամատակարարման սարք-սարքավորումները:

Մասնակի հարդարման աշխատանքներ են իրականացվել դատապարտյալների երեք հիվանդասենյակներում:

Հոգեբուժարանի մասնաշենքում փոխարինվել է բաղնիքի շրջանառու պոմպը:

7) «Սևան» Հիմնարկ.

Վերանորոգվել է գլխավոր էլեկտրական ենթակայանը սնուցող մալուխը:

Մասնակի վերանորոգման աշխատանքներ են իրականացվել ռեժիմային արտաքին ջրահեռացման ցանցի վրա:

8) «Նուբարաշեն» Հիմնարկ.

Փոխարինվել է Հիմնարկի կաթսայատան արտաքին ջրամատակարարման 10 գծմ երկարությամբ վթարված խողովակը:

Վերանորոգվել է գարնանային ուժեղ քամիների հետևանքով վնասված, Հիմնարկի վարչական և ռեժիմային մասնաշենքերը միմյանց կապող տանիքը: Վերանորոգման և հարդարման աշխատանքներ են իրականացվել երկարատև տեսակցության երեք, մանկական մեկ սենյակներում և երկու միջանցքներում: Վերանորոգվել և հարդարվել է վարչական մասնաշենքում տեղակայված նիստերի դահլիճը՝ կահավորվել է նոր նստարաններով:

Վերանորոգվել են կաթսայատան էլեկտրական մագնիսական փոխանջատիչները:

Հարդարման աշխատանքներ են իրականացվել ռեժիմային մասնաշենքի երկրորդ հարկի ընդհանուր միջանցքում և թվով 20 խցերում: Մասնակի հարդարվել է նաև վարչական մասնաշենքի ընդհանուր միջանցքը, հերթապահ խմբի աշխատասենյակը, հանգստի սենյակը և սանհանգույցը:

Վերանորոգվել են ռեժիմային մասնաշենքի երրորդ հարկի թվով 17 խցերի սանհանգույցները և ներքին ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերը:

Հարդարվել է քննչական մեկ աշխատասենյակ հարակից միջանցքով:

9) «Վանաձոր» Հիմնարկ.

Վերանորոգվել է Հիմնարկի վարչական, պահպանության և կաթսայատան մասնաշենքերի արտաքին ջրամատակարարման ցանցը:

Վերանորոգվել է ռեժիմային մասնաշենքի չորրորդ հարկի ներքին էլեկտամատակարարման ցանցը: Փոխարինվել և նոր շրջանառու պոմպեր են տեղադրվել կաթսայատանը և արևային ջրատաքացուցիչ համակարգի վրա:

Էլեկտրական ենթակայանում վերանորոգվել է Էլեկտրական անջատիչը:

Վերանորոգվել է զբոսաբակում տեղակայված մատուռի տանիքը: Եռակցման աշխատանքներ են իրականացվել արտաքին ջրամատակարարման ցանցի վնասված հատվածներում:

Մասնակի վերանորոգման աշխատանքներ են իրականացվել արտաքին ջրահեռացման ցանցում:

10) «Գորիս» Հիմնարկ.

Վերանորոգվել և փոխարինվել են ջրամատակարարման սարք-սարքավորումները:

Վերանորոգման աշխատանքներ են իրականացվել թվով 3 սանհանգույցներում:

Սալիկապատվել է ճաշարանի հատակը:

2. ԶՈՎԻԴ 19-Ի ԻՐԱՎԻՃԱԿԸ ԶՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ

Սույն բաժնի առնչությամբ Խմբի կողմից խնդիրներ չեն արձանագրվել, հետևաբար առանձին անդրադարձ չի կատարվի:

3. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՉԵՐՃ ԼԻՆԵՆՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Քրեակատարողական համակարգում նախատեսված բարեփոխումների օրակարգում, ի թիվս այլնի, առկա է ազատությունից զրկված անձանց համար հավասար պայմանների ապահովումը: Ըստ այդմ՝ խնդրում ենք ընդունել ի գիտություն, որ իրականացված և նախատեսվող ռազմավարական բոլոր միջոցառումները, ի թիվս այլնի, միտված են նաև այդ նպատակի նվաճմանը:

Ազատությունից զրկված անձանց շրջանում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ ձևավորելու հրամայականները մշտապես գտնվում են քրեակատարողական համակարգի ներկայացուցիչների ամենօրյա ուշադրության կենտրոնում: Այս առումով հարկ է նշել, որ **խստորեն դատապարտվում է խտրականության ցանկացած հիմքով ազատազրկված անձանց միջև անհանդուրժողական վերաբերմունքի ձևավորումը, քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգի պահանջները դիտավորությամբ խախտողների, դատապարտյալների շրջանում «դիրքեր» ստեղծելու փորձ կատարողների կողմից այլ ազատազրկված անձանց նկատմամբ առավելությունների ձեռքբերումը:**

ՀՀ սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն՝ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, Էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

ՀՀ սահմանադրական դատարանն իր կողմից կայացված ՍԴՈ-1617 որոշմամբ ի թիվս այլնի՝ արտահայտել է նաև խտրականության վերաբերյալ իրավական դիրքորոշում, այն է՝ «(...) խտրականությունն առկա է այն դեպքում, երբ նույն իրավական կարգավիճակի շրջանակներում այս կամ այն անձի կամ անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում, մասնավորապես՝ նրանք զրկվում են այս կամ այն իրավունքներից, կամ դրանք սահմանափակվում են, կամ ձեռք են բերում արտոնություններ: Խնդրո առարկա իրավիճակում չի կարող արձանագրվել նման վիճակ, քանզի խոսքը վերաբերում է ոչ թե նույն իրավական կարգավիճակի շրջանակներում տարիքով պայմանավորված խտրականությանը, այլ տարբեր իրավական կարգավիճակ ունենալու հիմքով անձանց՝ օրենքով նախատեսված իրավունքներին և պարտականություններին, այսինքն՝ իրավական հիմնավորում ունեցող օբյեկտիվ պայմաններին»:

Վերոգրյալի հաշվառմամբ, անդրադառնալով հաշվետվությամբ այս մասով բարձրացված հարցերին՝ հարկ է նշել, որ Հիմնարկներում ըստ սեռական կողմնորոշման (նույնասեռական և/կամ տրանսգենդեր, LQFSH և այլ) անազատության մեջ պահվող անձանց հաշվառում չի իրականացվում:

Հիմնարկներում անազատության մեջ պահվող անձանց կարանտինային բաժանմունքներից տեղափոխելու և/կամ կրկնրետ խմբում կամ խցում տեղաբաշխելիս՝ ըստ սահմանված կարգի, հաշվի են առնվում նրանց հոգեբանական և այլ առանձնահատկությունները:

Ինչ վերաբերվում է դատապարտված անձի պատիժը կրելու կարգին կամ պայմաններին, ապա այն կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 57-ից 59-րդ հոդվածներով:

Հարկ է նշել նաև, որ դատապարտված անձանց տեղաբաշխումն իրականացնելիս անհրաժեշտ է նաև ուղղորդվել Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 64-րդ հոդվածի դրույթներով, այն է.

1. Քրեակատարողական հիմնարկում, որպես կանոն, միմյանցից անջատ են պահվում՝

1) տղամարդիկ՝ կանանցից.

2) անչափահասները՝ չափահասներից, բացառությամբ սույն օրենսգրքի 119-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի.

3) բարձր ռիսկայնություն ունեցող դատապարտյալները, որոնց անձնական հատկանիշները, քրեական ազդեցությունը, հանցագործության շարժառիթը, պատիժ կատարող մարմնում կամ հիմնարկում անօրինական գործողությունների կամ վարքագծի հետևանքները լուրջ սպառնալիք են ներկայացնում քրեակատարողական հիմնարկի, մյուս դատապարտյալների կամ այլ անձանց անվտանգությանն ու ապահովությանը՝ մյուս դատապարտյալներից.

4) դատարանների, իրավապահ, մաքսային և հարկային մարմինների աշխատող կամ նախկին աշխատող, պարտադիր կամ պայմանագրային զինվորական ծառայության ավագ ենթասպայական և սպայական կազմերի զինծառայող կամ նախկին զինծառայող դատապարտյալները՝ մյուս դատապարտյալներից.

5) շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդություն ունեցող դատապարտյալը՝ մյուս դատապարտյալներից.

6) օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք՝ մյուս դատապարտյալներից:

2.Քրեակատարողական հիմնարկներում տեղակայված բժշկական ստորաբաժանումներում դատապարտյալներին անջատ պահելու՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները կիրառվում են այնքանով, որքանով հնարավոր է դրանք ապահովել:

3. Դատապարտյալներին անջատ պահելու՝ սույն հոդվածով սահմանված պահանջները կարող են չպահպանվել, եթե դատապարտյալները մասնակցում են իրենց համար կազմակերպված սոցիալական, հոգեբանական, հոգեթերապևտիկ, իրավական աշխատանքների, աշխատանքային, կրթական, մշակութային, մարզական, կրոնական կամ այլ միջոցառումների, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:

Ինչ վերաբերում է քրեակատարողական հիմնարկների աշխատակազմի շրջանում խտրականության վերաբերյալ դասընթացներում սեռականության վերաբերյալ թեմաներ ներառելու առաջարկին, ապա հարկ է նշել որ վերապատրաստման գործընթացում արդեն իսկ ներառված է խոցելի խմբերի հետ աշխատանքների առանձնահատկությունների թեման, վերապատրաստման ողջ թեմաները ներկայացվում են ստորև.

1. Քրեակատարողական հիմնարկներում մարդու իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշները,

2. Խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեմ պայքարի միջազգային չափանիշները,

3. ՀՀ քրեակատարողական օրենսգրքի առանձնահատկությունները,

4. Քրեակատարողական հիմնարկներում արդյունավետ հաղորդակցման և կոնֆլիկտների կառավարման հմտություններ,

5. Սթրեսի և ժամանակի կառավարման հմտություններ,

6. Քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի դեմ պայքարի առանձնահատկությունները,

7. Դատապարտյալների կարիքների և ռիսկերի գնահատման հմտություններ,

8. Քրեակատարողական և քաղաքացիական ծառայողների իրավունքների և պարտականությունների ընդհանրական նկարագիրը,

9. Քրեակատարողական ծառայության կարգապահական կանոնակարգ,

10. Դատապարտյալների և կալանավորված անձանց շրջանում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի առանձնահատկությունները,

11. Քրեակատարողական համակարգում իրավախախտ անչափահասների հետ տարվող աշխատանքների առանձնահատկությունները,

12. Քրեակատարողական համակարգում խոցելի խմբերի հետ տարվող աշխատանքի առանձնահատկությունները,

13. Քրեակատարողական ծառայությունում անձնական տվյալների պաշտպանության առանձնահատկությունները,

14. Քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանության, ինքնավնասման և հոգեկան առողջության ռիսկերի գնահատման գործիքների կիրառման առանձնահատկությունները,

15. Մարդու թրաֆիքինգի կանխարգելում,

16. Դատապարտյալների վերասոցիալականացման գործընթացի կազմակերպումը,

17. Քրեակատարողական ծառայությունում՝ անվտանգության, պահպանության ապահովման և ուղեկցումների կազմակերպման հիմնախնդիրներն ու դրանց լուծմանն ուղղված իրավակազմակերպական կառուցակարգերը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ հարկ ենք համարում փաստել, որ առկա չէ պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հաստատված այնպիսի դեպք, որով կհավաստվի քրեակատարողական ծառայողների կողմից ազատությունից զրկված անձանց նկատմամբ խտրական մոտեցման ցուցաբերումը: Նմանատիպ դեպքերի առերևույթ կասկածի դեպքում պատրաստակամ ենք ապահովել դրանց հետագա ընթացքն ու հասցեագրումը:

Անդրադառնալով ազատությունից զրկված անձանց զուգարանի, լոգասենյակի, աղբահանության, կոյուղու և տարածքի մաքրման աշխատանքներում ներգրավելուն՝ հարկ է նշել, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում կալանավորված անձինք և դատապարտյալները վարձատրվող և չվարձատրվող, ուղղիչ հիմնարկների կամ դրանց հարող տարածքների բարեկարգման, աշխատանքներում ընդգրկվում են բացառապես իրենց ցանկությամբ և գրավոր դիմումի հիման վրա:

Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում նշել, որ ինչ վերաբերում է Հիմնարկների աշխատակազմի, ՊՈԱԿ-ի և ազատագրված անձանց շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ տեղեկացվածությունը բարձրացնելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելուն, ապա այդ ուղղությամբ կազմակերպվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակի վնասի նվազեցման ծրագիրը քրեակատարողական հիմնարկներում՝ թեմայով դասընթաց:

Այս համատեքստում պետք է կարևորել նաև այն հանգամանքը, որ ինչպես նախկին այնպես էլ նոր քրեական օրենսգրքով քրեորեն պատժելի են համարվել քրեական ենթամշակույթի դրսևորումներն, ինչն իր հերթին հանդիսանում է կարևորագույն գործոն ինչպես կալանավորված անձանց, այնպես էլ դատապարտյալների նկատմամբ խտրական վերաբերմունքի բացառման հարցում: Մեր առաջնահերթությունն է ապահովել հավասար պայմաններ բոլոր կալանավորված անձանց և դատապարտյալների համար:

Վերոնշյալից զատ՝ պետք է կարևորել նաև այն, որ քրեակատարողական հիմնարկների սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի աշխատակիցների կողմից քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող անձինք պարբերաբար տեղեկացվում են նաև պետության կողմից քրեակատարողական հիմնարկներում իրականացվող միջոցառումների, ինչպես նաև պատիժը կատարող կամ վերահսկողությունն իրականացնող մարմինների հետ հարաբերակցվելիս իրենց իրավունքների վերաբերյալ, տրամադրվում են անհրաժեշտ խորհրդատվություններ, կազմակերպվում են անհատական ընդունելություններ՝ տարաբնույթ հարցերի, իրավական օգնության տրամադրման, ինչպես նաև հոգեբանների և սոցիալական աշխատողների կողմից նեղ մասնագիտական խորհրդատվություններ, ինչը ընդգրկվում և իրականացվում է նույն ստորաբաժանումների համապատասխան աշխատակիցների ամենօրյա գործունեության շրջանակներում:

Բացի այդ, ներկայումս ձեռնարկվում են և շարունակական բնույթ են կրելու այն միջոցառումները, որոնք ուղղված են բացառելու անազատության մեջ պահվող անձանց ֆինանսական միջոցների հաշվին վերջիններիս պահման պայմանների բարելավման գործընթացը, մասնավորապես՝ խցերի վերանորոգման պրակտիկան, ինչը նույնպես

կարևոր է պահման պայմանների միատեսակության ապահովման, ինչպես նաև տարբերակված կամ խտրական վերաբերմունքի բացառման տեսանկյունից:

Մինևույն ժամանակ, հարկ է ընդգծել, որ խտրականությունը կանխարգելող օրենսդրություն մշակելու, ինչպես նաև խտրականության դեմ համապատասխան այլ մեխանիզմներ ստեղծելու նպատակով ՀՀ արդարդադատության նախարարության կողմից արդեն իսկ մշակվել և ներկայումս լրամշակման փուլում են գտնվում «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերը, որոնց նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր անձի և քաղաքացու իրավունքների ու ազատությունների իրականացման հավասար հնարավորություններ՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

4. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՉԱՏԱԶՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ

Անդրադառնալով Հիմնարկներում անազատության մեջ պահվող օտարերկրացիների իրավունքների և պարտականությունների իրազեկմանը՝ անհրաժեշտ է փաստել, որ Հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալներին Հայաստանի Հանրապետության պետական միջոցների հաշվին թարգմանչի, սուրդոթարգմանչի ծառայություններ մատուցող անձի ծառայությունների ձեռքբերման նպատակով 2022 թվականի մարտի 16-ին, ՀՀ կառավարության 2018թ. Նոյեմբերի 22-ի N 1334-Ն որոշման պահանջների պահպանմամբ Ծառայության կողմից հայտարարվել է մրցույթ, որի հաղթող է ճանաչվել «ԱՐԹ ԶՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ն: Վերջինիս հետ կնքվել է համապատասխան ծառայությունների մատուցման թիվ «ՀՀ ԱՆ ԶԿԾ-ԹԾԶԲ-22/1» պայմանագիր, որի շրջանակներում իրականացվելու է շուրջ 32 լեզուների թարգմանություն, այդ թվում նաև՝ սուրդոթարգմանություն խուլ ու համրերի համար, ընդ որում կատարվելու են ոչ բարդ, միջին բարդության, միջին բարդության մասնագիտական, բարդ, բարդ մասնագիտական գրավոր և բանավոր թարգմանություններ 24 ժամ/7 օր աշխատանքային ռեժիմով (նաև հանգստյան և տոնական օրերին՝ առանց բացառության) Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում:

2022 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ արդեն իսկ իրականացվել է շուրջ 230 թարգմանություն, բացի այդ Ծառայության պետի առաջին տեղակալի հանձնարարությամբ (19.07.2022թ. թիվ Ե-40/12-5774)՝ հայերեն լեզվին չտիրապետող և առաջին անգամ Յիմնարկ մուտք գործող ազատությունից զրկված անձի ընդունելության ժամանակ ներգրավվում է թարգմանիչ:

2022 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ Յիմնարկներում անազատության մեջ պահվում են 135 օտարերկրացիներ:

Ինչ վերաբերում է այլ կրոնական դավանանք ունեցող ազատազրկված անձանց աղոթքի համար առանձին վայր ապահովելու առաջարկին, ապա այս մասով նման վայրերի ապահովումն իրականացվում է հնարավորինս՝ հաշվի առնելով Յիմնարկի առանձնահատկությունները, քանի որ գործող Յիմնարկների շենք-շինությունների և կառուցվածքային առանձնահատկություններով պայմանավորված՝ նման առանձին վայր հատկացնել երբեմն հնարավոր չէ: Այնուամենայնիվ՝ քննարկվող դիտարկումները քննարկման առարկա կդարձվեն Նոր քրեակատարողական հիմնարկ(ների)ի նախագծման ժամանակ:

Վերոգրյալի համատեքստում հարկ է նշել նաև, որ «Աբովյան» Յիմնարկում գտնվող օտարերկրյա քաղաքացիություն ունեցող կանանց խնդիրները ևս լուծվել են:

5. ԿԱՆԱՆՑ ԵՎ ԱՆՉԱՓԱՅԱՍՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ «ԱԲՈՎՅԱՆ» ՅԻՄՆԱՐԿՈՒՄ

Չարկ է նկատել, որ ՅՅ ԱՆ «Աբովյան» Յիմնարկում գտնվող մանկահասակ երեխաները գրանցված են հիմնարկին շատ մոտ գտնվող գյուղ Մայակովսկու պոլիկլինիկայում և հաշվառված են մանկաբույժի մոտ: Մանկահասակ երեխաներին դեղորայքի տրամադրումը կատարվում է նշված պոլիկլինիկայում, իսկ անհրաժեշտության դեպքում, մասնավորապես՝ մարմնի ջերմաստիճանի բարձրացման դեպքում, հրավիրվում է շտապ օգնություն, որը երեխաներին տեղափոխում է մասնագիտացված մանկական բժշկական հաստատություն: Չնայած նշվածին՝ ներկայումս Արդարադատության նախարարության կողմից դիտարկվում են հարցի հնարավոր լուծման ավելի օպտիմալ տարբերակներ՝ ապահովելու մանկահասակ երեխաների համար պատշաճ բժշկական օգնություն ստանալու հնարավորությունը:

Ինչ վերաբերում է սննդի հատկացմանը, ապա 2020 թվականի հունիսի 1-ից բոլոր Յիմնարկներում սննդի պատրաստման և տրամադրման ծառայություններն իրականացվում են մասնավոր կազմակերպության կողմից, որն իրականացնում է

սննդամթերքի ձեռքբերման, սննդի պատրաստման և հատկացման (տրամադրման) գործընթացը:

Հիմնարկներում անազատության մեջ պահվող կալանավորված անձանց և դատապարտյալներին սնունդը հատկացվում է՝ համաձայն նախօրոք հաստատված ճաշացուցակի՝ մեկ շաբաթվա համար, որը տարբեր շաբաթների համար ենթարկվում է փոփոխման՝ ճաշատեսակների բազմազանությունն ապահովելու նպատակով:

Յուրաքանչյուր Հիմնարկում ճաշացուցակները կազմվում են մասնավոր ընկերության համապատասխան աշխատակցի կողմից, հաստատվում Հիմնարկի պետի կողմից: Ճաշացուցակները կազմելիս մասնավոր ընկերությունն առաջնորդվում է 2015 թվականի հոկտեմբերի 15-ի ՀՀ կառավարության N 1182-Ն և 2003 թվականի հուլիսի 31-ի ՀՀ կառավարության N 961-Ն որոշումների պահանջներով՝ ապահովվելով սննդամթերքի նվազագույն չափաքանակները և ճաշատեսակների բազմազանությունը:

Հարկ ենք համարում նշել նաև, որ 2022 թվականի հունիս ամսից «Աբովյան» Հիմնարկում իրենց մայրերի հետ գտնվող մանկահասակ երեխաներին համապատասխան սնունդը տրամադրվում է ՀՀ կառավարության 2007թ.-ի մայիսի 31-ի «Մանկատանը, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում (անկախ դրա կազմակերպական-իրավական ձևից) խնամվող, ինչպես նաև հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորող երեխայի խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 815-Ն որոշման համաձայն, իսկ ճաշացուցակները կազմվում՝ հիշյալ որոշման պահանջներով:

Անհրաժեշտ է փաստել, որ նրանց լրացուցիչ տրամադրվում են նաև «Hip» տեսակի մրգային, բանջարեղենային մանկական այուրեններ, շիլաներ, կաթնամթերք և մրգեր:

ՀՀ կառավարության 2015թ.-ի հոկտեմբերի 15-ի N 1182-Ն որոշման սահմանված ժամկետներում «Աբովյան» Հիմնարկում գտնվող մանկահասակ երեխաներին (հաճախականությամբ) տրամադրվել և տրամադրվում են հագուստ, կոշիկներ, փայտյա մահճակալ, հիգիենիայի պարագաներ՝ մանկական օճառ, մանկական լվացքի փոշի, թաց անձեռոցիկ, մանկական տակդիր, ինչպես նաև կերակրաշիշ, ծծակներ և լոգարաններ:

Անդրադարձ կատարելով «Աբովյան» Հիմնարկում խցային պայմանների բարելավմանը՝ հարկ է նշել հետևյալը.

ՀՀ ԱՆ □Աբովյան□ քրակատարողական հիմնարկի ներքին ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի, սանհանգույցների և բաղնիքների վերանորոգման շինարարական աշխատանքներ ձեռք բերելու նպատակով, գնանշման հարցման ձևով, հայտարարվել է գնման ընթացակարգ, որի արդյունքում հաղթող է ճանաչվել «Արտ

պլաս» ՍՊԸ: Հաղթող մասնակցի հետ 13.05.2022 թվականին կնքվել է շինարարական աշխատանքների գնման պայմանագիր՝ 48.996.000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով: Նշված պայմանագրի շրջանակներում ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի կանանց, անչափահասների, դպրոցի, ակումբի և մեկուսարանի մասնաշենքերում իրականացվում է բաղնիքների, սանհանգույցների, ներքին ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի վերանորոգման և մասնակի հարդարման շինարարական աշխատանքներ մասնավորապես՝

1) Մեկուսարանի մասնաշենքում փոխարինվել են ծորակներ և ցնցուղներ, ընթացքի մեջ են 2 սանհանգույցների վերանորոգման աշխատանքները:

2) Վերանորոգվել են Հիմնարկի գլխավոր մուտքի մետաղական դարպասները, շարժաբեր մեխանիզմները, ինչպես նաև՝ ոռոգման ցանցի էլեկտրական շարժիչն ու պոմպը:

3) Կանանց տեղամասում փոխարինվել են ծորակներ և ցնցուղներ, վերանորոգվել է նույն տեղամասի էլեկտրամատակարարման վահանակը:

4) Փոխարինվել է Հիմնարկի արևային ջրատաքացուցիչ համակարգի շրջանառու պոմպը, նորոգվել է մեկուսարանի մեկ սանհանգույց, վերանորոգվել և փոխարինվել են ջրամատակարարման սարք-սարքավորումները:

5) Ներկայումս իրականացվում են ներքին ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի, սանհանգույցների և բաղնիքների վերանորոգման, կապիտալ շինարարական աշխատանքներ (ընդհանուր գումարը՝ 48.996,0 հազար ՀՀ դրամ, կապալառու կազմակերպությունը՝ «Արտ պլաս» ՍՊԸ): Շինարարական աշխատանքները գտնվում են ավարտական փուլում (կատարված է աշխատանքների շուրջ 80%-ը):

Ինչ վերաբերում է Հիմնարկներում մինչև երեք տարեկան երեխաների համար մանկական սենյակների պատրաստմանը, ապա առաջիկայում նախատեսվում է ձեռք բերել մանկական տարբեր տարիքային խմբերի համար նախատեսված ժամանցային և զարգացման խաղեր:

Հատկանշական է, որ «Աբովյան» Հիմնարկում իրականացվող աշխատանքներին ծանոթանալու նպատակով խմբի հետ իրականացվել է համատեղ այց՝ ներգրավելով նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներին:

6. ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ԿԱՊՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ

Հարկ է նկատել, որ արտաքին աշխարհի հետ կապի կարևորությունն ընդգծված է նաև ՄԱԿ-ի սահմանած կանոններում, Եվրոպայի խորհրդի հանձնարարականներում,

Եվրոպական դատարանի նախադեպային ակտերում, Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի փաստաթղթերում և այլուր:

Վերը շարադրված ներպետական և միջազգային կարգավորումները փաստում են, որ ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապը՝ դրա տարբեր դրսևորումներով, և հատկապես հեռախոսազանգն ունի կարևոր նշանակություն, ընդ որում, ազատությունից զրկման վայրի վարչակազմը պարտավոր է աջակցություն տրամադրել, քանի որ դա, ի թիվս այլ հանգամանքների, համարվում է այնտեղ պահվող անձի վերասոցիալականացման հիմնական միջոցներից մեկը:

Ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապի պահպանումը, այդ թվում՝ հեռախոսակապից և տեսակապից օգտվելու միջոցով, խրախուսվում է, մասնավորապես՝ այդ հանգամանքը հաշվի է առնվում դատապարտյալի վերաբերյալ կազմված բնութագրում՝ որպես դրական բնութագրիչ, ինչպես նաև պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինման համար Ծառայության կողմից կազմվող զեկույցում (արտաքին աշխարհի կետ կապը պահպանելու դեպքում՝ այդ թվում հեռախոսակապի կամ տեսակապի միջոցով, տրվում է 3 միավոր):

Հարկ է փաստել, որ ներկայումս Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի N 1717-L որոշման հավելված N 2-ով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարության իրականացման 2019-2023 թվականների միջոցառումների» ծրագրի 33-րդ կետով նախատեսված՝ ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապի իրավունքի պատշաճ իրացման ապահովման շրջանակներում իրականացվում են համապատասխան միջոցառումներ՝ դատապարտյալների համար անվճար հեռախոսակապից օգտվելու համար տեխնիկական սարքավորումներ ձեռք բերելու ուղղությամբ: Ըստ այդմ՝ գործընթացը հաջող կազմակերպելու պայմաններում մոտ ապագայում բոլոր քրեակատարողական հիմնարկներում հնարավոր կլինի ապահովել դատապարտյալների հիշյալ իրավունքի ավելի արդյունավետ իրականացումը:

Չուզահեռաբար, պետք է փաստել, որ ՀՀ արդարադատության նախարարությունը մշտապես պատրաստակամ է օրենսդրական ցանկացած փոփոխության միջոցով բարելավել ազատությունից զրկված անձանց կյանքը և տեխնիկական լրացուցիչ հագեցվածության ապահովման համար բավարար նախադրյալների առկայության դեպքում կոփարկվի, ինչպես օտարերկրյա քաղաքացիներին, այնպես էլ մյուս

դատապարտյալներին ավելի հաճախ տեսազանգի հնարավորություն տրամադրելու հարցը՝ հիմքում ունենալով ազատությունից զրկված անձանց հավասար հնարավորությունների տրամադրման և դատապարտյալներին դեպի դրական վարքագծի դրսևորման խթանմանն ուղղված գաղափարը:

Ինչ վերաբերում է հեռախոսակապի կամ տեսակապի համար առանձնացված սենյակներ հատկացնելուն, ապա հարկ է նկատել, որ Հիմնարկների շենք-շինությունների և կառուցվածքային առանձնահատկություններով պայմանավորված, հնարավոր չէ բոլոր Հիմնարկներում հեռախոսակապի կամ տեսակապի համար հատկացնել առանձնացված սենյակներ, իսկ քննարկվող դիտարկումը կարող է դարձվել քննարկման առարկա նոր Հիմնարկների կառուցման գործընթացում: Այդուհանդերձ, փորձ է կատարվում հնարավորինս առանձնացում ապահովել:

7. ԱԶԱՏԱԶՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԶՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ

Արդարադատության նախարարության կողմից իրականացվող ոլորտային շարունակական բարեփոխումների արդյունքում ընդունվել է «Կրթության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» 2022 թվականի մայիսի 25-ի ՀՕ-130-Ն օրենքը, որի համաձայն «Կրթության մասին» օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասը լրացվել է նոր՝ չորրորդ պարբերությամբ. «Պարտադիր տասներկուամյա միջնակարգ կրթության իրավունքի իրացման համար սույն հոդվածի 7-րդ մասի առաջին պարբերությունում նշված տարիքային սահմանափակումը չի տարածվում Հիմնարկներում ազատագրկման ձևով պատիժ կրող այն դատապարտյալների վրա, որոնց պատժից ազատման ժամկետի լրանալուն կրթության իրավունքի իրացման վերաբերյալ գրավոր դիմում ներկայացնելու պահին մնացել է մեկ տարուց ավելի: Սույն պարբերությունում նշված անձինք իրենց ցանկությամբ կարող են իրացնել իրենց կրթության իրավունքը (միջնակարգ կրթություն ստանալ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին»:

Օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով կրկին իրականացվել է համապատասխան մոնիթորինգ, որի արդյունքներով Հիմնարկներում թերի միջնակարգ կրթություն ունեցող դատապարտյալների թիվը կազմել է 210:

Բոլոր Հիմնարկներում իրականացվել է 19 տարեկան և ավելի տարիք ունեցող, ազատագրկման ձևով պատիժ կրող դատապարտյալների նախնական կրթական կարիքի գնահատում, որի արդյունքում տարանջատվել է կրթական երեք աստիճան՝ միջին դպրոց (5-9-րդ դասարաններ), ավագ դպրոց (10-12-րդ դասարաններ) և անձինք, որոնք

տառաճանաչ չեն կամ դպրոց չեն հաճախել, որոնց թիվը կազմել է 92, միջինը 39-ից 41 տարեկան:

Հաշվի առնելով Հիմնարկներում ուսումնառություն ստացող դատապարտյալների կարգավիճակի և ունեցած բազային հանրակրթական գիտելիքների առանձնահատկությունները՝ ընդհանուր հանրակրթության ուսուցման մեթոդաբանության հիմքով մշակվել և հաստատվել է ուսումնառության առանձնահատկություններով պայմանավորված նոր մեթոդաբանություն:

Համապատասխան Հիմնարկներում ընտրվել, առանձնացվել են հանրակրթությունն իրականացնելու համար նախատեսված տարածքներ, ուսումնական սենյակները վերանորոգվել են, ձեռք են բերվել այդ սենյակները կահավորելու համար անհրաժեշտ ուսումնասօժանդակ գույք՝ ուսումնական սեղաններ, աթոռներ, գրատախտակներ, համակարգչային տեխնիկա և այլն, ինչպես նաև սովորողներին տրամադրվող գրենական պիտույքներ և այլ նյութեր:

Իրականացվել է ուսուցչի թափուր տեղի համար մրցույթ՝ համաձայն Կրթության և գիտության նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի N 336-Ն հրամանի:

Մրցույթի արդյունքում ընտրված ուսուցիչների հետ իրականացվել են մասնագիտական վերապատրաստումներ՝ ուղղված կրթության բնագավառում իրավական, մանկավարժական, հոգեբանական, ուսուցման մեթոդաբանության վերաբերյալ գիտելիքների և գործնական կարողությունների ձևավորմանը և դրանց ամրապնդմանը: Անհրաժեշտ եմ համարում արձանագրել, որ վերապատրաստումները կրելու են շարունակական բնույթ:

Քրեակատարողական հիմնարկներում հանրակրթական և ոչ ֆորմալ կրթության ծրագրերի իրականացման, կազմակերպչական աշխատանքների աջակցման, դրանց պատշաճ, կանոնակարգված, անխափան և ժամանակին իրականացման նպատակով բոլոր քրեակատարողական հիմնարկների սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժիններից նշանակվել են համապատասխան աջակցող աշխատակիցներ:

Արդարադատության նախարարության համակարգմամբ իրականացված հսկայածավալ աշխատանքի արդյունքում մշակվել է Հիմնարկներում ազատագրվման ձևով պատիժ կրող 19 և ավելի տարեկան դատապարտյալների հանրակրթության ուսումնական ծրագիրը, որի արդյունքում՝ 2022 թվականի սեպտեմբեր ամսից Հիմնարկներում գտնվող դատապարտյալները կարող են միջնակարգ կրթություն ստանալ նաև 19 տարեկանից հետո՝ պետական բյուջեի միջոցների հաշվին:

Ներկայումս «Արմավիր», «Նուբարաշեն», «Արթիկ», «Աբովյան», «Սևան» և «Վանաձոր» Հիմնարկներում ազատագրկման ձևով պատիժ կրող 92 դատապարտյալներ 19 և ավելի տարեկան ներկայացրել են դիմումներ՝ իրենց կրթության իրավունքն իրացնելու համար: Ուսումնական գործընթացը մեկնարկված է:

Անդրադարձ կատարելով ինչպես «Աբովյան» Հիմնարկի մինչև երեք տարեկան երեխաների, այնպես էլ մյուս Հիմնարկների մանկական սենյակների կահավորմանը՝ Նախատեսվում է առաջիկայում ձեռք բերել մանկական տարբեր տարիքային խմբերի համար նախատեսված ժամանցային և զարգացման խաղեր:

Հաշվետվությամբ բարձրացված՝ մեկ Հիմնարկից մեկ այլ Հիմնարկ տեղափոխվելու պարագայում մասնագիտական ուսուցում ստանալու հնարավորությունից զրկվելու մտավախության վերաբերյալ անհրաժեշտ է նշել, որ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից կազմակերպված դասընթացներում ընդգրկված ազատագրկված անձին այլ Հիմնարկ տեղափոխելու պարագայում, որտեղ որ ՊՈԱԿ-ի կողմից դասընթացներ չեն իրականացվում, ապա ազատագրկված անձի ցանկության առկայության պարագայում համապատասխան դասընթացներին մասնակցությունը կիրականացվի հեռավար կարգով:

Հարկ է նշել նաև, որ «Սևան» քրեակատարողական հիմնարկում նախատեսվում է բացել փայտամշակման արտադրամաս՝ ապահովելով դատապարտյալների զբաղեցվածության համար պատշաճ պայմաններ:

Միաժամանակ, հարկ է փաստել, որ փուլային սկզբունքով Կառավարությունը ընդլայնում է քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց զբաղվածության ապահովման հնարավորությունները:

Անդրադառնալով Հաշվետվությամբ նշված դիտարկմանը այն մասին, որ խոցելի խմբերի դատապարտյալների համար չեն ապահովում քրեակատարողական հիմնարկներում աշխատանքների բաշխման համար հավասար պայմաններ, ապա պետք է փաստել, որ քրեական ենթամշակույթի ազդեցության դրսևորումների, ինչպես նաև կալանավորված անձանց ու դատապարտյալների նկատմամբ խտրական վերաբերմունքի բացառումը մշտապես գտնվում է Արդարադատության նախարարության ուշադրության կենտրոնում և այդպիսի դեպքերի հայտնաբերման պարագայում դրանց տրվում է համապատասխան արձագանք՝ պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում:

8. ԶՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ ՈՒ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Ուշադրության է արժանի այն, որ քրեակատարողական ծառայության և քրեակատարողական հիմնարկների կառավարման ու գնահատման մոդելի արդիականացման վերաբերյալ աշխատանքներում ակնառու և շոշափելի է ձեռք բերված արդյունքը:

Խմբի այն արձանագրման համատեքստում, համաձայն որի՝ Արդարադատության նախարարության կողմից մինչ այս պահը կատարվել է միայն ուսումնասիրություն, սակայն, զգալի և շոշափելի արդյունքներ այս առնչությամբ դեռևս չեն արձանագրվել, պետք է փաստել, որ թեև գործընթացն իր բնույթով աննախադեպ է ու բովանդակային առումով խրթին, այնուամենայնիվ այն արդեն իսկ իրականացվել է մի շարք ուղղություններով:

Այսպես՝ Հայաստանի Հանրապետությունը ռազմավարական տեսլական ունի՝ ունենալ հզոր կարողություններով օժտված նոր քրեակատարողական հիմնարկ, ինչը թույլ կտա քրեակատարողական համակարգին արդյունավետ գործել, ապահովել հասարակական անվտանգությունը, ինչպես նաև իրավախախտների վերականգնումը: Քանի որ քրեակատարողական հիմնարկների գոյություն ունեցող համակարգը պատշաճ կերպով չի ծառայում քրեակատարողական համակարգի կողմից սահմանված նպատակներին, հիմք ընդունելով այն, որ վերջինս բավարար չափով չի ապահովում համապատասխան և մարդասիրական կենսապայմաններ բոլոր իրավախախտների համար և պատշաճ աշխատանքային պայմաններ քրեակատարողական հիմնարկների անձնակազմի համար՝ ուստի անհրաժեշտ է գործուն քայլեր ձեռնարկել բանտարկյալների կենսապայմանների բարելավման ուղղությամբ՝ ապահովելով իրավահավասարություն և երաշխավորելով մարդու իրավունքների պաշտպանությունը:

Նույնչափ պլանավորվում է համատեղել քրեակատարողական նոր հիմնարկի կառուցումը պրոֆեսիոնալ կադրերի աշխատանքի ընդունման հետ:

Այս բարեփոխումներն իրականացնելու համար քննարկվում է նոր քրեակատարողական հիմնարկի շենքը կառուցելու և համակարգային փոփոխություններ իրականացնելու գաղափարը, մասնավորապես.

- այս ոլորտում բարեփոխումների օրակարգի ապահովում պրոֆեսիոնալ անձնակազմի կողմից՝ արժանիքների վրա հիմնված նշանակումների միջոցով,

- փոփոխությունների կատարում շինարարության մեջ տարբեր ռեժիմների համար պատշաճ պայմաններ ապահովելու նպատակով՝ հաշվի առնելով իրավախախտների ռիսկերի գնահատման արդյունքները,

- բանտարկյալների առողջության իրավունքի երաշխավորում:

Այս առումով, Նոր քրեակատարողական հիմնարկի կառուցման համար նախապատրաստական աշխատանքների շրջանակներում Արդարադատության նախարարության կողմից ձեռնարկվել են հետևյալ քայլերը՝

- Միջազգային գործընկերների հետ ունեցած բանակցությունների արդյունքում Միջազգային Իրավական Համագործակցության գերմանական հիմնադրամը (IRZ) պատրաստակամություն է հայտնել աջակցելու Նոր քրեակատարողական հիմնարկի մոդելի ընտրության, միջազգային բոլոր չափանիշների վեր հանման և դրանք հայաստանյան օրինակով տեղայնացնելու հարցում: Արդյունքում՝ արդեն իսկ կազմակերպվել են մի շարք քննարկումներ գերմանացի փորձագետի հետ: Բացի այդ, 2022 թվականի հունիս ամսվա ընթացքում տեղի է ունեցել հայկական պատվիրակության այցը Գերմանիայի Դաշնային Հանրապետություն՝ տեղում ծանոթանալու գերմանական քրեակատարողական հիմնարկների մոդելին, ինչպես նաև նույն թվականի նոյեմբեր ամսին Արդարադատության նախարարությունում տեղի է ունեցել համատեղ հանդիպում, որի ժամանակ՝ Միջազգային Իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) գործընկերներին ներկայացվել են Նոր քրեակատարողական հիմնարկի հայեցակարգի մանրամասները:

- Կազմվել է Նոր քրեակատարողական հիմնարկի նախագիծ, տեխնիկական նախնական գծագիր և 3D ձևաչափով Նոր քրեակատարողական հիմնարկի մոդել: Մշակվել են Նոր քրեակատարողական հիմնարկի հայեցակարգը, ինչպես նաև ազատագրվածների զբաղվածության մոդելը:

- Նոր քրեակատարողական հիմնարկի տարածքի ընտրության համար որպես հիմնական տարբերակ դիտարկվել է նախկին «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկի տարածքը: Հաշվի առնելով նշվածը՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից պլանավորվել է ուսումնասիրել նախկին «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկի և դրան հարող տարածքները՝ հնարավոր հողային խնդիրները վեր հանելու նպատակով: Ըստ այդմ՝ շինարարական աշխատանքներին ընդառաջ կառույցների տեղակայման տեղամասերում իրականացվել է ինժեներա-երկրաբանական հետազոտություն:

➤ Պատրաստվել և Զաղաքաշինության կոմիտե է փոխանցվել Նոր հիմնարկի նախագծանախահաշվային աշխատանքների իրականացման համար հայտարարվող մրցույթի տեխնիկական բնութագիրը: Ներկայումս վերջնականացնում է մրցութային փաթեթը, հետևապես, առաջիկայում կտրվի մրցույթի մեկնարկը:

➤ Հիմնարկը կգբաղեցնի մոտ 4,6 հա տարածք, կունենա 4 բնակելի մասնաշենք, յուրաքանչյուրը բաղկացած 4 հարկից, որոնցից բնակելի կլինեն 3-ը: Կիսանկուղային հարկը նախատեսված է ապաստարանի, ինչպես նաև տվյալ մասնաշենքի ազատազրկվածների իրերի պահեստավորման համար: Հիմնարկի խցերը կկահավորվեն երկու անձի համար, բացառությամբ քրեական ենթամշակույթ կրող անձանց խցերի, որոնք նախատեսված են մեկ անձի համար:

Վերոնշյալի արդյունքում՝ նախատեսվում է առաջիկա 3-4 տարիների ընթացքում շահագործման հանձնել **քրեակատարողական հիմնարկի սանրածև մոդելին** համապատասխան նոր հիմնարկ, որը կունենա 800-850 անձանց պահման համար նախատեսված պայմաններ, ներառյալ մոտ 300-350 կալանավորվածներին պահելու վայր, մոտ 150 անձի համար նախատեսված ստացիոնար, մոտ 250-300 անձի համար նախատեսված միջին և ցածր անվտանգային մասնաշենքեր (գոտիներ):

Նոր քրեակատարողական հիմնարկի կառուցմամբ հնարավոր կլինի ապահովել պատշաճ պայմաններ վերականգնողական աշխատանքներ կազմակերպելու, ինչպես նաև բանտարկյալների նկատմամբ արդյունավետ վերահսկողություն ապահովելու համար: Բացի այդ, բարելավված աշխատանքային միջավայրը լրացուցիչ խթան կհանդիսանա ոլորտի մասնագետների համար՝ զբաղվելու բանտային աշխատանքով, ինչն իր հերթին ավելի արդյունավետ կդարձնի քրեական ենթամշակույթի դեմ պայքարը, որի արդյունքում կապահովվի հավասարության խթանումը, վերականգնողական արդարադատության նպատակներին հասնելը և, հետևաբար, հասարակության առողջացման և պաշտպանության ընդհանուր նպատակը: Բարեփոխումների արդյունքում հնարավոր կլինի նոր քրեակատարողական հիմնարկում ունենալ ինչպես արդյունավետ, լավ կազմակերպված վերահսկողություն, այնպես էլ մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանություն:

Անդրադառնալով այն հարցին, թե 2021 թվականի ընթացքում դատապարտյալներին և կալանավորված անձանց հատկացվող սննդի որակը և դրա կալորիականությունը ստուգելու նպատակով փորձաքննություն իրականացնելու գործընթաց չի կազմակերպվել, հարկ է արձանագրել, որ սննդի որակի հետ կապված իրականացվում է մշտական ստուգում:

Ինչ վերաբերում է այն դիտարկմանը, թե Արդարադատության նախարարությունը պետք է նախապես պլանավորած լիներ նաև նոր քրեակատարողական հիմնարկի կառուցմամբ պայմանավորված մյուս հիմնարկների (Նուբարաշեն, Երևան-Կենտրոն, Դատապարտյալների Յիվանդանոց և Վարդաշեն) փակման արդյունքում աշխատակիցների զբաղվածության հարցի լուծման հնարավորությունները, ապա հարկ է նշել, որ ինչպես «Կոշ» և «Յրազդան» քրեակատարողական հիմնարկների պարագայում է, այնպես էլ նշված հիմնարկների դեպքում կիրականացվի զբաղվածության խնդրի նույնաբնույթ լուծում՝ կառավարելի դարձնելով բոլոր ռիսկերը:

9. ԴԱՏԱԽԱՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԱՅԱՐՈՒՅՑ ՀԱՐՑԵՐԸ

Ինչ վերաբերվում է դատախազի կողմից «Դատախազության մասին» օրենքի՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության մարմինների, դրանց կազմում գործող ստորաբաժանումների, ինչպես նաև պատիժները և հարկադրանքի այլ միջոցներ կիրառող մարմինների վարչակազմերի պատիժները և հարկադրանքի այլ միջոցների կիրառմանը վերաբերող օրենսդրությանը հակասող ակտ հայտնաբերելիս նշված ակտերի կասեցման և վերանայման միջնորդագիր ներկայացնելու որևէ ժամկետային սահմանափակում չնախատեսելուն և այդ կապակցությամբ Տեղաբաշխման հանձնաժողովի որոշումների անորոշ ժամկետով կասեցնելուն, ապա հարկ է նշել, որ այս խնդիրը, հիմք ընդունելով իրավական որոշակիության սկզբունքի հրամայականը, լուծվել է Օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված կարգավորումներով, որոնց համաձայն՝

«2. «Դատախազության մասին» օրենքով սահմանված դեպքերում օրենսդրությանը հակասող ակտ հայտնաբերելիս դատախազը միջնորդում է վերանայել այն, իսկ այն դեպքերում, երբ, դատախազի կարծիքով, հապաղումը կարող է հանգեցնել ծանր հետևանքների, ապա դատախազն իրավունք ունի կասեցնելու այդ ակտի գործողությունը և այն վերանայելու կամ վերացնելու միջնորդագիր ներկայացնելու ակտն ընդունած հիմնարկի կամ մարմնի վերադաս մարմին, իսկ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում (այսուհետ՝ Քրեակատարողական ծառայություն) գործող տեղաբաշխման հանձնաժողովի դեպքում՝ Քրեակատարողական ծառայության պետին: Սույն մասով նախատեսված գործողությունը դատախազն իրականացնում է ակտի ստացման պահից մեկ ամսվա ընթացքում: Սույն մասով նախատեսված գործողությունը դատախազն իրականացնում է միայն մեկ անգամ:

3. Սույն հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ ակտը վերանայելու և այն անփոփոխ թողնելու դեպքում գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը կարող է ակտը վերացնելու միջնորդագիր ներկայացնել համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության արդարադատության կամ պաշտպանության նախարարին, որը միջնորդագիրը ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, վերջնականապես լուծում է հարցը:»:

Ինչպես տեսնում ենք, առկա կարգավորումներով նախատեսվել է որոշումների բողոքարկման երկաստիճան համակարգ, մասնավորապես Տեղաբաշխման հանձնաժողովի որոշումը բողոքարկվում է Քրեակատարողական ծառայության պետին, իսկ այնուհետև Արդարադատության նախարարին, ընդ որում գործընթացը կանոնակարգված է նաև ժամկետային առումով, մասնավորապես բողոքարկման և վերանայման համար նախատեսվել է մեկամսյա ժամկետ:

Արդարադատության նախարարությունը նախատեսել է այս կառուցակարգը՝ հիմքում ունենալով ազատությունից զրկված անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոցի նախատեսման անհրաժեշտությունը և գործընթացում իրավական որոշակիության ապահովման հրամայականը:

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ արդարադատության նախարարությունը հարկ է համարում ևս մեկ անգամ ընդգծել այն, որ տարիներ շարունակ քրեակատարողական համակարգում կուտակված ոլորտային խնդիրները շարունակում են մնալ ուշադրության կենտրոնում և, ըստ այդմ, նախաձեռնվում և նախաձեռնվելու են այդ խնդիրների լուծմանն ուղղված քայլեր. քրեակատարողական համակարգի բարեփոխմանն ուղղված՝ իր տեսակի մեջ եզակի փաստաթղթով՝ Ռազմավարությամբ թիրախավորվել են ոլորտային բոլոր խնդիրները՝ պահման պայմանների, ազատությունից զրկված անձանց իրավունքների երաշխավորումից մինչև քրեակատարողական ծառայողների ծառայության համար պատշաճ պայմանների և սոցիալական երաշխիքների ապահովում:

Վերահաստատում ենք այն, որ ՀՀ արդարադատության նախարարությունը մշտապես բաց է համագործակցության համար և պատրաստակամ է խմբի հետ համատեղ ջանքերով հասնելու ոլորտային խնդիրների լուծմանը:

**ՀՀ ԱՆ «ԱԲՈՎՅԱՆ» ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ
ՇԻՆՎԵՐԱՆՈՐՈՂՍԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ**



























ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ
ՍԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ՎԵՐԱՀՄԱՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՈՒՄԸ

ՎԱՐԴԱՆԱՆՅ ՓՎԿՈՂԻ 8, 112 ՍԵՆՅԱԿ

ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԵՌ՝ + (374 98) 606 393

ԷԼ. ՀԱՍՅԵ: PRISONARMENIA@GMAIL.COM

